



# Զիաց Մեր Հանապազորդ

ՅՈՒՆՈՒԱՐ | ՓԵՏՐՈՒԱՐ | ՄԱՐՏ 2026

(January | February | March 2026)

ԼԷ. ՏԱՐԻ  
Ա. ԵՌԱՄՍԵԱՅ

Անձնական եւ Ընտանեկան  
Ամենօրեայ Աստուածաշունչի Ընթերցումներ  
եւ Հոգեւոր Խորհրդածութիւններ

Մեր խորին շնորհակալութիւնները կը յայտնենք  
*Our Daily Bread* Ընկերակցութեան որուն  
թոյլատուութեամբ *Our Daily Bread* գրքոյկէն  
թարգմանուած են յաջորդ էջերու  
խորհրդածութիւնները

---

Ամերիկայի Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն  
Armenian Missionary Association of America  
31 West Century Road  
Paramus, New Jersey 07652  
U.S.A.

Արդարեւ ես խօսեցայ՝ առանց հասկնալու: [Յոբ 42. 3]

## ԵՐԲ ԱՍՏՈՒԱԾ ՉԻ ՉԱՍՏԱՏԵՐ

**Ճ**. Ռ. Ռ. Թօլքինի (J. R. R. Tolkien) երկրպագու մը՝ նամակով մը անոր հարց տուաւ, թէ ինչո՞ւ «Մատանիներուն Տէրը» (The Lord of the Rings) եռագրութեան հերոսները՝ պարզապէս հսկայ արծիւին վրայ նստած, չե՛ն թռչիր դէպի Մօրտօր (Mordor): Յետագայ հարցազրոյցի մը մէջ՝ Թօլքինի խոստովանեցաւ. «Այդ մէկը՝ որոնումը շատ աւելի հեշտ կը դարձնէ»: Սակայն ան տուած էր նախապէս ցնցիչ կա՛րճ պատասխան մը. «Լու՛է՛»:

Թօլքինի տուած իմաստուն պատասխանը՝ մեզի համար դա՛ս մը կը պարունակէ: Մենք կրնանք նմանատիպ հարցում մը հարցնել՝ Մեծ Պատմողին՝ Աստուծոյ: Մենք կ'ըսենք. «Դո՛ւն ամենակարող Աստուածն ես: Ինչո՞ւ իմ հարցերս չե՛ս լուծեր»:

Հակառակ անոր որ Աստուածաշունչի բանաստեղծները ու մարգարէները լեցուն են տրուած Աստուծոյ դժուար հարցումներով, Ան չ'ըսեր մեզի «լու՛է՛»: Սակայն երբ կը դիմագրաւենք Անոր ներկայութիւնը, մենք հակումը կ'ունենաք լուռ կենալու:

Յոբ, որ սարսափելի տառապանքներ կրած էր, մեծ հարցումներ ունէր: Անոր զաւակները մեռան, հարստութիւնը կորսուեցաւ, առողջութիւնը քայքայուեցաւ ու ա՛ն՝ ողբաց. «Քեզի կ'աղաղակեմ, բայց ինծի չես պատասխաներ» (Յոբ 30. 20): Ի վերջոյ, Աստուած պատասխանեց, բայց զարմանալի ձեւով: Ան ըսաւ. «Քեզի հարցնեմ, եւ բացատրէ՛ ինծի» (38. 3): Յոբ պատասխան չունէր եւ եզրափակեց. «Արդարեւ ես խօսեցայ՝ առանց հասկնալու» (42. 3):

Եթէ Թօլքինի արծիւները՝ Ֆրօտօին (Frodo) եւ Սէմին (Sam) տանէին Մօրտօրի չար սիրտը, պիտի չըլլար ո՛չ որոնում, ո՛չ պատմութիւն, ո՛չ ալ կերպարներու զարգացում: Աստուած կը գրէ պատմութիւն մը եւ Ան՝ ատոր միջոցով կը զարգացնէ մեր նկարագիրը՝ քուկդ եւ իմս: Մենք որոնումի մէջ ենք՝ ամենէն մեծ հաղորդակցութեան:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ այսօր ինծի բան մը սորվեցուր քու նկարագրիդ մասին: Ամէն:

**Ե՞րբ մտածած ես, թէ ինչո՞ւ Աստուած չի՛ պարզացներ քու կեանքդ: Ինչպե՞ս կը տեսնես զինք գործի մէջ:**

Մեր բոլոր յանցանքները ներեց մեզի, եւ մեզի դէմ հրամաններով եղած պարտամուրհակը՝ որ հակառակ էր մեզի՝ ջնջեց: [Կող. 2. 13-14]

## ԱՅԼԵՒՍ ՊԱՐՏՔ ՉԿԱ՛Յ

**Բ**ժիշկ մը՝ որոշեց Հանգստեան կոչուելի՝ գրեթէ երեսուն տարի քաղցկեղ ունեցող հիւանդներ բուժելէ ետք: Իր բուժարանին նիւթական խնդիրները լուծելու համար վճարումներ ընող ընկերութեան հետ աշխատած ատեն, որոշեց ջնջել մարդոց տակաւին 650,000 ունեցած պարտքը: Այս կապակցութեամբ եղած հարցազրոյցի մը ատեն բժիշկը բացատրեց. «Ես միշտ բաւական անյարմար զգացած եմ, երբ հիւանդները ստիպուած եղած են, ո՛չ միայն անհանգստանալ իրենց սեփական առողջութեան համար, այլ իրենց ընտանիքներուն, աշխատանքի եւ զբամի համար: Այդ միշտ ինծի նեղացուցած է»:

Նոյնիակ եթէ մենք երբէ՛ք խոր նիւթական պարտքերու տակ չենք եղած, մենք բոլորս ալ հոգեւոր առումով նման փորձառութիւն մը ունենցած ենք: Աստուածաշունչը մեզքը կը նմանցնէ «պարտքերու» (Մատթ. 6. 12): Ան նաեւ կ'ըսէ, որ մենք չե՛նք կրնար վճարել մեր պարտքերը Աստուծոյ: Մենք չե՛նք կրնար բարեգործութեան համար նուէրներ ընել, ծառայել ուրիշներուն կամ գործի համար համաձայնութիւն ընել, իր հետ մեր պարտքերը վճարելու համար: Յիսուս մեր միակ յոյսն է: Իր մահով եւ յարութեամբ՝ Քրիստոս «մեզի դէմ հրամաններով եղած պարտամուրհակը՝ որ հակառակ էր մեզի՝ ջնջեց, ու մէջտեղէն վերցուց զայն՝ դամելով խաչափայտին վրայ» (Կող. 2. 14):

Յիսուսի գոհաբերութիւնը ընդունելը՝ մեր ըրած սխալներուն համար, կը նշանակէ՝ արդարանալ նոր օրուան մը համար, լիովին ազատուած մեղքի բեռէն: Թող Աստուծոյ ողորմութիւնն ու ներողամտութիւնը փայլին աշխարհի վրայ, երբ Ան կ'օգնէ մեզի՝ սիրով վերաբերելու մարդոց ու մեր կեանքի պարագաններուն հետ

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, շնորհակա՛լ եմ, որ վճարեցիր իմ մեղքերուս գինը: Ամէն:

**Աստուած հետաքրքրուած է՝ թէ ինչպե՛ս մենք ողորմութիւն կը ցուցաբերենք ուրիշներու:** Կեանքի հանդէպ մեր ունեցած հայեացքը՝ արտացոլացնելու է Յիսուսի մէջ մեր ունեցած ազատութիւնը:



Ուստի՝ ունենալով շնորհներ, որոնք կը տարբերին այլ շնորհքին համեմատ՝ որ մեզի տրուած է: [Զոմ. 12. 6]

## ԲԱՐԵԿԱՍՈՒԹԵԱՆ ՆՏԱՐԱՆԸ

**Ե**րիտասարդ հիւանդ մը՝ անձնասպան եղաւ, քանի որ չէր կրնար վճարել հոգեկան առողջութեան բուժումի համար հիւանդանոց տանող հանրակառքին տոմսին գինը: Խորապէս ազդուած՝ բժիշկ Չիբանտա (Chiranda) փորձեց գտնել բուժումը՝ աւելի մատչելի դարձնելու միջոցներ: Ծնա՛ւ՝ «Բարեկամութեան Նստարան» անունով ծանօթ ծրագիր մը, ուր բուժագէտները կը նստին խոհեմաբար նստարաններու վրայ՝ պատրաստ ըլլալով խորհուրդ տալու օգնութեան կարիք ունեցող մարդոց: Եւ որո՞ւ մարզեց՝ որպէս բուժագէտներ: Մեծ մայրերուն: Հարցազրոյցի մը ատեն բժիշկ Չիբանտա պատմեց. «Մեծ մայրերը արմատաւորուած են իրենց համայնքներուն մէջ ... անոնք ունին զարմանալի ունակութիւն ... մարդոց յարգուած եւ հասկցուած զգալ տալու համար»:

Նէեմիա 3-ին մէջ՝ մենք կը կարդանք մէկ այլ նախագիծի մասին, որ կը ներառէր մարդոց ոչ աւանդական խումբեր: Անոնք կը հասկնային, որ քաղաքի պարիսպը պէտք էր վերակառուցուէր, որպէսզի անոնք «նախատինքի մէջ չըլլան» (2. 17): Երբ Երուսաղէմ աւերակներու մէջ էր, շրջակայ ազգերը կը ծաղրէին անոր պարտութիւնը: Եւ բացի ոսկերիչ Ոզիէի նման արհեստաւորներէ (3. 8), այլ մարդիկ, որոնք կրնային տաղանդներ ունենալ, ինչպէ՛ս շրջանի կառավարիչ՝ Սեղդումը, նոյնպէս լծուեցան գործի (հմ. 12):

Ճիշդ ա՛յնպէս, ինչպէ՛ս բժիշկ Չիբանտան տեսաւ մեր մայրերու ազդեցութիւնն ու կարեկցութիւնը՝ Զիմպապուէի հոգեկան առողջութեան ոլորտին մէջ փոփոխութիւններ մտցնելու համար, թող Աստուած բանայ մեր աչքերը՝ տեսնելու ամէն մարդու ունեցած տաղանդները եւ Ան գործածէ մեզ եկեղեցիի կառուցման եւ մեր համայնքին ծառայելու համար:

**Աղօթք** - Սիրելի Զա՛յր, կը խնդրեմ՝ օգնե՛ ինձի տեսնելու ուրիշներու ուժեղ կողմերը, որպէսզի կարենամ ծառայել անոնց հետ բարիքի համար: Ամէն:

**Աստուած ի՛նչ դրած է քու սիրտիդ մէջ՝ եկեղեցիին կամ համայնքին համար:** Որո՞ւ կրնաս հրաւիրել միանալու քեզի:

Դիտեցէ՛ք շուշանները ...: [Ղուկ. 12. 27]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԳԵՂԵՑԻԿ ԱՍԵՂԾԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ

**Մ**տոգքի մը համար երեխայի մահը՝ սարսափելի է: Բայց կորսնցնե՞լ՝ երկու երեխաներ: Անհաւանական է: Սակայն սա՛ էր Աւստրալացի երաժիշտ, հեղինակ եւ դերասան Նիք Գէյվի (Nick Cave) փորձառութիւնը: 2015 թուականին անոր 15 տարեկան որդին՝ ինկաւ ժայռէն ու մեռաւ: Քանի մը տարիներ ետք՝ Գէյվի երէց զաւակը՝ նոյնպէս մեռաւ: Նման ճնշող վիշտի մէջ՝ ինչպէ՞ս Գէյվ եւ իր կինը շարունակեցին ապրիլ:

Գէյվ՝ փորձեց մխիթարութիւն գտնել զինք շրջապատող աշխարհին մէջ: Ան ըսաւ. «Աշխարհի հանդգնութիւնն է՝ շարունակել գեղեցիկ ըլլալ ... խոր տառապանքներու ժամանակներու մէջ: Ահա՛ այդպէս կը տեսնո՞ւք աշխարհը: Ան պարզապէս կը շարունակէր, համակարգուած կերպով հրաշալի ըլլալ»:

Յիսուս խօսեցաւ նման գեղեցկութեան մը մասին եւ տեսաւ զայն՝ այնպէ՛ս, ինչպէս իրականութեան մէջ կայ՝ Աստուծոյ ստեղծագործութիւնը: Անոր յաճախ մէջբերած խօսքերը Ղուկաս 12-րդ գլուխին մէջ՝ «գիտեցէ՛ք շուշանները» (Հմ. 27), չեն անտեսեր մեր կեանքին մէջ եղած տառապանքի իրականութիւնը: Իրականութեան մէջ, անոնք կը պատուեն մեր մեծ ողբերգութիւնները՝ առաջարկելով հակաթոյն մը՝ նման դաժան իրականութիւններու համար: Կանգ ա՛ռ եւ մտածէ շուշաններու կամ ագռաւներու (Հմ. 24) կամ արեւածագի մասին: Քրիստոս մեզի սորվեցուցած է. «Եթէ խոտը, որ այսօր դաշտին մէջ է ու վաղը փուռը պիտի նետուի, Աստուած ա՛յդպէս կը հագուեցնէ, որչա՛փ աւելի ձեզ» (Հմ. 28):

Վիշտի եւ կորուստի առջեւ՝ աշխարհի տեսանկիւնը թերի է: Յիսուս կը խրախուսէ մեզ մտածելու մեր արարիչ Աստուծոյ մասին, որ կը մտաւորէ իր հիանալի ու սքանչելի ստեղծագործութիւնը եւ խորապէս կը հոգայ մեզի:

**Աղօթք** - Ամէն մխիթարութեան Աստուած, տառապանքի ժամանակ՝ կը խնդրեմ, տո՛ւր ինձի մտքի ներկայութիւն՝ մտածելու Զու գեղեցիկ աշխարհին մասին: Ամէն:  
**Ե՛րբ վերջին անգամ կանգ առնելով մտածած ես՝ քեզ շրջապատող աշխարհին մասին: Ի՞նչ նկատեցիր:**



Բայց հեռո՛ւ ինձմէ՛ որ Տէրոջ դէմ մեղանչեմ, ձեզի համար աղօթելէ դադրելով: [Ա. Թագ. 12. 23]

## ՀՈԳԱԾՈՒԹԵԱՆ ԱՂՕԹՔ

**Կ**ին մը՝ անսովոր կերպով ջղային վիճակ մը ունէր, երբ նստած էր ատամնաբուժի աթոռին վրայ: Ընտանեկան բեռը՝ շատ կ'անհանգստացնէր զինք ու այդ բանը նկատելի էր: Ատամնաբուժը զգաց անոր անհանգստութիւնը եւ հարցուց անոր մասին: Կնոջ պատմութիւնը՝ ստիպեց ատամնաբուժին առաջարկելու. «Կրնա՞մ աղօթել քեզի համար»: Երբ ատամնաբուժին առողջաբանը՝ մտա՛ւ սենեակ, ան ալ նոյնպէս աղօթեց կնոջ համար: Երկու աղօթք եւ մէկ ատամնաբուժի այցելութենէ ետք, կինը դուրս եկաւ գիտակցելով, որ իսկապէ՛ս հոգատարութիւն ստացած էր:

Ուրիշներու համար աղօթելը՝ մեզի համար լաւագոյն միջոցներէն մէկն է՝ ցոյց տալու, որ մենք հոգատար ենք, քանի որ այդ կը պահանջէ մեզի յայտնի եղած ամենամեծ աղբիւրը՝ մեր երկնաւոր Հայրը՝ գործնականապէս ներարուած ըլլալու ուրիշներու կեանքին մէջ: Ա. Թագաւորաց 12-ին մէջ՝ Սամուէլ մարգարէն դիմագրաւեց շատ ջղագրգիռ խումբ մը մարդոց մտահոգութիւնները (Հմ. 19): Իսրայէլացիները սխալ միտումով թագաւոր խնդրած էին եւ անոնք կը վախնային, թէ ինչպէս պիտի ընթանայ այդ իրենց համար: Մարգարէն անոնց ըսաւ, որ «չվախնան» (Հմ. 20) եւ վստահեցուց անոնց Աստուծոյ բարութեան մասին, որ կ'երեւի այս խօսքերուն մէջ. «Բայց հեռո՛ւ ինձմէ՛ որ Տէրոջ դէմ մեղանչեմ, ձեզի համար աղօթելէ դադրելով» (Հմ. 23):

Մենք նաեւ՝ ունինք արտօնութիւն եւ կոչ՝ աղօթելու ուրիշներու համար: Երբեմն լուռ՝ եւ երբեմն բարձրաձայն, մենք կը պատուենք Աստուած, երբ կը խնդրենք Իր օգնութիւնը՝ կարիք ունեցողներուն համար:

**Աղօթք** - Սիրելի Աստուա՛ծ, շնորհակալութիւն՝ որ մեզի ըսիր, որ «արդարին ներգործող աղերսանքը շատ ազդեցիկ է» (Յակ. 5. 16):

Կը խնդրեմ՝ օգնէ ինձի ըլլալ այդպիսի մարդ մը: Ամէն:

**Ինչպէ՞ս կրնաս հոգատար աղօթք մատուցանել ճիշդ հիմա: Ի՞նչ կը նշանակէ մարդոց համար գիտնալ, որ դուն կ'աղօթես իրենց համար:**

հյևալով երկրպագեցին անոր: [Մատթ. 2. 11]

## ՓՆՏՈՒՆՆԵՐԻ ՔՐԻՍՏՈՍ ՄԱՆՈՒԿԸ

**Ե**րբ գրող ուսուցիչ՝ Բիթրր Թուրչի (Peter Turchi) կը տեսնէ քարտէս մը, ան կը փնտռէ արկածախնդրութիւն անոր մէջ: Ան կ'ըսէ. «Քարտէս խնդրելը, կը նշանակէ ըսել. 'Պատմէ ինծի պատմութիւն մը'»: Ա՛յդ միտքը ունեցայ՝ երբ կը պատրաստուէի Սուրբ Ծննդեան օրերուն, Կիրակնօրեայ Դպրոցի դասարանին «Մոգերուն Հաւատքին» մասին դասաւանդել: Քարտէսները ուսումնասիրելով՝ իմացայ, որ Մոգերը՝ մօտ ինը հարիւր մղոն ճամբորդեցին՝ գուցէ քանի մը ամիսներու ընթացքին, Քրիստոս մանուկը գտնելու ու վերջապէս գտան՝ ո՛չ թէ մսուրին մէջ գտնուող մանուկը, այլ մանուկ մը՝ որ կը բնակէր իր ծնողներուն հետ՝ տան մը մէջ: Ի՞նչ եղաւ անոնց արձագանգը՝ այդքան երկար ճամբորդելէ ետք: «Իյնալով երկրպագեց անոր» (Մատթ. 2. 11):

Անոնց ճամբորդութիւնը՝ հրաւիրեց զիս ու իմ աշակերտներս ծրագրելու՝ Քրիստոսը աւելի լիարժէք կերպով փնտռելու մտադրութեան: Ինչպէս որ կ'ըսէ Աստուածաշունչը, թէ երբ Մոգերը վերջապէս հասան Երուսաղէմ, անոնց հրատապ հարցումը այս էր. «Ո՛ր է ան՝ որ ծնաւ իբր Հրեաներու թագաւորը. որովհետեւ մենք տեսանք անոր աստղը՝ արեւելքի մէջ, ու եկանք երկրպագելու անոր» (Հմ. 2):

Հեռաւորութիւնը՝ չխանգարեց անոնց երկրպագութեան: Վտանգը կամ ուշացումները՝ նոյնպէս չխանգարեցին: Հերովդէսի մահացու պահանջքը հեզնական էր. «Գացէ՛ք, ճշգրտութեամբ տեղեկացէ՛ք մանուկին մասին» (Հմ. 8): Ո՛չ ոք այնքան փութաջան չէր փնտռած Յիսուսի, որքան Մոգերը:

Մենք կրնանք հետեւիլ իմաստուն Մոգերուն օրինակին՝ նոյն ջանասիրութեամբ փնտռելով Քրիստոսին: Այն ատեն, երբ մենք կ'երկրպագենք Անոր, կրնանք ակնկալել, որ մեր երկնաւոր Հայրը կը խօսի մեր սիրտերուն հետ՝ մեզ հին ճամբաներէն տանելով դէպի նոր ուղիներ: Անոր հետ ճամբորդելու համար:

**Աղօթք** - Սիրելի Հայր, կը խնդրեմ՝ օգնէ ինծի փնտռելու Զու Որդիդ՝ Յիսուսը, բոլոր սիրտով եւ երկրպագելու Անոր՝ ամբողջ ունեցածովս: Ամէն:

**Ինչպէ՞ս կրնաս փնտռել Քրիստոսի՝ այս նոր տարուան մէջ:**  
**Ինչպէ՞ս կրնաս երկրպագել Անոր:**



Կ'աղաչե՛մ Եւոզիայի եւ կ'աղաչե՛մ Սիւնտիքի, որ ունենան միեւնոյն մտածումը Տէրոջմով: [Փիլ. 4. 2]

## ՈՍԿՈՐԻ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐ

1800-ականներու վերջերը՝ Ամերիկայի Արեւմտեան շրջաններուն մէջ հոյամողեաներու (dinosaur) ոսկորներու փնտռտուքը՝ ստեղծեց 'Ոսկորի Պատերազմները', որոնց ընթացքին՝ երկու հնաբաններ պայքարեցան իրարու դէմ՝ ընելու ամենապատմական յայտնաբերումը: Գրող մը նշեց թէ ինչպէս երկուքն ալ «օգտագործեցին խաբեբայ մեթոտներ՝ փորձելով զիրար գերազանցել՝ դիմելով կաշառակերութեան, գողութեան եւ ոսկորներու ոչնչացումին»: Ան արձանագրեց՝ թէ ինչպէս անոնք փորձեցին փճացնել մէկը միւսին աշխատանքը, երկուքն ալ ոչնչացուցին նաեւ իրենց համբաւը:

Հակամարտութիւնն ու մրցակցութիւնը՝ անխուսափելի է մեր կոտրած աշխարհին մէջ: Թէ ինչպէ՞ս մենք կ'ընտրենք՝ ներգրաւել այդ հակամարտութիւնները, կը բացայայտեն՝ թէ ի՞նչ կայ մեր սիրտերուն մէջ: Պօղոս իմացաւ Փիլիպպէի եկեղեցիին մէջ՝ երկու կիներու միջեւ տեղի ունեցած հակամարտութեան մասին եւ գրեց. «Կ'աղաչե՛մ Եւոզիայի եւ կ'աղաչե՛մ Սիւնտիքի, որ ունենան միեւնոյն մտածումը՝ Տէրոջմով»: Ան խնդրեց հաւատակիցէ մը որ «օգնէ՛ անոնց որ աւետարանին համար մարտնչեցան իր հետ» (Փիլ. 4. 2-3):

Երբ մենք հակասութեան մէջ յայտնուինք Յիսուսի հաւատակիցներու հետ, մեզի անհրաժեշտ է Հոգիին զօրութիւնը: Երբ մենք մեր սիրտին մէջ՝ յանձնուինք Անոր գործին, Ան կ'օգնէ մեզի զրսեւորելու Հոգիին պտուղը (Գաղ. 5. 22-23): Մենք կ'ունենանք բուժումի եւ խաղաղութեան փորձառութիւնը՝ եթէ ո՛չ մեր սեփական համբաւին համար, ապա Քրիստոսի եւ Աւետարանին համբաւին համար:

**Աղօթք** - Սիրող Դայ՛ր, Զու սիրտդ կոտրած կ'ըլլամ, երբ կը պայքարիմ Զրիստոսով քոյրերուս եւ եղբայրներուս հետ: Կը խնդրեմ՝ տո՛ւր ինձի Զու իմաստութիւնդ եւ Դոգիին օգնութիւնը՝ բժշկութիւն եւ միասնութիւն բերելու համար: Ամէն:  
**Անխուսափելի է հակամարտութիւն չունենալը: Ինչպէ՞ս կրնայ Դոգիին խաղաղութիւնը՝ տարբերութիւն ստեղծել անոնց լուծումին մէջ:**

Յոս պատանի մը կայ, որ ունի հինգ գարիէ նկանակ ու երկու ձուկ. բայց ի՞նչ են անոնք՝ այդչափ մարդոց համար: [Յովհ. 6. 9]

## ՓՈՔՐ ԵՒ ՅԶՕՐ

**Դ**եկտեմբեր 9, 1987-ին, սկիւռ մը՝ ծամեց ելեկտրական թել մը՝ Գրնադիքըթի (*Connecticut*) մէջ եւ Նազտաքի (*Nasdaq*) Հսկայական ելեւմտական մեքենան թարթեց, հառաչեց եւ կեցաւ: Աշխարհի խոշորագոյն արեւտրական ընկերութիւններէն մի քանին՝ գործելէ դադրեցան ու անդամալուծուեցան: Համաշխարհային տնտեսական կառոյցները մէկ ու կէս ժամ՝ անկարող մնացին, մէ՛կ փոքր կրծող սկիւռի մը պատճառով:

Աստուածաշունչը բազմաթիւ պատմութիւններ կը պատմէ՝ փոքր բանի մը կամ մէկու մը մասին, որ մեծ ազդեցութիւն ունեցած է: Բայց Աստուած կրնայ տկարութիւնը վերածել հզօր բանի մը: Յովհաննէս կը պատմէ, թէ ինչպէս Յիսուս կերակրեց անօթի ամբոխին (Հինգ Հազար տղամարդ, Հաւանաբար տասն Հինգ Հազար ներառեալ կիներ ու երեխաներ), երբ «պատանի մը՝ Հինգ գարիէ նկանակով եւ երկու փոքր ձուկով» տուաւ իր փոքրիկ ճաշը (Յովհ. 6. 9): Հին Կտակարանին մէջ մենք կը յիշենք, որ Դաւիթ անուկով երիտասարդ Հովիւ տղան վստահեցաւ Աստուծոյ եւ սպաննեց Հսկայ մը (Ա. Թագ. 17): Եւ Քրիստոս բազմաթիւ անգամներ պնդեց, որ Աստուծոյ թագաւորութիւնը մանանեխի հատիկի նման բան մըն է, «բոլոր սերմերուն ամենէն փոքրն է» (Մատթ. 13. 32):

Երբ մեր միջավայրերուն եւ ընտանիքներուն մէջ գոյութիւն ունեցող շփոթեցնող մտահոգութիւններուն հետ մէկտեղ՝ մենք խորհինք բազմաթիւ բարդ համաշխարհային ճգնաժամներու մասին՝ կը փորձուինք հաւատալու, որ մեր փոքր ջանքերը՝ զո՛ւրկ են ուժէ: Սակայն Աստուածաշունչը մեզի կը հաղորդէ գործելու՝ Հնազանդութեամբ եւ վստահութեամբ, քանի որ Աստուած կ'օգնէ մեզի վստահ ըլլալով, որ Անոր հետ փոքր բաները՝ կրնան հզօր դառնալ (Յովհ. 6. 10-12):

**Աղօթք** - Սիրելի Աստուա՛ծ, ես յաճախ ինքզինքս փոքր կը զգամ՝ առաջարկելիք ոչինչ ունենալու: Կը խնդրեմ՝ օգնէ ինձի յիշելու, որ Զե՛զի հետ փոքր բաները հզօր կը դառնան: Ամէն:

**Ո՛ւր կը զգաս դուն քեզ՝ փոքր կամ անզօր: Ինչպէ՛ս կը զգաս որ Աստուած կը հրաւիրէ քեզ՝ քու փոքր բաներդ Իրեն յանձնելու:**



Առաջին բաները մի՛ յիշէք, ու հին բաներուն վրայ մի՛ մտածէք: [Ես. 43. 18]

## ԱՊԱԳԱՆ՝ ՈՐ ԱՍՏՈՒԱԾ ԿԸ ՊԱՏՐԱՍՏԷ

**Կ**'ապրինք աշխարհի մը մէջ, ուր համացանցը՝ ոչի՛նչ կը մոռնայ. իւրաքանչիւր լուսանկար, գրառում եւ յայտարարութիւն՝ կարծես յաւիտեան կը մնան հոն: Սակայն՝ մեծ որոնողական համակարգ մը ներդրած է գաղտնապահութեան ծրագիր մը, որ թոյլ կու տայ գործածողներուն խնդրել անձնական տուեալները, ինչպիսին են՝ հեռախօսի թիւ, տան հասցէ, ե-նամակի հասցէ, եւայլն, վերցնել: Մինչ սա՛ ամբողջութեամբ չի ջնջեր տուեալները համացանցէն, բայց զգալիօրէն կը նուազեցնէ անոնց տեսանելի ըլլալը, մարդոց տալով իրենց թուային հետքի վրայ վերահսկողութեան զգացումը:

Անցեալը «մաքրելու» այս գաղափարը կ'արձագանգէ մարգարէին խօսքերը՝ Եսայի 43. 18-19-ին մէջ: Աստուած ըսաւ. «Առաջին բաները մի՛ յիշէք, ու հին բաներուն վրայ մի՛ մտածէք: Ահա՛ ես նո՛ր բան մը պիտի ընեմ»: Այս համարները ըսուած են Իսրայէլի՝ Բաբելոնի մէջ իրենց քստորին ժամանակ խոր յուսահատութեան եւ վերականգնումի կարօտի մը ժամանակաշրջանին մէջ: Աստուած պատուիրեց իր ժողովուրդին չի կեդրոնանալ իրենց անցեալի անյաջողութիւններուն կամ գերութեան ցաւին վրայ, այլ սպասել՝ այն նոր գործին, որ Ան կը պատրաստուի ընելու, նոր եւ աւելի նշանակալի ելք՝ անոնց ազատագրումը Բաբելոնէն եւ վերադարձը հայրենիք: Ան՝ ոչ միայն կը ջնջէր անցեալը, այլ «ճամբայ կը բանար» (Հմ. 19) դէպի յոյսով եւ նպատակասլաց ապագայ:

Անյաջողութիւններու կամ փոստանքներու վրայ կեդրոնանալու փոխարէն, վստահինք, որ Աստուած «մաքրած է» մեր անցեալի մեղքերը, փոստանքները ու ամօթը եւ Յիսուսի զոհաբերութեան միջոցով (Եբ. 10. 10) «մեր մեղքերը ա՛լ չի յիշեր» (Ես. 43. 25): Աստուած մեզ կը մղէ դէպի այն ապագան, որ ինք կը պատրաստէ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ օգնէ ինձի հրաժեշտ տալու անցեալին եւ նայելու ապագային: Ամէն:  
**Թէեւ դժուար կը թուի անցեալէն հրաժարիլը, սակայն կարելի է խորացնել մեր վստահութիւնը Աստուծոյ նկատմամբ՝ նոր սկիզբներու համար:**

Դո՛ւք՝ որ չէք գիտեր թե ի՞նչ պիտի ըլլայ վաղը: [Յակ. 4. 14]

## ԱՅՍՈՐԸ ԹԱՆԿԱԳԻՆ Է

**Վ**իյէթնամցի թանկարժէք իրեր հաւաքող՝ Ֆամ (Pham) Եւրոպայի տարբեր շրջաններէն հաւաքած ու փրկած է քսան եկեղեցական ժամացոյցներ, որոնցմէ շատը փոխարինուած էին ելեկտրական տարբերակներով: Իտալիա շինուած ժամացոյցներէն մէկը թուագրուած է՝ 1750 թուականը եւ զարմանալիօրէն մինչեւ օրս ճշգրիտ ցոյց կու տայ ժամանակը: Ֆամ՝ կը վայելէ ժամացոյցներու վերականգնումն ու պահպանումը՝ ըսելով, որ ատոնք իրեն կը յիշեցնեն, թէ որքա՛ն թանկ է ժամանակը եւ պէտք է վայելել իւրաքանչիւր պահը:

Յակոբոսի 4-րդ գլուխին մէջ հեղինակը կը խրախուսէ իր ընթերցողներուն ճանչնալ ժամանակի թանկարժէք ըլլալը՝ յիշեցնելով անոնց, որ իրենց կեանքը նման է «շոգիի, որ քիչ մը ատեն կ'երեւնայ» նախ քան անհետանալը (Յակ. 4. 14): Յակոբոս զգուշացուց առանց Աստուծոյ հետ խորհրդակցելու՝ ծրագիրներ կազմել՝ «երթալ այսինչ քաղաքը, հոն տարի մը կենալ, առեւտուր ընել ու դրամ շահելու» միտքէն (Հմ. 13): Աստուծմէ ժամկէտ եւ յաջողութիւն ակնկալելու փոխարէն՝ ան կը յիշեցնէ անոնց, որ անոնք «չեն գիտեր թէ ի՞նչ պիտի ըլլայ վաղը» (Հմ. 14): Մեր սեփական յաջողութիւնները նախագծելը Աստուած պատկերէն դո՛ւրս ձգելով, իրականութեան մէջ հպարտութիւն եւ ամբարտաւանութիւն է:

Երբ մենք գիտակցինք մեր կեանքի կարճութեան, մենք կրնանք աւելի ազատ ծրագրել մեր ապագայ ծրագիրները եւ աւելի լաւ ընդունիլ ներկայ պահը: Մենք կ'ապրինք ու կ'աշխատինք Աստուծոյ մտայղացումին եւ նպատակին համաձայն, ինչ որ կը նշանակէ թէ մենք կրնանք խոնարհաբար վստահիլ մեր ապագան իրեն եւ վայելել իւրաքանչիւր օրը, որպէս իր կողմէ տրուած իսկական պարգեւ, անկախ անկէ՝ թէ ի՞նչ կը պարունակէ:

**Աղօթք** - Շնորհակալ եմ՝ Աստուած, այսօրուան պարգեւին համար: Ես իմ ապագաս կը վստահիմ Քեզի: Ամէն:

**Արդեօ՞ք դո՛ւրս ձգած ես Աստուած քու ծրագիրներդ: Ինչպէ՞ս կրնաս ընդունիլ այսօրուան պարգեւը:**

Մեր անձը չորցաւ. մանանայէն զատ ուրիշ ոչինչ կայ մեր աչքերուն առջեւ: [Թու. 11. 6]

## ՇՆՈՐՀԱԿԱԼ ԵՂԻՐ ԱՍՏՈՒԾՈՅ՝ ԻՐ ՊԱՐԳԵՆԵՐՈՒՆ ՅԱՄԱՐ

**Տ**արեց տղամարդը՝ երկար ժամանակ կը նայէր խանութին մէջ եղող երեխաներու կռնակի պայուսակներուն: Ինծի ըսաւ. «Այսօր թոռնուհիս տարեդարձն է: Կը յուսամ՝ որ կը հաւնի իմ նուէրս»: Դրամարկղին մօտ՝ ան կանգնած էր՝ ձեռքին կռնակի վարդագոյն պայուսակ մը: Ան խանդավառ տեսք մը ունէր:

Աւելի ուշ, դարձեալ զինք տեսայ ճաշարանի մը մէջ՝ փոքր աղջնակի մը եւ անոր ծնողներուն հետ: Երբ երեխան բացաւ նուէրը, ըսաւ. «Ես չե՛մ սիրեր վրայի նկարը եւ կ'ատե՛մ վարդագոյնը»: Ծնողները ստիպեցին որ ներողութիւն խնդրէ, բայց ան շարունակեց բողոքել: Սիրտս կոտորուեցաւ մեծ հօր համար:

Յիշեցի թէ ինչպէ՛ս երբեմն կ'արձագանգեմ Աստուծոյ պարգեւներուն: Ես կը բողոքեմ, որովհետեւ կ'ուզեմ ուրիշ բան մը, առանց տեսնելու իմ առջեւ գտնուող հրաշքը, որ Աստուած սիրով տուած է ինծի: Իսրայէլացիները՝ նոյն ձեւով վարուեցան: Աստուած պահած էր՝ իրենց տուած իր խոստումը. «Ես ձեզի երկինքէն հաց պիտի տեղացնեմ» (Ել. 16. 4): Աստուծոյ հաւատարիմ նախատեսութիւնը անապատին մէջ՝ անխուսափելի էր. «Երբ գիշերը բանակավայրին վրայ ցօղ կ'իջնէր, մանանան ալ անոր վրայ կ'իջնէր» (Թու. 11. 9):

Սակայն շնորհակալ ըլլալու փոխարէն, Իսրայէլացիները բողոքեցին Աստուծոյ սիրառատ պարգեւներուն համար. «Մանանայէն զատ ոչինչ կայ մեր աչքերուն առջեւ» (Հմ. 6): Աստուծմէ խոնարհաբար ուրիշ անունդ խնդրելու փոխարէն, անոնք ողբացին՝ Անոր տուած պարգեւին համար:

Ես տակաւին կը յիշեմ մեծ հօր աչքերուն վիրաւորուած արտայայտութիւնը՝ այդ օր: Այդ ինծի մտածել տուաւ այն մասին, թէ ինչպէ՛ս պէտք է զգայ մեր երկնաւոր Հայրը, երբ մենք կը բողոքենք: Եկէ՛ք շնորհակալ ըլլանք Իրեն, մեզի տուած պարգեւներուն համար:

**Աղօթք** - Սիրելի Հայր, կը խնդրե՛մ՝ ներէ ինծի այն պահերուն համար, երբ կը բողոքեմ: Ամէն:

**Ի՞նչ օրհնութիւններու համար կը բողոքես: Ինչպէ՞ս կրնաս շնորհակալութիւն յայտնել Աստուծոյ անոնց համար:**

Քեզի պիտի սորվեցնեմ, ... Քեզի պիտի խրատեմ, իմ աչքս քու վրադ պիտի ըլլայ: [Սաղմ. 32. 8]

## ԳԻՏՅՈՂ ԱԶՔ

**Ճ**էյսըն (Jason) եւ Փիէյր (Pierre)՝ տասը տարի միասին աշխատած էին՝ տուներու երեսապատում ընելով: Անոնք լաւ բարեկամներ էին, բայց երկուքն ալ սակաւախօս էին: Աշխատանքի ընթացքին, անոնք հազիւ քանի մը բառ կ'ըսէին: Բայց այնպէս լաւ կը ճանչնային զիրար, որ այդ երբէ՛ք հարց չէր իրենց համար: Միայն գլուխի թեթեւ շարժումով կամ աչքերու հայեացքով՝ կրնային հասկնալ զիրար: Փոքր շարժումներ եւ արտայայտութիւնները՝ շատ բան կ'ըսէին:

Սաղմոս 32-ը կը յիշեցնէ Աստուծոյ եւ Սաղմոսերգուին միջեւ ծանօթութեան այս մակարդակը: Մէկ տարբերակի մը մէջ՝ 8-րդ համարը կը թարգմանուի սապէ՛ս. «Ես քեզ պիտի առաջնորդեմ իմ աչքերովս»: Աստուած հեռուէին կը նայի. Ան սիրող Հայր է, որ կը համագործակցի Իր գաւակներուն հետ: Մինչ Սաղմոսը կը սկսի մեղքի խոստովանութեամբ (Հմ. 1-5), ուշադրութիւնը կեդրոնացած է՝ ո՛չ թէ պատիժի՝ այլ սիրով ուղղորդելու վրայ, երբ Աստուած Իր գաւակին կը սորվեցնէ ճիշդ ուղին (Հմ. 6-7):

Միւս տարբերակը՝ ձիւ կամ ջորիի նման ըլլալն է, որոնց «բերանը սանձով ու պախուրցով կապուելու է, որպէսզի քեզի չմօտենան» (Հմ. 9): Պատկերը կամայ անհնազանդութեան եւ Աստուծոյ ճամբաներուն անտեղեակութեան պատկեր է: Որպէս Յիսուսի հաւատացողներ, պէտք է խոր մտերմութիւն զարգացնենք Աստուծոյ հետ, որպէսզի ներդաշնակ ըլլանք Անոր նուրբ շարժումներուն հետ: Այս մտերմութիւնը զարգացնելու միջոցներէն մէկը՝ Աստուածաշունչի ընթերցանութիւնն է: Սա՛ մեզի կ'օգնէ «ընթանալու Հոգիին համաձայն» (Գաղ. 5. 25), որպէսզի սիրենք, այն, ինչ որ Աստուած կը սիրէ: Այդ պարագային՝ մենք կրնանք «ուրախանալ Տէրոջմով ու խայտալ» (Սաղմ: 32. 11):

**Աղօթք** - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ ո՛չ միայն զիս մօտէն կը ճանչնաս, այլ կը խնդրես ինձմէ համագործակցելու Քեզի հետ՝ Թու արքայութիւնդ յառաջ մղելու գործին մէջ: Ամէն:

**Ի՞նչ ձեւերով քու հոգեւոր կեանքդ դարձած է պարզապէ՛ս ծես: Ինչպէ՞ս մտերմութիւն կը զարգացնես Աստուծոյ հետ՝ կարողալով եւ խորհրդածելով Սուրբ Գիրքին շուրջ:**

Զեմ արձակեր քեզ՝ մինչեւ որ գիս չօրհնես: [Ծն. 32. 26]

## ԱՍՏՈՒԹՅՈՅ ԿԱՌՉԻՐ

**Մ**եր դպրոցական շրջանի ըմբշամարտի ախոյանութեան մրցոյթին՝ ութ տարեկանէն սկսեալ երեխաներ կը գօտեմարտէին մարմնամարզարանին գորգերուն վրայ՝ հանճարեղ շարժումներ գործածելով՝ իրենց մրցակիցներուն յաղթելու համար: Ըմբշամարտը՝ հին դարերէ եկող մարզաձև մըն է, որ կը պահանջէ խելացի համադրութիւն մը՝ գետին իջեցնելու, փախուստներու, գամումներու եւ այլ հնարքներու՝ յաղթանակ արձանգրելու համար: Երրորդ դասարանի փոքրիկ աղջիկ մը՝ որ հանդիսատեսներուն շատ սիրելի էր, պարզապէս իր բոլոր մրցակիցներէն աւելի արագ էր: Անոր կայծակնային եւ արագ շարժումները կը խաբէին ու պարտութեան կը մատնէին իր մրցակիցները:

Յակոբ՝ խորամանկ շարժումներ կ'օգտագործէր՝ իր երկւորեակ եղբայր՝ Եսաւէն՝ առնելու համար անդրանիկութիւնը, իր հօր ժառանգը (Ծնն. 25. 33) եւ կեանքի օրհնութիւնները (27. 27-40): Սակայն օրհնութիւնը գողնալը՝ Յակոբին փախուստի ճամբուն մէջ կը պահէր՝ ստիպելով անոր փախչիլ՝ հօրը տունէն, յոյսը դնելով իր խորամանկ աներհօր վրայ եւ ապրիլ եղբօր զայրոյթէն վախնալով:

Յետագային՝ ան յայտնուեցաւ մինակ, ամբողջ գիշեր գօտեմարտելով մարդու մը հետ, որ Աստուած՝ Ինքն էր: Մարդը Յակոբի ըսաւ. «Արձակէ՛ զիս, քանի որ արշալոյսը ծագեցաւ» (32. 26): Բայց Յակոբ պատասխանեց. «Զեմ արձակեր քեզ, մինչեւ որ գիս չօրհնես» (Հմ. 26): Վերջապէս՝ Յակոբ կը փնտռէր իր սեփական օրհնութիւնը՝ ամուր կառչած Աստուծոյ, նոյնի սկ մինչեւ իր անունը փոխուեցաւ՝ արտացոլացնելով իր փոխուած սիրտը:

Աստուծոյ մէջ այս հարուստ օրհնութիւնը ստանալու համար, ո՛չ մէկ խորամանկ քայլ պէտք է, այլ միայն յարատեւել: Այդ յարատեւող եւ ազնիւ կեցուածք է՝ որ Աստուած կը պարգեւէ:

**Աղօթք** - Սիրելի Հայր, քանի որ ես կառչած եմ քեզի, կը խնդրեմ՝ օգնէ ինձի իմ հոգեւոր յարատեւութեանս մէջ: Ամէն:  
**Ի՞նչ կը նշանակէ քեզի համար Աստուծոյ կառչիլ. Ինչպէ՞ս հոգեւոր յարատեւութիւնը օրհնած է քեզի:**

Ամեն մխիթարութեան Աստուածը, ... կը մխիթարէ մեզ մեր ամբողջ տառապանքին մէջ. որպէսզի մենք կարենանք մխիթարել: [Բ. Կորնթ. 1. 3-4]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՄԽԻԹԱՐՈՒԹԻՒՆԸ

**Չ**էի կրնար սպասել: Ամուսինս եւ ես նոր վերադարձած էինք մթերքի խանութէն, եւ երբ կը պարպէինք տոպրակները, խելագարի նման փնտռեցի՝ բայց չկրցայ գտնել փունճիկ թխուածները: Ապա ստուգեցի անդորագիրը: Փունճիկ՝ չկար: Յուսախաբ ու տխուր՝ գոչեցի. «Սնանութէն ուզածս՝ միայն փունճիկ թխուածք մըն էր»: Տասնհինգ վայրկեան ետք, ամուսինս ձեռքը երկնցուց եւ ինծի տուաւ թխուածքի տոպրակ մը: Զիւնին մէջ՝ կրկին համարձակած էր դուրս ելլել ու զանոնք գնել: Զինք գրկելով ու սեղմելով՝ ամաչոտ ձեւով ըսի. «Ուրախ եմ որ արկածի մը չհանդիպեցար՝ իմ քմահաճոյքիս գոհացում տալու համար»:

Սովորաբար՝ այսչափ չէի խանգարուեր պարզ թխուածքի մը համար: Բայց շաբաթը եղած էր՝ զգացականորէն սպառիչ եւ ես մխիթարութիւն փնտռեցի թխուածքի մը մէջ. եւ այդպիսով աւելի խորը ուրախութիւն գգացի՝ ամուսինիս սէրն ու գթութիւնը տեսնելով:

Այն տեսակ մխիթարութիւնը, որ կրնանք զգալ ցանկութիւն մը գոհացնելու միջոցով, միշտ ալ կարճատեւ է: Պողոս առաքեալ՝ Կորնթացիներուն կը գրէ թէ իսկական եւ մնայուն մխիթարութիւնը կու գայ «մխիթարութեան Աստուծմէ» (Բ. Կորնթ. 1. 3):

Պողոս կը հասկնար իր ընթերցողներուն խորը պայքարներն ու կարիքները: Իրենց նման ինք ալ ամէնօրեայ փորձութիւններու կը հանդիպէր, ներառեալ հալածանք իր հաւատքին համար: Եւ որովհետեւ Աստուած զինք մխիթարած էր, ինք ալ կրնար մխիթարել (Հմ. 4):

Երբ ցաւ ունինք, կրնանք դառնալ Յիսուսի, որ գթասրտութեամբ ու մխիթարութեամբ առատ է (Հմ. 5): Այստեղ է, որ կը գտնենք մխիթարութիւնը: Եւ երբ փորձենք անոր մխիթարութիւնը, ապա կրնանք զայն բաժնել ուրիշներու հետ:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ՝ որ կու տաս սփոփանք եւ կ'աղաչեմ՝ օգնէ՝ զայն ուրիշներու հետ բաժնելու: Ամեն: **Ե՞րբ եւ ինչպե՞ս մխիթարուեցար Աստուծմէ: Ինչպե՞ս կրնաս մխիթարել ուրիշներ, որոնք նոյն փորձութիւններէն կ'անցնին:**



Մեզի հետ եղողները ակելի բազմաթիւ են՝ քան անոց հետ եղողները: [Դ. Թագ. 6. 16]

## ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԲԱՐՈՒԹԻՒՆ

**Դ**էմքը միշտ այնտեղ էր, բայց ո՛չ մէկը գիտեր: Երբ Սըր Ճօշուա Ռէյնըլտօ (Sir Joshua Reynolds) 1789-ին գծագրեց «Գարտինալ Պոլֆօրդի Մահը» (The Death of Cardinal Beaufort) ստեղծագործութիւնը, դրա՛ւ դեւի դէմք մը՝ մահացող մարդու ետին գտնուող մթութեան մէջ: Ռէյնըլտօ ճշգրիտ կերպով կը պատկերացնէր Շէյքսպիրի թատերգութիւնէն տեսարան մը, ուր կը յիշատակուի «գբաղ, միջամտող դեւ»ի ներկայութիւնը, բայց ոմանց համար հաճելի չի թուեցաւ անոր տառացի իմաստը: Ռէյնըլտօի մահէն յետոյ 1792-ին, դէմքը ներկով ծածկուելով՝ մոռցուեցաւ: Վերջերս՝ արուեստի պահպանութեան աշխատանքները՝ զայն բացայատեցին ներկի եւ ջնարակի շերտերուն տակ:

Աստուածաշունչը կը պատմէ մեր շուրջը գտնուող հոգեւոր իրականութեան մը մասին, որ աչքը չի կրնար տեսնել, ուր Աստուած գերիշխան է: Երբ Եղիսէ շրջապատուած էր թշնամի՝ գինուորներու եւ կառքերու «գորագունդերով», իր սպասաւորը վախցաւ ու հարցուց. «Ի՞նչ պիտի ընենք»: Եղիսէ ըսաւ անոր, որ «մեզի հետ եղողները ակելի բազմաթիւ են քան անոց հետ եղողները»: Ապա աղօթեց ու ըսաւ. «Ո՛վ Տէր, կ'աղերսե՛մ, անոր աչքե՛րը բաց, որպէսզի տեսնէ»: Յանկարծ՝ սպասաւորը «տեսաւ թէ ահա՛ լեռը կրակէ ձիերով եւ կառքերով լեցուն էր՝ Եղիսէի շուրջը» (Դ. Թագ. 6. 14-17):

Հրեզնէն ձիերն ու կառքերը կը խորհրդանշեն հրեշտակային էակներու գոյութիւնը՝ Եղիսէի պաշտպանութեան համար: Սա՛յն բազմաթիւ տեղերէն մէկն է, ուր Սուրբ Գիրքը կ'ընդգծէ այն մխիթարական ճամբարութիւնը, որ աշխարհի մէջ՝ ուր վտանգ կայ եւ հոգեւոր պատերազմը բուռն են, Աստուած տակաւին կը հսկէ մեր վրայ: Հոգ չէ թէ ինչ բաներու մենք կը հանդիպինք, որքա՛ն լաւ է գիտնալ, որ ո՛չ մէկ բան «պիտի կարենայ զատել մեզ Աստուծոյ սէրէն» (Հռոմ. 8. 39):

**Աղօթք** - Յայր, ոչինչ կրնայ զիս բաժնել Յիսուսի մէջ Զեզի հանդէպ իմ ունեցած սերէս եւ կը զովաբանեմ Զեզ՝ անոր համար: Ամէն:

**Մտաբերէ թէ ի՞նչ ձեւերով Աստուած հոգ կը տանի քեզի եւ ինչպե՛ս կրնաս երախտապարտ ըլլալ Անոր:**

Քու պատուիրաններուդ ճամբայիս մէջ պիտի վագեմ, որովհետև դուն իմ սիրտս պիտի սփոփես (լայնցնես): [Սաղմ. 119. 32]

## ԼԱՅՆՑԱԾ ՍԻՐՏ ՍԸ

**Ի**ր «Խոստովանութիւններուն» (*Confessions*) մէջ, Օգոստինոս պայքարեցաւ, թէ ինչպէ՞ս հնարաւոր է, որ Աստուած յարաբերութիւններու մէջ ըլլայ իր հետ: Ինչպէ՞ս կրնայ տիեզերքը ստեղծողը՝ մտնել իր սիրտին նման փոքր ու մեղաւոր բանի մը մէջ: Բայց ան կ'աղերսէ Աստուծոյ, որ այդ մէկը հնարաւոր դարձնէ՝ աղօթելով. «Իմ հոգիիս տունը նեղ է: Ընդարձակէ՛ զայն, որպէսզի կարենաս մտնել այնտեղ: Ան՝ աւերակներուն մէջ է: Վերանորոգէ զայն: Այնտեղ կան բաներ, որոնք կրնան Քու աչքերուդ հաճելի չի թուիլ: Կը խոստովանիմ եւ գիտեմ այդ: Բայց ո՞վ կը մաքրէ զայն, կամ որո՞ւ աղաղակեմ, եթէ ո՛չ Քեզի»: «

Այսօր մենք կը ճանչնանք Օգոստինոս՝ որպէս Սուրբ Օգոստինոս, յարգուած փիլիսոփայ եւ աստուածաբան: Բայց ան ինքզինք կը տեսնէ պարզապէս որպէ՛ս մեղաւոր մէկը, որ վերափոխուած է Աստուծոյ հրաշքով, որ ուզած է զինք ճանչնալ:

Սաղմոս 119-ին մէջ Սաղմոսերգուն նաեւ կը հիանայ Աստուծոյ, որ ինքզինք կը յայտնէ, մասնաւորապէս՝ Աստուածաշունչին միջոցով (Հմ. 18): Ան կը խայտայ ըսելով. «Դուն իմ սիրտս պիտի սփոփես (լայնցնես)» (Հմ. 32): Մենք կրնանք ուրախութեամբ քալել այն ճամբայով, որ Ան ցոյց կու տայ մեզի, պարզապէ՛ս այն պատճառով, որ Աստուած բարեհաճութեամբ կը ցանկայ լայնցնել մեր սիրտերը (Հմ. 45): Ան մեր սիրտերը կը շեղէ ապականութենէ եւ ունայնութենէ (Հմ. 36-37), դէպի Իր պատուիրաններուն շաւիղին մէջ, ուր կը գտնենք Իր անսահման «հաճոյքը» (Հմ. 35):

Մենք փոքր ենք եւ մեր սիրտերը՝ անկայուն: Բա՛յց երբ մեր կարօտած սիրտերը կ'ուղղենք դէպի Աստուած (Հմ. 34, 36), Ան մեզ կ'առաջնորդէ ուրախութեան եւ իրական ազատութեան ճանապարհներով:

**Աղօթք** - Սիրելի Աստուա՛ծ, շնորհակալ եմ՝ որ բացիր սիրտս Քու մեծութեանդ առջեւ: Կը խնդրե՛մ՝ լայնցուր սիրտս ա՛յսօր եւ ամէն օր: Ամէն:

**Աստուած կրնայ քու սիրտդ ալ լայնցնել եւ դուն կրնաս խնդրել իրմէ, որ քեզ ալ աճեցնէ:**



Ան որ իր խաչը չ'առնէր ու իմ ետեւէս չի գար, ինծի արժանի չէ: [Մատթ. 10. 38]

## ՔԱԶՈՒԹԻՒՆ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ ԿԱՆԳՆԵԼՈՒ

**Ք**.ե. 155-ին, վաղ եկեղեցիի հայր՝ Փօլիկարպոս (Polycarp)՝ մահապատիժի սպառնալիք ստացաւ Յիսուս Քրիստոսոսի հանդէպ ունեցած հաւատքին համար: Ան պատասխանեց. «Ութսուն վեց տարիներ ես Անոր ծառան եմ եւ Ան ինծի ո՛չ մէկ վատ բան չէ՛ րրած: Եւ հիմա ինչպէ՞ս կրնամ հայհոյել իմ թագաւորիս, որ փրկեց զիս»: Փօլիկարպոսի պատասխանը կրնայ ոգեշնչումի աղբիւր մը ըլլալ մեզի համար, երբ մենք կը դիմագրաւենք ծայրահեղ փորձութիւններ՝ մեր թագաւոր Յիսուսի հանէպ մեր ունեցած հաւատքին պատճառով:

Յիսուսի մահէն ընդամէնը քանի մը ժամ առաջ՝ Պետրոս համարձակ հաւատարմութեան երդում ըրաւ Անոր. «Ես իմ ա՛նձս ալ պիտի ընծայեմ քեզի համար» (Յովհ. 13. 37): Յիսուս, որ Պետրոսին աւելի լաւ կը ճանչնար՝ քան Պետրոս ինքզինք, պատասխանեց. «Ճշմա՛րտապէս, ճշմա՛րտապէս կը յայտարարեմ քեզի. Աքաղաղը պիտի չկանչէ՛ մինչեւ որ դուն երե՛ք անգամ ուրանաս զիս՝» հմ. 38): Սակայն Յիսուսի յարութեանէն յետոյ նոյնը, որ ուրացած էր զինք, սկսաւ քաջաբար ծառայելու Անոր եւ ի վերջոյ փառաւորեց զինք իր մահով (տե՛ս 21. 16-19):

Դուն՝ Փօլիկարպո՞ս ես, թէ՞ Պետրոս: Եթէ անկե՛ղծ ըլլանք, մեզմէ շատերս աւելի նման ենք Պետրոսի, որ «քաջութեան պակասը» ունինք՝ որպէս Յիսուսի հաւատացող՝ պատուաւոր կերպով խօսելու կամ գործելու անկարողութիւն: Նման առիթներ՝ ըլլան անոնք դասարանին մէջ, ժողովի կամ հանգիստի սենեակին մէջ, պայման չէ՛ որ անհերքելի կերպով սահմանեն մեզ: Երբ այդ ճախողութիւնները տեղի ունենան, մենք պէտք է աղօթքով մաքրենք մեր փոշին եւ դիմենք Յիսուսի՝ Անոր, որ մեռաւ մեզի համար եւ կ'ապրի մեզի համար: Ան կ'օգնէ մեզի՝ հաւատարիմ մնալու իրեն եւ քաջաբար ապրելու իրեն համար ամէն օր՝ դժուար իրավիճակներու մէջ:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կը խնդրեմ՝ տո՛ւր ինծի Զու ուժդ, համարձակ ապրելու՝ որպէ՛ս Զու Որդիիդ հաւատացող: Ամէն: **Լրացուցիչ քաջութեան կարիքը ունինք՝ Յիսուսի համար հաստատ կանգնելու: Իր վկան ըլլալը՝ կ'օգնէ մեր հաւատքը զօրացնելու:**

Ո՛վ Տեր, ուժովդո՛ւր իմ ձեռքերս: [Նե. 6. 9]

## ՀԱՄԱՔ ԵՒ ԿԵՂԾ ՄԵՂԱԴՐԱՆՔ

Հ գոր հովերէն քշուած՝ կրակը օրեր շարունակ կատաղի էր: Պատմաբան՝ Թաքիթըս (Tacitus) կը նկարագրէ քառսային տեսարան մը՝ լի՝ ճիչերով եւ քաղաքացիներու փախուստով՝ իրենց կեանքերը փրկելու համար: Ի վերջոյ, Հռոմի գրեթէ երկու երրորդը գանդուեցաւ: Հռոմի կայսր՝ Ներօ կեղծ մեղադրանքներ առաջադրեց Տէր Յիսուսի հաւատացողներուն դէմ՝ հրդեհը սկսելու համար: Ան կ'ատէր Քրիստոնեաները եւ զանոնք ընտրած էր որպէս աղէտի մեղաւորները, որու հրամանը՝ ըստ լուրերուն, եղած է Ներօի կողմէ:

Նէեմիա նոյնպէս դիմագրաւեց կեղծ մեղադրանքի՝ կիզիչ կրակներ: Ան Պարսկաստանի թագաւորին ծառան էր, բայց իրեն թոյլ տրուած էր վերադառնալ Երուսաղէմ՝ այն Իսրայէլացիներուն հետ՝ պարիսպները վերականգնելու համար (Նէ. 2. 1-10): Սակայն, երբ պարիսպը վերանորոգուեցաւ, թշնամիները մեղադրեցին Հրեաներուն «ապստամբութիւն ծրագրելու» եւ Նէեմիան «իրենց թագաւոր» ընելու (6. 6) համար: Ինչպէ՞ս անոնք կրնային պատասխան տալ կեղծ մեղադրանքներու: Յայտարարելով եւ ապրելով իրենց անմեղութիւնը (հմ. 8), քաջաբար կանգնելով Աստուծոյ զօրութեան մէջ (հմ. 11) եւ ջերմեռանդ աղօթելով Անոր (հմ. 14): Անոնց թշնամիները, ի վերջոյ, «վախցան եւ շատ նուաստացան» երբ հասկցան որ «այս գործը Աստուծոյ օգնութեամբ կատարուեցաւ» (հմ. 16):

Երբեմն ուրիշներ մեզի դէմ կեղծ մեղադրանքներ կ'առաջադրեն: Բայց քանի որ Աստուած մեզի կու տայ անհրաժեշտ ուժը, մենք կրնանք ներել մեզ մեղադրողները եւ «ապրիլ այնքա՛ն լաւ կեանքով», որ չնայած «անոնք մեզ կը մեղադրեն սխալ գործ ընելու համար, տեսնե՛ն մեր բարի գործերը եւ փառաւորեն Աստուած» (Ա. Պետ. 2. 12):

**Աղօթք** - Սիրող Աստուած, շնորհակալ եմ՝ որ կ'օգնես ինձի, երբ կեղծ մեղադրանքներու տակ եմ: Ամէն:

**Յիսուսի հաւատացողներուն դէմ երբեմն կեղծ մեղադրանքներ կ'առաջանան, սակայն կարելոր է ապրիլ ու գործել քաջարի հաւատքով:**

Աստուծոյ քով աչառութիւն չկայ, հապա ամէն ազգի մէջ իրեն ընդունելի է ա՛ն՝ որ իրմէ կը վախնայ եւ արդարութիւն կը գործէ: [Գործք 10. 34-35]

## ԱՄԷՆ ԱԶԳԵՐԷ

**Լ**ոնտոնը՝ համաշխարհային քաղաք է, ուր կողք կողքի կ'ապրին բազմաթիւ ազգերէ մարդիկ: Աշխարհի տարբեր մասերէն մարդոց այս միաւորումը՝ կրնայ հարստութիւն բերել, ներառեալ՝ հիանալի ուսելիք եւ մարտահրաւէրներ: Օրինակ, ես տխրեցայ՝ որ Եւրոպական երկրէ մը եկած ընկերներս զգացին Լոնտոնի մէջ՝ քի՛չ յարգուած, որովհետեւ իրենց երկիրը վերջերս ընդունուած էր Եւրոմիութեան մէջ: Անոնք իրենք զիրենք անտեսուած զգացին, մեղադրուած խնդիրներու համար եւ դժգոհութիւն իրենց ապահոված գործերուն համար:

Քանի որ Աստուած կողմնակալութիւն չի ցուցաբերեր, մենք ա՛լ պէտք չէ այդ ընենք: Ան կը քանդէ մարդոց միջեւ եղած արգելքները: Մենք կը տեսնենք իր Հոգիին գործի վրայ ըլլալը՝ Պետրոսի տեսիլքին մէջ, երբ կ'աղօթէր տանիքը եւ թէ ինչպէս կանչուեցաւ ծառայելու Կոռնելիոս՝ աստուածավախ հեթանոսին: Աստուած օգնեց Պետրոսին՝ արժեւորելու հեթանոսներու հետ չի շփուելու Հրէական կանոնները: Առաքեալը՝ լսեց եւ գնաց Կոռնելիոսի տունը՝ Յիսուսի բարի լուրը տալու: Ան ըսաւ. «Ճշմարտապէս կ'ըմբռնեմ թէ Աստուծոյ քով աչառութիւն չկայ, հապա ամէն ազգի մէջ իրեն ընդունելի է ա՛ն՝ որ իրմէ կը վախնայ եւ արդարութիւն կը գործէ» (Գործք 10. 34-35):

Յիսուսի հետեւողները՝ կոչուած ունին սիրելու եւ ծառայելու բոլոր անոնց, որոնք ստեղծուած են Քրիստոսի պատկերով: Այդ առաքելութեան մէկ մասն է նախապատիւ չսեպել որոշ ազգեր կամ որոշ մաշկի գոյնի մարդեր: Թող մենք սորվինք արդարութիւն փնտռել եւ պաշտպանել ճնշուածները, ինչպէս Աստուած մեզ կ'առաջնորդէ (Ես. 1. 17):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի տարբերութիւն մը ընելու Զեզի համար իմ համայնքիս մէջ: Ամէն:  
**Ինչո՞ւ կը կարծես, որ Աստուած կը քանդէ տարբեր ազգերու մարդոց միջեւ եղած արգելքները: Ինչպե՞ս կրնաս խօսիլ ճնշուածներուն համար:**

Անտիոքի՝ մէջ աշակերտները Զրիստոնէայ կոչուեցան  
առաջին անգամ: [Գործք 11. 26]

## ՄԵՐ ԾՆՆԴԵԱՆ ԻՐԱԻՈՒՆՔԸ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՄԷՋ

**N**BA-ի Տալաս Մավըրիքսի (Dallas Mavericks) սեփականատէրը, Շիզակոյի ձայնասփիւռի մարզական հաղորդավարին առաջարկեց 100,000 տոլար՝ իր անունը «Տալաս Մավըրիք»-ի փոխելու համար: Բացի այդ, ըսաւ՝ թէ 100,000 տոլար պիտի նուիրէ իրեն սիրելի բարեսիրական կազմակերպութեան: Որոշակի ինքնավերլուծութենէ յետոյ՝ ձայնասփիւռի հաղորդավարը հաստատակամ պատասխանեց սեփականատիրոջ՝ մերժելով առաջարկը: Ան բացատրեց. «Ես պիտի ըսէի թէ ամէն ինչ կ'ընեմ դրամի համար, եւ այդ զի՛ս կ'անհանգստացնէ: Իմ անունս՝ իմ ծննդեան իրաւունքս է: Ես կը ցանկամ պահպանել իմ անեղծութիւնս եւ վստահելութիւնս:

Ինչպէս որ ձայնասփիւռի հաղորդավարին անունը՝ իր ծննդեան իրաւունքն է, այնպէս ալ Տէր Յիսուսի վաղ հաւատացեալները «Քրիստոնեայ» անունը ընդունեցին, որպէս իրենց հոգեւոր ծննդեան իրաւունք: Բառնաբաս եւ Սողոմ մէկ տարի ծառայեցին Անտիոքի մէջ եւ բարի լուրի քարոզչութեան միջոցով եկեղեցին աճեցաւ: Անտիոքի հաւատացեալները՝ այնքան շատ կ'ապրէին Քրիստոսի նման, որ մարդիկ, որոնք չէին հաւատար Յիսուսի, անոնց անուանեցին «Քրիստոնեաներ» (Գործք 11. 26): Այսպիսով «Քրիստոնեաները» անոնք էին, որոնք կը պատկանէին Քրիստոսի: Այդ անունը կրելը, ի վերջոյ՝ դարձաւ հալածանքի աղբիւր: Սակայն Պետրոս խրախուսեց հաւատացեալներուն «չամչնալ» իրենց ծննդեան իրաւունքէն եւ այդ անունը կրելու համար տառապելէ (Ա. Պետ. 4. 16):

Անոնց համար, որոնք կը հաւատան Քրիստոսի, «Քրիստոնեայ» ըլլալը մեր ծննդեան իրաւունքն է՝ եւ ո՛չ մէկ գումար, տառապանք կամ բռնութիւն պէտք չէ մեզ ստիպէ հրաժարելու այդ անունէն:

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, կը խնդրեմ՝ օգնէ ինձի ապրիլ՝ այնպէս, որ պատիւ տամ Զու անուկիդ: Ամէն:

**Երբ մարդիկ կը լսեն «Քրիստոնէայ» անունը, ի՞նչ կը կարծէք, ի՞նչը կը լեցնէ անոնց միտքերը: Ի՞նչ կը նշանակէ քեզի համար Քրիստոնէայ կոչուիլ:**



Մեծահամբաւ կին մը ... զինք (Եղիսէն) քովը պահեց՝ հաց ուտելու: [Դ. Թագ. 4. 8]

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ԸՆԴՀԱՏՈՒՄՆԵՐ

**Կ**անուխ առաւօտուն, Սառա (Sara) գրեց օրուան ընթացքին իր ընելիքներուն ցանկը: Սակայն զինք ընդհատեց դժուար վիճակի մէջ գտնուող՝ երիտասարդ ընտանիքէ մը իր ստացած խնդրանքը: Անոնք անմիջական եւ արագ կարիքը ունէին ճրի վառելանիւթի քարտ մը վերցնելու եկեղեցիէն: Սառան զբաղ էր, բայց գիտէր՝ թէ Աստուած կ'ուզէր, որ ինք ընէր այդ ծառայութիւնը: Ուստի համաձայնեցաւ տանիլ քարտը՝ այն պանդոկը, ուր եկեղեցին տեղաւորած էր ընտանիքը՝ քանի մը շաբաթներու համար: Ան անդրադարձաւ որ ճանապարհը աւելի հեռու էր, քան իր նախատեսածը: Ուստի ան՝ բողոքեց Աստուծոյ. «Շատ վառելանիւթ պէտք է հոն հասնելու համար»:

Սառան հոգիին մէջ լսեց այս խօսքերը. «Չէ՞ որ ես քեզի համար հոգացէր եմ»: Ան պատասխանեց. «Այո՛. Աստուած, Դուն հոգացած ես: Ներէ ինձի»: Երբ ան հասաւ պանդոկ՝ գտաւ զոյգը, տուաւ անոնց քարտը եւ գրկեց անոնց երեխան: Սառան տուն վերդառնալէ ետք, շնորհակալութիւն յայտնեց Աստուծոյ՝ իրեն այս պարզ, բայց ուրախալի առիթով օրհնելուն համար:

Իսրայէլի մէջ՝ Սոււամ կատարած ճաբորդութիւններու ժամանակ, Եղիսէ հանդիպեցաւ կնոջ մը, որ ծառայի սիրտ ունէր՝ իրեն հանդէպ: Ան ստիպեց Եղիսէին «հաց ուտելու», ուստի ան յաճախ «հաց ուտելու համար հոն կ'ուղղուէր » (Դ. Թագ. 4. 8): Կինը եւ իր ամուսինը՝ նոյնիսկ սենեակ մը շինեցին Եղիսէի համար, որպէսզի ամէն անգամ, երբ ան գար իրենց քաղաքը, ունենար մնալու տեղ մը (Հմ. 9-10): Աստուած բարեհաճութեամբ ընտրեց օրհնել զիրենք՝ երեխայ մը ունենալու մասին Երիսէի՝ մարգարէութեան միջոցով տրուած ուրախ լուրին (Հմ. 16):

Երբ կը հետեւինք Աստուծոյ համար ընելիքներու ցանկին, Աստուած կը հաճի մեր սիրտերը ուրախութեամբ օրհնել:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրեմ՝ բա՛ց սիրտս, որպէսզի լսեմ Քու ձայնդ եւ ծառայեմ, ինչպէս Դո՛ւն կ'առաջնորդես: Ամէն:  
**Ի՛նչ ընդմիջում կրնայ ըլլալ Աստուծոյ ծրագիրը քեզի համար:**  
**Ինչպէ՞ս կրնաս ծառայել այնպիսի ձեւերով, որոնք լաւագոյնն են՝ ուրիշներու համար:**

Անոնք պիտի ըլլան իր ժողովուրդը. Աստուած ի՛նք պիտի ըլլայ անոնց հետ՝ իբր անոնց Աստուածը: [Յայտ. 21. 3]

## ԻՐԱԳՈՐԾՈՒԱԾ ԿԱՐՕՏ

**Պ**լէյզ Փասքալ (*Blaise Pascal*)՝ յայտնի փիլիսոփան, նշանաւոր կերպով ըսած է, թէ «անվերջ խոռոչ» մը կայ մեր մէջ, որ միայն անասնման Աստուածը կրնայ լեցնել: Օգոստինոս աղօթեց. «Դուն ստեղծեցիր մեզ Քու անձիդ համար, Տէ՛ր, եւ մեր սիրտը անհանգիստ է՝ մինչեւ որ հանգչի Քեզմով»: Ինչպէս Դաւիթ յայտնեց, անապատի մէջ ծարաւած մարդոց նման՝ մեր ամբողջ էութիւնը «կարօտով» կը փնտռէ Աստուած (Սաղմ. 63. 1):

Սակայն զարմանալի է, որ ո՛չ միայն մարդ արարածն է, որ կը զգայ այս կարօտը: Աստուած ալ կարօտ մը ունի: Թէեւ տիեզերքի անասնման Աստուածը՝ ո՛չ մէկ բանի կը կարօտի՝ Իրմէ դուրս, որպէսզի կատարեալ ըլլայ, Աստուածաշունչը կ'ըսէ թէ Ան «կը փափաքի» մեզի վերագտնել, երբ մոլորինք (Յակ. 4. 4-5), եւ անընդհատ կը յայտնէ թէ ժողովուրդ մը կ'ուզէ, որ Իրեն պատկանի (Ել. 6. 7, Եբ. 8. 10):

Հազարաւոր տարիներէ ի վեր՝ այս կարօտը շարժիչ ու մղիչ ուժ եղած է Աստուծոյ միսիոնարական գործունէութեան. մարգարէներ ուղարկեց՝ Իր մոլորած ժողովուրդը վերագարձնելու, եւ ի վերջոյ Իր Որդին զրկեց՝ կորսուած ոչխարները գտնելու համար (Ես. 30. 18), Ղուկ. 19. 10): Լաւ լուրը այն է, որ վերջապէս այս կարօտը պիտի իրագործուի «Անոնք պիտի ըլլան իր ժողովուրդը. Աստուած ի՛նք պիտի ըլլայ անոնց հետ՝ իբր անոնց Աստուածը», եւ Աստուած ու մարդ արարածները միասին պիտի բնակին (Յայտ. 21. 2-3):

Մարդիկ կարօտ ունին Աստուծոյ, եւ ո՛չ մէկ փոխանորդ կրնայ զայն գոհացնել: Աստուած ալ կարօտ ունի մարդոց, եւ ո՛չ մէկ ուրիշ բան կրնայ զայն փոխարինել: Ուստի՝ զարմանալի չէ՛, որ երկինքի մէջ ուրախութիւն կայ, երբ մէկ մեղաւոր մը կ'ապաշխարէ (Ղուկ. 15. 7):

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, շնորհակալ եմ՝ որ այրող կարօտով կ'ուզես, որ Զե՛զ ճանչնամ: Ամէն:

**Ինչպէ՞ս կը զգաս՝ գիտնալով թէ Աստուած «կարօտ» ունի քեզի:** Ինչպէ՞ս կրնայ այս՝ քաջալերել քեզ, երբ պետք ունիս ապաշխարելու սխալներուդ համար:

Եթե զօրքերու Տերը մեզի քիչ մը վերապրող թողուցած չըլլար՝ մենք Սողոմի պէս պիտի ըլլայինք: [Ես. 1. 9]

## ՓՐԿՈՒԱԾՆԵՐ՝ ԱՍՏՈՒԾՈՅ ՈՂՈՐՍՈՒԹԵԱՄԲ

**Չ**արլզ ձողին (*Charles Joghin*)՝ 11 տարեկանին սկսաւ իր նաւաստիական կեանքը: Շատ նաւերու վրայ՝ ծառայեց՝ որպէս հաց թխող, մինչեւ որ 1912 թուականին աշխատանքի ընդունուեցաւ մարդատար նաւու մը վրայ, որ ճամբայ ելաւ Անգլիոյ Սաութհամփթընէն (*Southampton*): Այդ նաւը՝ «Թայթանիքն» (*Titanic*) էր, որ Հիւսիսային Ատլանտեան ովկեանոսին վրայ՝ զարնուեցաւ սառցալեռան մը: Երբ նաւը կը խորտակուէր, ձողին մարդոց կ'օգնէր՝ փրկարար նաւակներու մէջ տեղաւորելու: Ինք ալ վերջին պահուն՝ Թայթանիքի բարձրացած պոչին վրայ կանգնած էր, մինչեւ նաւը՝ ուղղաձիգ կերպով սուզուեցաւ: Սակայն հրաշքով՝ ան փրկուեցաւ:

Երեսուն տարի վերջ՝ Երկրորդ Աշխարհամարտին, ձողին՝ ուրիշ նաւի մը՝ *RMS Օրեկընին* (*Oregon*) վրայ էր: Այդ նաւը զառնուեցաւ ուրիշ նաւի մը եւ այդ ալ խորտակուեցաւ: Զարմանալիօրէն՝ ձողին դարձեալ փրկուեցաւ:

Աստուածաշունչը կը յայտնէ, որ բոլորս ալ խորտակուող նաւի վրայ ենք: Պօղոս կը գրէ. «Արդարեւ բոլորը մեղանչեցին, եւ զրկուած են Աստուծոյ փառքէն» (Հռոմ. 3. 23): Իսրայէլի ապստամբ ազգը նկարագրելով՝ կը յիշէ Նայի. «Եթէ զօրքերու Տէրը մեզի քիչ մը վերապրող թողուցած չըլլար՝ մենք Սողոմի պէս պիտի ըլլայինք» Ես. 1. 9): Պօղոս կը խօսի «մնացորդի» մասին՝ փրկուածներու լեցուն նաւ մը. «Միայն մնացորդ մը պիտի փրկուի» (Հռոմ. 9. 27): Բայց ինչպէ՞ս անոնք փրկուած են: Աւետարանին բարի լուրը ստանալով (10. 16): Մենք բոլորս ալ Իսրայէլի նման մեր մեղքերուն մէջ կը խեղդուինք: Մինչեւ որ չընդունինք ա՛յդ Բարի Լուրը, չենք կրնար փրկուիլ: Աստուած մեր դիմաց դրած է փրկութեան նաւակը՝ որ Յիսուսն է: Անոնք, որոնք տակաւին չեն գտած Յիսուսի՝ կեանքի այլեկո՞ծ ջուրերուն մէջ, լաւ է որ բարձրանան այդ նաւակին մէջ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, գոհութիւն կու տամ քու ողորմութեանդ եւ փրկութեանդ համար: Ամէն:

**Երբէ՞ք զգացած ես, որ կեանքիդ մէջ կը խեղդուիս: Ինչպէ՞ս կը հասկնաս Աստուծոյ փրկութեան նաւակի առաջարկը:**

Տերը՝ քու Աստուածո՞ք քու մէջդ զօրաւոր է, Ի՛նք քեզ պիտի փրկէ: [Սոփ. 3. 17]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶԵՌՔԻՆ ՏԱԿ

**Դ**ատապարտուած յիսու՛ն տարիներ՝ ամենաբարձր մակարդակի ապահովութեամբ բանտի մը մէջ, տասնըվեց տարեկան աղջիկ մը՝ նստած էր մեկուսարանի մը մէջ: Քանի որ անչափահաս էր, զինք զատ պահեցին միւս բանտարկեալներէն: Մօտ մէկ տարի, այցելու մը իսկ չունեցաւ: Սակայն բանտին մէջ կազմակերպուած քարոզչական եւ մկրտական օր մը, բանտապահները թոյլ տուին, որ ծառայող մը՝ մտնէ անոր խուցը: Աղջիկը լսեց Աւետարանը, իր կեանքը յանձնեց Յիսուսի, եւ խնդրեց՝ որ մկրտուի: Սկիզբը՝ խումբը խորհեցաւ շիշերու ջուրերով մկրտել զինք, բայց յետո՛յ՝ բանտի պատասխանատուները ամբողջ հիմնարկը փակեցին ու զինք առաջնորդեցին դէպի շարժական մկրտութեան աւազան մը: Երբ Աստուծոյ ժողովուրդը աղօթեց, աղջիկը արտասուեցաւ:

Թէեւ Աստուած կը խոստանայ դատել զինք մերժողները, Ան նաեւ ողորմութիւն ցոյց կու տայ անոնց, որ կ'ապաշխարեն: Ան կը վերականգնէ եւ կ'ապահովէ անոնց, որոնք կը վստահին Իր անունին (Սոփ. 3. 10-12): Ապաշխարութիւնը կ'առաջնորդէ փրկութեան, որովհետեւ Աստուած Ինք անձամբ «հեռացուց» պատիժը, որու արժանի էինք (Հմ. 15): Հաւատք եւ յոյս կը հնչե՛ն մարգարէ Սոփոնիայէն, երբ կ'ըսէ Աստուծոյ մասին. «Քեզի համար ուրախութեամբ պիտի բերկրի, Իր սիրոյն մէջ հանդարտ պիտի կենայ, եւ քեզմով ցնծութեամբ պիտի խայտայ» (Հմ. 17):

Կարելոր է՝ որ կարեկցութեամբ եւ վստահութեամբ բաժնենք Աւետարանը, մանաւանդ անոնց, որոնք կը զգան թէ շատ հեռու են Աստուծմէ: Հոգ չէ թէ ո՞ւր ենք, ի՞նչ ըրած ենք, ինչպէ՞ս զգացած, կամ մոռցուած, միայնակ, կամ արժանի չենք. Աստուած կը սիրէ մեզ եւ կը հետապնդէ մեզ: Բոլորս Անոր ձեռքին տակ է:

**Աղօթք** - Սիրող Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի այնքա՛ն հոգալ, որ կարենամ տեսնել ու բաժնել քեզ անոնց, որոնք քեզի այնքա՛ն պէտք ունին, որքան ե՛ս: Ամէն:

**Երբե՞ք զգացած ես թէ չափազանց հեռու ես Աստուծմէ: Ինչպէ՞ս Անոր ցուցաբերած ողորմութիւնը փոխեց քու կարեկցութիւնդ՝ ուրիշներու նկատմամբ:**

Մենք բոլորս, ... կը փոխուինք նոյն պատկերին՝ փառքէ փառք: [Բ. Կորնթ. 3. 18]

## ՆՄԱՆԻՐ ՅԻՍՈՒՍԻ

**Ե**րկարահասակ ճամբորդ մը՝ կարծես իր ծալքերէն դուրս ելաւ, երբ ոտքի կանգնեցաւ փոքր՝ մարգային ինքնաթիռին միջանցքին մէջ: Ապա՝ նկատեցի անոր բացայայտ ցուցադրուած գիրքը, խորագրուած՝ «Նմանիր Յիսուսի»: Քանի մը ըրպէ ետք, նոյն մարդը խստիւ հրեց ուրիշները՝ իր ճամբորդական պայուսակը կառքէն առնելու համար: Նմանիր Յիսուսի<sup>օ</sup>: Չէի գիտեր՝ արդեօք ճշմարիտ «եղբայր» մըն էր, որ կը ճանչնար Քրիստոսը, բայց այս եսակեզրոն վարքագիծը զիս ցաւցուց, քանի որ սխալ կերպով կը ներկայացնէր Յիսուսը:

Երբ ոտքս դրի շարժասանդուխին, դարձեալ տեսայ նոյն մարդը գիրքը տակաւին երեւելի: Այդ բառերը՝ իմ սիրտս ալ մշտեցին. «Նմանի՛ր Յիսուսի՛ էլիսա (Elisa): Մի՛ դատեր»: Սկսայ հարց տալ ես ինծի. արդեօ՞ք իմ ներկայութիւնս՝ Քրիստոսի եռանգը ունէ՞ր:

Յիսուսի նմանիլը՝ փոխակերպման ընթացք մըն է՝ Աստուած իր նկարագիրը մեր մէջ կերտելով, երբ կ'ենթարկուինք իր ճանապարհներուն: Պօղոս կը գրէ, թէ Յիսուսի հաւատացողները «կը փոխուին նոյն պատկերին փառքէ փառք, որպէս թէ Տէրոջ Հոգիին միջոցով» (Բ. Կորնթ. 3. 18): Յովհաննէս կը զարմանայ թէ որքա՛ն դժուար է հասկնալ կամ հասնիլ այս մէկին. «Հիմա մենք Աստուծոյ զաւակներն ենք, եւ տակաւին բացայայտ չէ թէ ի՛նչ պիտի ըլլանք, բայց գիտենք թէ երբ ինք երեւնայ իրեն պէս պիտի ըլլանք, որովհետեւ պիտի տեսնենք զինք՝ ինչպէս որ է: Ո՛վ որ այս յոյսը ունի անոր վրայ, կը մաքրագործէ ինքզինք՝ ինչպէս ան մաքուր է» (Ա. Յովհ. 3. 2-3):

Երբ շարժասանդուխէն դուրս եկայ, դարձեալ նայեցայ գիրքին. «Նմանիր Յիսուսի»: Այդ բառերը նոր իմաստ ստացան ինծի համար եւ ուղղեցին իմ հայեացքս՝ դէպի սեփական սիրտիս եւ կեանքիս:

**Աղօթք** - Ո՛հ Աստուած, կը տեսչամ նմանիլ Զեզի: Կը խնդրե՛մ՝ գործէ սիրտիս մէջ ու ձեւաւորէ զի՛ս՝ Զու կերպարանքիդ նման: Ամէն:  
**Ինչպէ՛ս կը տեսչաս նմանիլ Յիսուսի. Ինչպէ՛ս կրնաս համագործակցիլ Անոր գործին՝ քու կեանքիդ մէջ:**

Յովսևան ձուկին փորելն Տերոջ՝ իր Աստուծոյն աղօթեց: [Յով. 2. 1]

## ԳԹՈՒԹԻՒՆ ԵՒ ՄԵՐ ՔԱՈՍԸ

**Կ**իրականօրեայ Դպրոցի ընթացքին, իմ համբերութիւնս կը սպառէր երեք տարեկան Փիթըրին (Peter) հետ: Ան դժգոհ էր, անկարեկից միւս երեխաներուն հանդէպ, եւ ընդհանրապէս կ'ընդհամար ուրախ ըլլալու, նոյնի՛սկ երբ իրեն ամենէն ցանկալի խաղալիքները կու տայինք: Իմ գլխարտութիւնս դարձաւ՝ ջղայնութեան: Եթէ կը շարունակէր յամառօրէն դժուար ըլլալ, թո՛ղ երթար իր ծնողներուն մօտ եւ խաղի գուարճանքէն զրկուէր:

Շատ անգամ կը նշմարեմ, թէ իմ գութն պայմաններ ունի: Երբ մէկը կը մերժէ իմ խորհուրդս կամ օգնութիւնս, կը կարծեմ՝ թէ այլեւս արժանի չէ անոր: Բարեբախտաբար, Աստուած այդպէս չի վարուիր մեր հետ: Յովնան մարգարէն՝ զգաց Աստուծոյ անսահման գթութիւնը՝ անհնազանդութեան ժամանակ, երբ Աստուած իրեն հրամայեց՝ երթալ եւ քարոզել Նինուէ քաղաքին (Յով. 1. 2): Յովնան՝ համարձակութեամբ ընտրեց հակառակ ուղղութիւնը եւ բռնուեցաւ սարսափելի փոթորիկի, ծովուն մէջ նետուեցաւ, եւ մեծ ձուկ մը՝ կլլե՛ց զինք. իր ձեռքով ստեղծուած աղէտ (Հմ. 4, 15-17): Երբ ի վերջոյ Յովնան «աղօթեց Տէրոջ՝ իր Աստուծոյն» (2. 1), Աստուած տակաւին կը լսէր եւ պատրաստ էր ներում շնորհելու իր դժկամակ մարգարէին: Յովնան ձուկէն ազատուեցաւ եւ շնորհքով՝ երկրորդ հնարաւորութիւն ստացաւ՝ Նինուէ երթալու (3. 1):

Փոքրիկ Փիթըրին պարագային, պտոյտ մը դէպի խաղափայր մխիթարեց զինք. հրաշալի միտք մը՝ իմ ցուցաբերած համբերութենէն աւելիով օժտուած օգնականի մը կողմէ: Որքա՛ն գեղեցիկ է այն գթութիւնը, որ մշտապէ՛ս մեզ կը որոնէ՝ նոյնիսկ մեր ստեղծած քառսին մէջ:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, շնորհակալ եմ, որ այքա՛ն համբերատար սիրով կը սիրես զիս: Կը խնդրեմ՝ սորվեցուր ինձի ալ՝ նոյնը ընել: Ամէն:  
**Երբեմն կը դժուարիս ուրիշներուն սեր ու գուրջ ցուցաբերելու:**  
**Տե՛ս՝ թէ ինչպէս Աստուծոյ սերը կը հասնի՝ նոյնիսկ ամենադժուար մարդոց եւ մեզի:**

Ուժովցէ՛ք ու քաջասի՛րտ եղէք, դուք բոլորդ՝ որ Տերոջ կը յուսաք: [Մաղմ. 31. 24]

## ՅՈՅՍ՝ ՀԱՒԱՏՔԻ ՄԷՁ

**Ք**րիստինի (Kristin) որդին եօթը տարեկանին մահացած էր՝ քաղցկեղէն: Իսկ հիմա՝ երեք տարիներ ետք, անոր մեծ որդին ալ՝ անբուժելի հիւանդութիւնով մը ախտորոշուած էր: Քրիստինի այն բարեկամները, որոնք չէին հաւատար Յիսուսի, կը տխրէին իր հետ, բայց չէին կրնար հասկնալ, թէ ինչպէ՞ս Քրիստին կը շարունակէր վստահիլ Քրիստոսի: Կը հարցնէին. «Ինչպէ՞ս կրնայ քու Տէր Աստուածդ այդպէս ընել: Ինչո՞ւ կը շարունակես հաւատալ Անոր»:

Բայց Քրիստինի համար այդ՝ աւելի զօրաւոր պատճառ մըն էր իր՝ հաւատքը պահելու: Ան ըսաւ. «Չեմ հասկնար ինչո՞ւ այս բոլորը կը պատահին, բայց գիտե՛մ թէ Աստուած մեզի պիտի օգնէ: Միայն Աստուած կրնայ ինծի յոյս տալ, որպէսզի շարունակեմ»:

Այդպիսի յոյս եւ վստահութիւն մը՝ ուժ տուաւ Դաւիթ թագաւորին, երբ ան կը գտնուէր ճնշող, անըմբռնելի եւ անհասկնալի իրավիճակներու մէջ: Թշնամիներով շրջապատուած եւ կործանումի վտանգի դէմ՝ յանդիման, ան վստահաբար չէր հասկնար թէ ինչո՞ւ այս բոլորը կ'ըլլային իր կեանքին մէջ: Բայց գիտէր, որ կը հետեւէր այն Աստուծոյ, որ վստահելի էր՝ փրկելու եւ օրհնելու՝ իր ժամանակին (Սարմ. 31. 14-16): Այս վստահ յոյսը անոր ուժ տուաւ՝ Աստուծոյ հպատակելու եւ ըսելու. «Իմ ժամանակներս քու ձեռքդ են» (Հմ. 15): Եւ անիկա զօրացուց զինք, որպէսզի ըսէ նաեւ. «Ուժովցէ՛ք ու քաջասի՛րտ եղէք, դուք բոլորդ՝ որ Տէրոջ կը յուսաք» (Հմ. 24):

Երբ կը զգանք, որ ամէն բան մեզի կը յաղթէ եւ առաջ նայելու շատ բան չկայ, գիտե՛նք թէ կրնանք աւելի ամուր գրկել Աստուծոյ եւ այն կեանք տուող յոյսը, որ միայն Ան կը պարգեւէ:

**Աղօթք** - Սիրող Հայր, Դուն գիտես իմ պայքարներս ու կասկածներս: Կը խնդրե՛մ՝ տո՛ւր ինծի հաւատք, որպէսզի շարունակեմ Զեգի վստահիլ եւ զօրութիւն՝ յառաջ երթալու: Ամէն: Ի՞նչի պէտք ունիս առաջ երթալու կեանքի դժուարութիւններուն ու պայքարներուն մէջ: Աստուծոյ խոստացած յոյսը՝ ինչպէ՛ս կու տայ քեզի ուրախութիւն եւ զօրութիւն՝ նոյնիսկ նեղութեան մէջ:

Այն վերարկուն, որ ձգեցի Տրովադա՝ Կարպոսի քով, բե՛ր՝ երբ գաս, նաեւ գիրքերը, մա՛նաւանդ մագաղաթները: [Բ. Տիմ. 4. 13]

## ՀՈԳԱՏԱՐՈՒԹԵԱՄԲ ՂՐԿՈՒԱԾ

**Վ**երջերս իմացայ, որ CARE ծրար անունը՝ եկած էր՝ «Ամերիկայի Օժանդակութիւններու Եւրոպա Ուղարկման Համագործակցութիւն»էն (Cooperative for American Remittance to Europe), խմբակ մը, որ Երկրորդ Աշխարհամարտէն ետք՝ անունդով լեցուն տուփեր կը ղրկէր, օգնելու համար տեղահանուած Եւրոպացիներուն: Իսկ ե՛ս, երբ հիմա գոյէ՛մ յաճախող զաւակներուս ծրարներ կը ղրկեմ, որոնք հիմնականին մէջ կը պարունակեն՝ տունը պատրաստուած անուշէղէններ եւ քարցրեղէն, բայց նաեւ միշտ կ'ունենան օգտակար բաներ՝ տունը մոռցուած սիրելի շապիկ մը կամ աւելորդ դպրոցական իրեր:

Թէեւ «Հոգատար Ծրար» անունը ժամանակակից է, սակայն օգտակար իրեր ղրկելու սովորութիւնը՝ շատ աւելի հին է: Աւետարանին մէջ իսկ՝ Բ. Տիմոթէոսի նամակին վերջին մասերուն մէջ, կը տեսնենք օրինակ մը: Երբ Պօղոս բանտարկուած էր Հռոմի մէջ, իր վստահելի աշակերտին՝ Տիմոթէոսի, նամակ գրելով՝ անձնական խնդրանքներ կ'ընէ: Ան կը խնդրէ, որ Տիմոթէոս գա՛յ՝ եւ իր հետ բերէ Մարկոսը, որովհետեւ պիտանի է իրեն (4. 11): Ապա կ'աւելցնէ. «Այն վերարկուն, որ ձգեցի Տրովադա՝ Կարպոսի քով, բե՛ր՝ երբ գաս, նաեւ գիրքերը, մա՛նաւանդ մագաղաթները» (հմ. 13): Հաւանաբար վերարկուն անհրաժեշտ էր, որովհետեւ ձմեռը կը մօտենար, իսկ գիրքերը՝ հաւանաբար Հին Ուխտին օրինակներն էին: Ինչ ալ եղած ըլլար պատճառը, Պօղոս կարօտը ունէր ընկերակցութեան եւ օգտակար իրերու, որոնք կը դարմացնէին ու կը զօրացնէին զինք:

Խնամքի ու գուրգուրանքի շոշափելի նշանները, թէ մօտ կամ հեռու գտնուող մէկուն՝ կրնար շատ կարեւոր դեր ունենալ՝ մխիթարելու եւ զօրացնելու համար:

**Աղօթք** - Երկնաւոր Զա՛յր, կը խնդրե՛մ՝ բա՛ց աչքերս, որպէսզի տեսնե՛մ՝ թե որո՞ւ կրնամ ցոյց տալ Քու սերդ: Ամէն:  
**Ե՛րբ ստացար Աստուծոյ սերը յիշեցնող բան մը: Եւ այդ գթութիւնը՝ ինչպէ՞ս մխիթարեց քեզ:**



Հագե՛ք Աստուծոյ ամբողջ զրահը, որպէսզի կարենաք դիմանալ Չարախօսին հնարքներուն: [Եփ. 6. 11]

## ՀԱՍՏԱՏ ԿԱՆԳՆԻԼ ՔՐԻՍՏՈՍՈՎ

**Վ**երջերս, մայրս ինծի մանրամասն նկարագրեց զարմանալի բախում մը, որ տեսաւ ուղիղ եթերով տեսախցիկի վրայ՝ Ափրիկէի ջրառատ վայրի մը մէջ: Կեմսպօքը (Gemsbok)՝ մեծ այծեամբ ահեղ կենդանի մըն է, որու եղջիւրները կրնան աւելի քան երկու ոտք երկար ըլլալ, որ կը թուի թէ չի վախնար: Բայց՝ ո՛չ եթէ հանդիպի խիզախ եւ աղմկարար ջայլամներու խումբի մը:

Առաջնորդ ջայլամը՝ որ իր թշնամիներէն աւելի բարձրահասակ էր, իր մեծ փետուրները շարժեց, բաւական բարձր ձայն հանեց եւ ոտքերը գետին գառնելով մօտեցաւ՝ երե՛ք այծեամներուն, որոնք փախուստի դիմեցին:

«Կը կարծեմ չէին գիտեր թէ իրենց եղջիւրները ինչպիսի գօրութիւն ունին», ըսի մօրս:

Յիսուսի հաւատացողները՝ երբեմն կրնան մոռնալ թէ ի՛նչ գօրութիւն ունին, երբ Սատանայէն՝ մեր հոգեւոր թշնամիէն, յարձակումներ կը դիմագրաւեն: Մենք ունինք Սուրբ Հոգն՝ որ կ'ապրի մեր մէջ (Հռոմ. 8. 11), եւ Աստուծոյ սպառազինութիւնը, որ կ'օգնէ մեզի ամէն պարագաներու մէջ. «Հագե՛ք Աստուծոյ ամբողջ զրահը, որպէսզի կարենաք դիմանալ Չարախօսին հնարքներուն» (Եփ. 6. 11): Սատանան կ'ուզէ մարտահրաւէր տալ՝ Աստուծոյ Խօսքին վրայ մեր ունեցած հաւատքին, հարցականի տակ դնել՝ Քրիստոսի մէջ մեր ինքնութիւնը եւ փորձել, որպէսզի մեղք գործենք:

Բայց մենք կրնանք ամուր մնալ, որովհետեւ Աստուծոյ սպառազինութեան մէջ կան՝ «ճշմարտութեան գօտին, ... արդարութեան գրահը, ... հաւատքի վահանը, ... փրկութեան սաղաւարտը եւ Հոգիին սուրը, որ Աստուծոյ Խօսքն է» (Հմ. 14-17):

Երբ թշնամին կը յարձակի մեր վրայ վախի, դատապարտութեան կամ յուսահատութեան զգացումներով, յիշե՛նք թէ Աստուծոյ զաւակներն ենք եւ լաւ զինուած ենք, ամուր կանգնելու:

**Աղօթք** - Սիրելի Աստուա՛ծ, շնորհակալ եմ՝ որ տուիր Քու երկնային պաշտպանութիւնդ: Ամէն:

**Երբեմն կը մոռնանք Աստուծոյ սպառազինութիւնը գործածել: Սակայն կարեւոր է հաստատ կանգնիլ Քրիստոսով՝ մեր պայքարներուն մէջ:**

Ո՛վ ծոյլ, գնա՛ մըջիւնին, տե՛ս անոր ճամբաները եւ իմաստո՛ւն եղիր: [Առ. 6. 6]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ ՄԷՋ

1692 թուականին, Եղբայր Լորընսի (Brother Lawrence)՝ «Աստուծոյ ներկայութեան Կիրառութիւնը» խորագիրով գիրքը՝ առաջին անգամ հրատարակուեցաւ: Այդ գիրքին մէջ՝ Լորընս կը նկարագրէ, թէ ինչպէ՛ս Աստուած կը հրաւիրէ՝ իր առօրեայ պարզ գործունէութիւններուն մէջ: Եղբայր Լորընսի խօսքերը, մինչեւ այսօր մարտահրաւէր են մեզի՝ ազօթքով որոնելու Աստուած ամէն բանի մէջ, թէ մարգագետինի խոտերը կտրելու, թէ՛ նպարեղէն գնելու, թէ՛ շունը զբօսնելու ժամանակ:

Ամէն օր, մեր շունը՝ Ուինսթընը (Winston) կը տանիմ զբօսանքի: Իմ նպատակս է՝ որ ան շարժում ունենայ: Իր նպատակը՝ ամէն ինչ հոտոտել: Ինչպէս նաեւ իր պէտքերը ընելու համար: Վերջերս, փոխանակ յուսախաբ ըլլալու՝ հոգեւոր կեանքիս մէջ յառաջացում չունենալուս համար, սկսած եմ Աստուծոյ խնդրել, որ օգնէ՛ ինծի տեսնելու այս պահերը՝ իբր յիշեցում մը, թէ կեանքն ալ շունի մը հետ զբօսնելու պէս է: Մենք Աստուծոյ ներկայութեան փորձառութիւնը կ'ունենանք, երբ հաւատարիմ կերպով կը հետեւինք Անոր՝ կեանքի առօրեայ աշխատանքներուն մէջ, նոյնիսկ անակնկալ խանգարումներով:

Առակաց 6-ին մէջ, Սողոմոն՝ նման դաս մը կու տայ, օգտագործելով հասարակ մըջիւն մը՝ իբր օրինակ՝ հաւատարիմ աշխատանքի. «Ո՛վ ծոյլ, գնա՛ մըջիւնին, տե՛ս անոր ճամբաները եւ իմաստո՛ւն եղիր» (Հմ. 6): Սողոմոն գործածեց մըջիւնը՝ իբր համբերատար եւ առօրեայ աշխատանքի խորհրդանիշ (Հմ. 7-8):

Աստուծոյ հետ մեր յարաբերութիւնը պէտք է՛ սահմանափակել միայն որոշ «հոգեւոր» պահերով՝ ինչպէս եկեղեցիի կամ խաղաղութեան ժամանակ: Փոխարէնը, երբ հաւատարիմ ենք Անոր, Աստուած կը հրաւիրէ մեզ տեսնելու իր Աստուածային գրոշմները՝ ամբողջ օրուան ընթացքին:

**Աղօթք** - Սիրելի Յայր, շնորհակալ եմ, որ միշտ կը յիշեցնես՝ թե Դո՛ւն ներկայ ես ամէն պահի մէջ: Ամէն:

**Ե՞րբ Աստուած գործածած է սովորական բան մը՝ որ աւելի լա՛ւ տեսնես զինք:** Ի՞նչ առօրեայ աշխատանքներու մէջ կը հրաւիրե՞ քեզ՝ հաւատարիմ մնալու:

Հաստատ միտքը կատարեալ խաղաղութան մէջ կը պահես, որովհետեւ քեզի կը վստահի: [Ես. 26. 3]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ ԿԵԴՐՈՆԱՑԱԾ

**Ա**շխատակիցս արագ հեռախօսային զրոյց մը ունեցաւ՝ խնդիր մը քննարկելու համար: Նախ հարցո՛ւց, թէ ինչպէ՞ս եմ. եւ ես ընդունեցի՝ որ շատ ցաւալի՝ քթանցքային վարակ մը ունիմ եւ դեղը չէր օգներ: Աշխատակիցս՝ պարզապէս հարցուց. «Կրնա՞մ աղօթել քեզի համար»: Երբ համաճայնեցայ, երեսուն երկվայրկեանի աղօթք մը ըրաւ Աստուծոյ՝ իմ բուժումս խնդրելով: Ես ալ խոստովանեցայ. «Երբեմն՝ կը մոռնամ աղօթել: Այդքա՛ն կեդրոնացած էի ցաւին վրայ, որ Աստուծոյ չգիմեցի»:

Այս խոստովանութիւնս ստիպեց ինծի մտածելու, թէ ո՞ւր կեդրոնացած է իմ միտքս. իմ պայքարներուս եւ խնդիրներուս վրա՞յ, թէ Աստուծոյ: Այդ օր, միտքս կը կեդրոնանար միայն ցաւին վրայ՝ ատոր ուժգնութեան պատճառով: Բայց Եսայի 26. 3-ը կը յիշեցնէ մեզի, թէ երբ մեր միտքը Աստուծոյ վրայ է, որ բժշկող եւ պահող է՝ խաղաղութիւն կը գտնենք. «Հաստատ միտքը կատարեալ խաղաղութեան մէջ կը պահես, որովհետեւ քեզի կը վստահի»: Թէեւ ցաւը կրնայ անմիջապէս չանցնիլ, կամ գուցէ երբէ՛ք՝ այս կեանքին մէջ, մարգարէն կը յիշեցնէ մեզի, որ մեր վստահութիւնը պէտք է դնենք Անոր վրայ, որ հաւատարիմ է եւ կրնայ մեզի պէտք եղածը տալ (Հմ. 4):

Եսայի մարգարէի այս հատուածը, Իսրայէլացիներուն կը յղէ Աստուծոյ խոստումներուն՝ աքսորի ընթացքին եւ անոր վերջաւորութեան: Անոնք կրկին պիտի գովաբանեն Աստուած, մինչ կը կառչին իրենց հաւատքին ու յոյսին՝ Իր տրամադրելիք բարիքներուն համար (Հմ. 1-2): Իսկ մարգարէին խօսքերը կը յիշեցնեն մեզի ալ, որ ինչպիսի ցա՛ւ ալ կրենք, մենք եւս կրնանք մխիթարուիլ, երբ մեր վստահութիւնը Աստուծոյ վրայ կը կեդրոնացնենք եւ Անոր կը կանչենք:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ յիշեցուր ինծի, որ միտքս միշտ Զու վրադ պահեմ՝ անկախ իրավիճակներէն: Ամէն:  
**Ի՞նչ բանի վրայ կեդրոնացած է քու մտածումներդ այսօր: Ինչպէ՞ս կրնաս քու մտահոգութիւններդ վերածել՝ գովաբանութեան եւ աղօթքի:**

Ան որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ. պիտի աւարտէ միևչեւ Յիսուս Զրիստոսի օրը: [Փիլ. 1. 6]

### ՅՈՐԴԱՌԱՏ ՍԵՐ

**Ա** մառնային բանակումի վերջին գիշերը, պատանի անձս՝ առանձնացած զգաց, մինչ միայնակ կանգնած էի բանակումի մասնակից խումբին մէջ: Երբ մէկը ծաղրեց զիս, վիրաւորուած զգացի: Վազեցի վրանս եւ ձեւացուցի՝ թէ կը քնանայի, երբ խումբի առաջնորդը եկաւ զիս ստուգելու: Առաւօտեան խուսափեցայ անոր փորձէն՝ այդ մասին զրուցելու:

Աւելի ուշ, ան ինծի նամակ մը գրեց, օգնելով ինծի՝ հասկնալու, որ Աստուած իսկապէս կը սիրէ զիս: Ան մէջբերեց Պօղոս առաքեալէն. «Համոզուած եմ թէ՛ ա՛ն որ սկսաւ բարի գործ մը ձեր մէջ. պիտի աւարտէ մինչեւ Յիսուս Քրիստոսի օրը» (Փիլ. 1. 6): Ես զգացի, թէ այդ խօսքերը ուղղակի ինծի ուղղուած էին:

Պօղոս գրեց Փիլիպպէ քաղաքի եկեղեցիին, որ հիմնած էր տասնամեակ մը առաջ, քաջալերելով զիրենք՝ որ իրենց սէրը Աստուծոյ եւ իրարու հանդէպ արմատաւորեն «գիտակցութեան եւ խոր դատողութեան մէջ» (Հմ. 9): Աստուած պիտի շարունակէ իր գործը իրենց մէջ եւ իրենց միջոցով, զանոնք լեցնելով «արդարութեան պտուղներով Յիսուս Քրիստոսի միջոցով» (Հմ. 11): Այդ ժամանակ չէի հասկնար այս խօսքերուն սկզբնական իմաստը, սակայն սկսայ ըմբռնել, որ իմ ինքնութիւնս՝ որպէս Աստուծոյ սիրուած մէկը, բխած էր՝ Յիսուսի սէրը ճանչնալէն եւ ընդունելէն:

Աստուած կը ցանկայ, որ մենք ընդունինք իր սէրը եւ թէ այս սէրը մեր մէջ աւելի ու աւելի առատանայ: Երբ Ան մեզ կը լեցնէ իր ուրախութեամբ եւ խաղաղութեամբ, մենք կը մեծնանք՝ ո՛չ միայն իր մասին մեր ունեցած գիտելիքներուն մէջ, այլեւ՝ իր մեր մէջ կատարած բարի գործին գիտակցութեամբ:

**Աղօթք** - Ստեղծող Աստուած, Դո՛ւն զիս ստեղծեցիր ու կը սիրես զի՛ս: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինծի՝ միշտ Զեգի նայելու՝ սեր, ուրախութիւն եւ օգնութիւն որոնելու համար: Ամէն:  
**Ինչպէ՞ս կ'ազդէ քու վրադ այն գիտակցութիւնը, թէ Աստուած պիտի աւարտէ իր գործը քու մէջդ:** Ինչպէ՞ս կրնաս աւելի խոր կերպով հիմնաւորել քու ինքնութիւնդ Զրիստոսի մէջ:

Եթե դարձի չգաք ու մանուկներու պես չըլլաք, բնա՛ւ պիտի չմտնէք երկինքի թագաւորութիւնը: [Մատթ. 18. 3]

## ՅԻՍՈՒՍԻ ԶԵՏԵԻԼ՝ ԽՈՆԱՐԴՈՒԹԵԱՄԲ

**Մ**եր տան մօտ կը գտնուի նշանաւոր պարտէզ մը, ուր յաճախ կ'երթանք զբօսանքի, ընտանիքիս խնամած փոքր տղուն հետ: Անոր սիրելի բաժինը՝ Մանկական Պարտէզն է, ուր ան կը մտնէ փոքր դռնակի մը մէջէն, որ ճիշդ էր չափով է, բայց ինծի համար փոքր է՝ հազիւ թէ կրնամ կձկտելով մտնել: Ան կը խնդայ, երբ ես ծունկի գալով՝ կ'անցնիմ այդ փոքր բացուածքին մէջէն՝ գինք հետապնդելու համար:

Այս փոքր պարտէզի դուռը՝ ինծի կը յիշեցնէ Յիսուսի առարկայական եւ կարեւոր դասը՝ Մատթէոս 18-րդ գլուխին մէջ, ուր՝ Իր մօտ կը կանչէ մանուկ մը, բացատրելու համար թէ ո՞վ կրնայ երկինքի թագաւորութիւնը մտնել (Հմ. 2): Այս համարձակ քայլ մըն էր, քանի որ Յիսուսի ժամանակ՝ մանուկ ըլլալ՝ կը նշանակէր, անկարեւոր եւ անտեսուած: Ի տարբերութիւն այսօրուան, անոնց կարծիքներն ու ցանկութիւնները՝ նշանակութիւն չունէին: Յիսուս այս պատկերը կ'օգտագործէ՝ մեր մարդկային յատկանիշը մատնանշելու համար՝ միշտ նկատուելու եւ իշխանութիւն եւ ազդեցութիւն ձեռք բերելու ճգտումը:

Ի հարկէ, Յիսուս չէր պահանջեր, որ Իր աշակերտները դարձեալ մանուկ դառնային, այլ կը մատնանշէր՝ այն յատկութիւնները, որոնք կը բնութագրեն Իր հետեւորդները: Մեծագոյն յատկանիշը խոնարհութիւնն է. երբ անձը «կը խոնարհեցնէ ինքզինք» (Հմ. 4) եւ կը ծառայէ ուրիշներուն:

Պարտէզի այդ փոքր դուռը՝ յիշեցում մըն է, որ խոնարհութիւնը բնական կերպով չի գար: Բայց Յիսուսի հաւատացողները կոչուած են այսպէս ըլլալու: Մենք պէտք է հետեւինք մեր Փրկիչին, որ «ունայնացուց ինքզինք, իր վրայ առաւ ծառայի մը կերպարանքը» (Փիլ. 2. 7):

**Աղօթք** - Սիրելի Զա՛յր, կը խնդրե՛մ՝ ներէ իմ ունեցած հպարտութեանս եւ անձնական շահախնդրութեանս համար:

Օգնէ՛ ինձի, որպէս մանուկ մը՝ Զու մօտդ վագելու: Ամէն:

**Կեանքիդ ո՞ր ոլորտներուն մէջ դուն քեզ առջեւ կը դնես՝ ուշադրութիւն գրաւելու համար: Ինչպե՛ս կրնաս արելի Յիսուսի նման ապրիլ:**

Իմ Յոզիս ձեր մէջ կը կենայ. մի՛ վախնաք: [Ան. 2. 5]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՎՐԱՅ ԿԵԴՐՈՆԱՆԱԼ

«Գոնէ՛ յաջողեցաւ», մտածեց Ճէս (Jess), ձեռքը բռնելով քննութեան թուղթը: Իր որդիին կ'օգնէր թուաբանութեան դասին մէջ, բայց իր գործը, առաւել տան գործերը, համատեղ ուսումը շարունակելը դժուարացուցած էին: Ճէս, յուսախաբ, յիշեց իր կիներ՝ Լիսան (Lisa), որ մահացած էր. «Լիսա՛, դուն գիտէիր ի՞նչ ընել: Ես տունը այնպէս չե՛մ կրնար պահել, ինչպէ՛ս դուն»:

Աւելի լայն տեսանկիւնէ, նման յուսախաբութիւն ըլլալու էր ա՛յն, ինչ որ Զօրաբաբէլ զգաց: Յուզայի կառավարիչը կոչուած էր Աստուծո՛ւմէ՛ Իսրայէլացիները առաջնորդելու՝ Բաբելոնի գերութենէն վերադառնալէ ետք՝ տաճարը վերակառուցանելու գործին մէջ: Երբ հիմերը դրին, «չատեր, որոնք ծեր ըլլալով Տէրոջ նախկին տունը տեսէր էին, բարձր ձայնով լացին» (Եզ. 3. 12): Սողոմոնի փառաւոր տաճարին յիշողութիւնը՝ կրկին ներկայ էր, երբ աւելի փոքր կառոյցի մը շինարարութիւնը վերսկսաւ: «Մերը այնքան լաւ չէ», պէտք է որ բոլորը, ներառեալ Զօրաբաբէլ, մտածած ըլլային:

«Բայց հիմա՛ զօրացի՛ր, ո՛վ Զօրաբաբէլ», կը պատգամէ Տէրը, ինչպէս ըրաւ միւսներուն, «Ես ձեզի հետ եմ: ... Իմ Հոգիս ձեր մէջ կը կենայ, մի՛ վախնաք» (Ան. 2. 4-5): Զօրաբաբէլ կրնար սրտապնդուիլ Աստուծոյ առաջնորդող ներկայութենէն, որ հիմնուած էր՝ իրենց հետ ըրած ուխտին վրայ (Հմ. 5): Աւելին, Աստուած ըսաւ. «Այս տանը վերջին փառքը առաջինէն մեծ պիտի ըլլայ» (Հմ. 9), ակնարկելով այն ժամանակին, երբ Ինք՝ Յիսուս, պիտի այցելէ տաճարը (Յովհ. 2. 13-25):

Երբեմն մենք ալ կ'ընկճուինք այն գործին մէջ, որուն Աստուած մեզ կոչած է, զայն համեմատելով այլ ժամանակներու աւելի տեսանելի արդիւնքներուն հետ: Սակայն թող մենք կեդրոնանանք Աստուծոյ ծրագրին վրայ այս պահուն, որովհետեւ գործն ու նպատակը՝ Իրն են, ո՛չ մերը:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կ'աղաչե՛մ՝ օգնե՛ ինձի ընդունելու այն գործը, որուն Դուն գիս կոչած ես ընելու: Ամէն:  
**Ի՞նչ գործի Աստուած քեզ կանչած է: Ինչպէ՛ս կրնաս կեդրոնանալ Իր վրայ՝ այդ գործը կատարելու ընթացքին:**



Ոչինչ բերինք աշխարհ, եւ բացայատ է թէ ոչինչ կրկանք դուրս հանել անկէ: [Ա. Տիմ. 6. 7]

## ԵՐԿԻՆՔԻ ՄԷՋ ՊԱՅՈՒԱԾ ԳԱՆՁԵՐ

**Ա**ռաջին անգամ օտար երկիր ճամբորդող մարդոց համար, սովորական է շատ բաներ հաւաքել՝ ճամբորդութեան պայուսակին մէջ: Վախ կայ՝ տունէն հեռու ըլլալու եւ բանի մը կարիքը զգալու: Բայց վերջերս լոյս տեսած յօդուած մը՝ կը խօսի ճամբորդութեան պայուսակները չափազանց լեցնելու խնդիրին մասին: Հեղինակը կ'ըսէ մազ լուալու օճառը կամ չորցնելիքը (որոնք կը գտնուին շատ հիւրանոցներու մէջ) տունը ձգել ինչպէս նաեւ աւելորդ ծանր կօշիկներ կամ գիրքեր: Ան կ'ըսէ, որ երբ ծանր պայուսակով սկսիս քայլել՝ Եւրոպայի քարայատ մայրերուն վրայ, պիտի ուզես որ այդքան բան քեզի հետ չբերել:

Իրականութեան մէջ, այս երեւոյթը շատ լաւ կերպով կը նմանցնէ այն ճամբորդական խորհուրդին, որ Պօղոս առաքեալ կու տայ. «Ոչինչ բերինք աշխարհ, եւ բացայատ է թէ ոչինչ կրնանք դուրս հանել անկէ» (Ա. Տիմ. 6. 7): Պօղոս այս մէկը կը կապէ շատ բան ունենալու խնդիրին հետ. «Անոնք որ կը փափաքին հարստանալ՝ կ'իյնան փորձութեան մէջ» եւ կը զգուշացնէ, որ չափազանց գանձեր կուտակելը «թակարդ» մըն է, որ կը տանի «աւերումի կամ կորուստի» (Հմ. 9): Հաւատացեալ մարդոց ճամբորդութիւնը տարբեր ուղղութեամբ է, ուր բոլոր անհրաժեշտ բաները՝ կը տրուին Աստուածմէ, «ամէն բան կու տայ մեզի ճոխութեամբ՝ վայելելու համար» (Հմ. 17):

Գուցէ այսօր ալ լա՛ւ յիշեցում մըն է, որ կեանքի ընթացքին ինչ որ կը կուտակենք՝ անիմաստ են: Չենք կրնար գանոնք մեզի հետ տանիլ: Սակայն Պօղոս կը յիշեցնէ մեզի, որ «առատաձեռն եւ ուրիշներուն կարիքներուն հաղորդակից ըլլանք, ապագային համար լաւ հիմ դնելով իբր պահեստ» (Հմ. 18): Ահաւասիկ՝ ամենէն լաւ ճամբորդական խորհուրդը՝ «ճշմարիտ՝ յաւիտենական կեանք»ն է (Հմ. 19):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, օգնէ՛ ինձի՝ փոխելու իմ յարաբերութիւնս նիւթերու եւ ստացուածքներու հետ: Օգնէ՛ ինձի՝ առատաձեռն ըլլալ՝ ուրիշներուն հանդէպ: Ամէն **Ինչպէ՞ս կրնաս «աւելի քիչ ծրարել» յաւիտենականութեան համար: Ի՞նչ գանձեր կրնաս հաւաքել երկինքը:**

Ուրեմն ջանա՛նք մտնել այդ հանգստավայրը, որպեսզի ո՛չ մեկը իյնայ: [Եբ. 4. 11]

## ՎԵՐԱԿԱՆԳՆՈՂ ՀԱՆԳԻՍ

**Տ** ննդեան խնճոյքի մը ընթացքին, հինգ տարեկան Միան՝ հաճոյքով խաղաց, երգեց «Ծնունդդ Շնորհաւոր» երգը. ուտելով կարկանդակը ու դիտելով իր ընկերուհիին՝ ընծաները բանալը: Երբ բոլորը դուրս ելան խաղալու, Միան ըսաւ. «Մամ, ե՛ս պատրաստ եմ տուն երթալու»: Անոնք շնորհակալութիւն յայտնեցին հիւրընկալողին, եւ երբ դուրս ելլան կարողիէն, Միային մայրը հարցուց որն էր իր օրուայ ամենալաւ պահը: «Ելլելը», պատասխանեց Միան: Ժպտելով, քունի անցաւ դեռ անկիւնը չզարցած:

Եթէ նոյնիսկ չենք գիտակցիր մեր յոգնութեան, բոլորս ալ ֆիզիքական՝ մտաւոր եւ զգացական հանգիստի կարիքը ունինք: Աստուած կ'ընծայէ նաեւ աստուածային հանգիստ՝ երբ կ'ընդունինք Քրիստոսի միջոցով փրկութեան բարի լուրը, եւ երբ կը վայելենք օրապահիկ հոգեւոր հանգիստ՝ Սուրբ Հոգիին առաջնորդութեամբ՝ Քրիստոսի հաւատքով ապրելու շնորհիւ: Անոնք, որոնք Աստուծոյ վրայ կը դնեն իրենց վստահութիւնը, կրնան ապաւինիլ իր անվերջ ներկայութեան, անսահման ուժին եւ անփոփոխ խոստումներուն: Քրիստոսի խաչին վրայ կատարած գործով փրկուած՝ մենք կրնանք հանգչիլ իր բաւարարութեանը խաղաղութեան մէջ (Եբ. 4. 1-4): Այս աստուածային հանգիստի փորձառութիւնը կրնանք ունենալ՝ իբրեւ կատարուած խոստում, հիմա եւ յաւիտեան, երբ Յիսուս վերադառնայ (Հմ. 5-8):

«Ա՛ն որ մտաւ անոր հանգստավայրը, ի՛նք ալ հանգստացաւ իր գործերէն, ինչպէս Աստուած՝ իրեններէն» (Հմ. 10): Քրիստոսի մէջ ապահովուած՝ կրնանք ապրիլ յոյսով լեցուն կեանք մը՝ յանձնուածութեամբ եւ սիրով հնազանդութեամբ վստահելով Անոր: Միայն Ա՛ն կ'ընծայէ վերականգնող հանգիստ երէկ, այսօր եւ յաւիտեան:

**Աղօթք** - Հաւատարիմ Աստուած, շնորհակալ եմ՝ որ Դու ես իմ յաւիտենական հանգիստի վայրս: Ամէն:

**Ինչպէ՞ս Աստուծոյ հաւատալը կը հանգչեցնէ քեզ փրկութեան վստահութեան մէջ եւ իւրաքանչիւր օր՝ ֆիզիքապէս, զգացացկօրէն եւ մտաւորապէս հանգստանալով: Ի՞նչը քեզ արգիլած է անցեալին՝ Աստուծոյ խոստումներուն մէջ հանգչելու:**



Արդարեւ պզտիկ սկզբնաւորութիւններուն օրը արիամարիողները պիտի ուրախանան՝ երբ տեսնեն անագաքարը Չօրաբաբէլի ձեռքին մէջ [Չաք. 4. 10]

## ՊԶՏԻԿ ՍԿԶԲՆԱԻՈՐՈՒԹԻՒՆՆԵՐ

1848 թուականին, ճարտարագէտ՝ Չարլզ Էլլէթ Կրտսեր (*Charles Ellet Jr.*)՝ տարակուսած էր՝ ինչպէս սկսիլ առաջին կամուրջի շինութիւնը, Նիակարա (*Niagara*) ջրվէժի ձորակին վրայ: Ինչպէ՞ս պիտի կարենային լար մը հասցնել գետին միւս ափը: Երազ մը տեսնելէ ետք, Չարլզ որոշեց թռուցիկ թոցնելու մրցոյթ մը կազմակերպել: Ամերիկացի պատանի մը, Հօման Ուալշ (*Homan Walsh*), շահեցաւ հինգ տոլար, երբ իր թռուցիկը իջաւ գետին միւս կողմը, Ամերիկայի ափին: Հօմանի թռուցիկի լարը կապուեցաւ ծառի մը, ու անով քաշեցին թեթեւ պարան մը՝ գետին վրայ, ապա ակելի ծանր պարաններ, մինչեւ որ վերջապէ՛ս ծանր մետաղալար մը հաստատուեցաւ ձորակին վրայ: Ահա՛ այսպէս սկիզբ առաւ Նիակարայի Առկախեալ Կամուրջի շինութիւնը:

Նիակարայի այս կամուրջի մարտահրաւէրն ու աննշան սկիզբը՝ կը նմանին այն դժուարութիւններուն, որոնք գիմազբաւեցին Չօրաբաբէլը եւ ժողովուրդը՝ երբ ետ դարձան Բաբելոնի գերութենէն ու սկսան տաճարը վերակառուցել: Հրեշտակ մը արթնցուց Չաքարիա մարգարէն պատգամ մը տալու համար, որ ոչինչ պիտի խափանէ Աստուծոյ գործը ու պիտի իրականանայ՝ «Իր հոգիով» (Չաք. 4. 6): Անոնցմէ ոմանք, որոնք տեսած էին Սողոմոնի փառաւոր տաճարը, կը վախնային՝ որ նոր տաճարը աննշան պիտի թուէր (Եգ. 3. 12): Հրեշտակը քաջալերեց Չաքարիան եւ ըսաւ. «Արդարեւ Պզտիկ սկզբնաւորութիւններուն օրը մի արհամարհէք», որովհետեւ Աստուած պիտի «ուրախանայ» տեսնելով՝ որ գործը սկսած է (Չաք. 4. 10):

Թէեւ Աստուծոյ մեզի վստահած աշխատանքները երբեմն աննշան կամ փոքր կրնան թուիլ, մենք կրնանք վստահ ըլլալ, որ Աստուած կը գործէ նաեւ փոքր բաներով՝ ինչպէս՝ թռուցիկի լարով, Իր մեծ նպատակը կատարելու համար:

**Աղօթք** - Յայր, շնորհակալ եմ, որ հաւատարիմ ես Քու ծրագիրներուդ մէջ: Ամէն:

**Ինչպէ՞ս կ'ազդէ քեզ վրայ իմանալը որ Աստուծոյ գործերը շատ անգամ փոքր կը սկսին:** Ինչպէ՞ս կրնաս վստահիլ Իր հաւատարմութեան:

Ո՛չ մեկ բան ըրեք հակառակութեամբ կամ սևափառութեամբ. հապա՛ խոնարհութեամբ ուրիշը ձեզմէ գերազանց համարեցէք: [Փիլ. 2. 3]

## ԱՂԲԻՒՐ՝ ԹԷ ԿՈՅՈՒՂԻ

**Ե**րբեմն՝ իմաստութեան նշոյլ մը մեզի կը հասնի՝ ամենէն աննախատեսելի պահին: Նման բան մը պատահեցաւ, երբ վերջերս կը կարդայի յօդուած մը՝ ամերիկացի Ֆուլթայօլիստ Թրաւէս Գէլսիի (Travis Kelce) մասին: Զայրացած մարզիչ մը անոր ըսած էր. «Ամէն մարդու, որ կը հանդիպիս այս աշխարհին մէջ, կամ աղբիւր մըն է կա՛մ ալ կոյուղի մը: Մէկը կը կրէ՝ միւսը կու տայ»: Հաւանաբար կրնաս գուշակել, թէ Գէլսին այդ ժամանակ որ մէկն էր:

Մեզմէ շատերուն մէջ այդ երկու տարրերն ալ կան՝ աղբիւր եւ կոյուղի: Բայց որեւէ տուեալ պահին, մեր վարքագիծը աւելի կը նմանի մէկուն: Իսկ Քրիստոսի հետեւիլը՝ կը նշանակէ աւելի աղբիւր ըլլալ՝ եւ աւելի քիչ՝ կոյուղի:

Այս գաղափարը կը տեսնեմ Փիլիպպեցիս Բ. գլուխին մէջ ալ, ուր Պօղոս կը հրաւիրէ մեզ նմանիլ Յիսուսի խոնարհութեան եւ ուրիշներուն վրայ կեդրոնանալու: Պօղոս կը հակադրէ այն վարքագիծը, որ կ'առնէ ուրիշներէն՝ եւ այն, որ կը լեցնէ զիրենք. «Ո՛չ մէկ բան ըրէք հակառակութեամբ կամ սնափառութեամբ. հապա՛ խոնարհութեամբ ուրիշը ձեզմէ գերազանց համարեցէք: Իւրաքանչիւրը թող նկատի չառնէ միայն իր շահը, այլ նաեւ ուրիշներո՛ւնը» (Հմ. 3-4): Քիչ մը անդին՝ նոյն գլուխին մէջ ան կ'աւելցնէ. «Ըրէ՛ք ամէն ինչ՝ առանց տրտունջներու եւ առարկութիւններու» (Հմ. 14):

Ի՞նչ բանի կը նմանի՝ կոյուղի ըլլալը: Ինքնակեդրոն, հպարտ, անդադար դժգոհացող եւ վիճաբանող: Իսկ ինչի՞ կը նմանի աղբիւր ըլլալը: Պօղոս Տիմոթէոսի համար կ'ըսէ. «Անոր նման ո՛չ մէկ սրտակից ունիմ, որ անկեղծաբար հոգայ ձեզ» (Հմ. 20):

Մենք այսօր աւելի աղբիւր ենք, թէ՛ աւելի՛ կոյուղի: Կ'արժէ մտածել, երբ կը փափաքինք օրհնել ուրիշներուն:

**Աղօթք** - Յայր, կ'աղաչեմ՝ օգնէ՛ ինձի ըլլալ աղբիւր մը, որ քաջալերանք եւ յոյս կը փոխանցէ այն բոլորին, որոնք կը հանդիպին ինձի: Ամէն:

**Ի՞նչն է պատճառը, որ երբեմն կոյուղի կը դառնանք ըստ յարաբերութիւններուդ մէջ:** Ինչպէ՞ս կրնաս աղբիւր ըլլալ՝ ուրիշներուն համար:

Առատաձեռնութեամբ անոր տուր, եւ անոր տալու ատենդ սիրտդ թող չդժգոհի: [Բ. Օր. 15. 10]

## ԵՐԲ ՍԷՐԸ ՅԱՅՏՆՈՒԻ

«Ինչո՞ւ կու լաս»: Այս հարցումը հարցուց կամաւոր մը՝ Քրիստոնեայ Օգնութեան Կազմակերպութենէն՝ կնոջ մը, որ արցունքներ կը թափէր: Անոնք կ'օգնէին անոնց, որոնց տուները քանդուած էին՝ Հէյլէն Փոթորիկէն (Hurricane Helen): Կինը պատասխանեց. «Ես չեմ լար, որովհետեւ ամէն բան կորսնցուցի: Կու լամ, որովհետեւ սէրը յայտնուեցաւ»:

Աստուծոյ սիրտը կը յայտնուի Իր ցանկութեամբ՝ որ մենք օգնենք կարիքաւորներուն: Երբ Մովսէս Տէրոջ հրահանգները կու տար Իսրայէլի ժողովուրդին, նախքան խոստացուած երկիր մուտք գործելը, ըսաւ. «Սիրտդ մի՛ կարծրացնէր ու ձեռքդ մի՛ գոցեր աղքատ եղբօրդ. հապա ձեռքդ անոր լա՛յն բաց, եւ անոր փո՛խ տուր՝ իր ունեցած կարօտութեան բաւելու չափ» (Բ. Օր. 15. 7-8): Իսրայէլացիներու սիրտը պէտք է արտացոլէր՝ Աստուծոյ սիրտը. «Առատաձեռնութեամբ անոր տուր, եւ անոր տալու ատենդ սիրտդ թող չդժգոհի» (15. 10):

Թէ՛ աղէտալի դէպքերու մէջ, թէ՛ առօրեայ կեանքին, երբ կու տանք կարիքաւորներուն մեր ունեցած օրհնութիւններէն, կը յայտնենք Աստուծոյ Որդիին սէրը, որ եկաւ «բարի լուրը տալու աղքատներուն» (Ղուկ. 4. 18): Իսկութեան մէջ՝ Աստուած կը խոստանայ՝ որ «պիտի օրհնէ» անոնց, որոնք կը բաժնեն Իր անչափահարնդիր սէրը՝ ուրիշներու հետ (Բ. Օր. 15. 10), թէ այս կեանքին մէջ, եւ թէ յաւիտենականութեան մէջ (տե՛ս Ղուկ. 14. 4): Մենք տակաւին չենք տեսներ Աստուած, բայց ուրիշները կրնան նշմարել նշոյլ մը՝ երբ մենք կը կրկնենք Իր գթութիւնը ու կարեկցութիւնը: Թող այսօր Իր սէրը երեւնայ մեր բարութիւններուն միջոցով:

**Աղօթք** - Գթասիրտ եւ առատաձեռն Յայր, կ'աղաչեմ՝ օգնէ՛ ինծի, որ սրտաբաց օգնեմ ուրիշներուն, որպէսզի անոնք Քու սիրոյդ լոյսը տեսնեն իմ մէջս: Ամէն:

**Ինչպէ՞ս Աստուած ցոյց տուաւ քեզի Իր գթութիւնը, երբ կարիքի մէջ էիր:** Այսօր ինչպէ՞ս կրնաս Յիսուսի սէրը ցոյց տալ մէկու մը, որ կարիքներ ունի:

Փլուզումեն առաջ մարդուն սիրտը կը խրոխտանայ: [Առ. 18. 12]

## ՀՊԱՐՏՆԵՐԸ ԻՆՉՊԷՍ ԿԻՅՆԱՆ

**Ճ**ան Թէյլըր (John Taylor)՝ 1700-ական թուականներուն Բրիտանացի ակնաբոյժ մըն էր, որուն գորոզութիւնը մղեց զինք սուտ ու փառաւոր համբաւ ստեղծելու: Ան հետապնդեց նշանաւոր անձեր ու դարձաւ ճորճ Բ. (George II) Թագաւորի անձնական ակնաբոյժը: Թէյլըր՝ շրջեցաւ երկիրը՝ բժշկական ներկայացումներ կատարելով, որոնք խոստացան հրաշագործ բժշկութիւններ: Շատ յաճախ՝ գիշեր ատեն փախաւ գիւղերէն գրպանները լեցուն՝ գիւղացիներու դրամներով: Սակայն արձանագրութիւնները ցոյց կու տան, թէ Թէյլըր խաբեբայ մըն էր, որ հաւանաբար հարիւրաւոր հիւանդներ՝ կոյր ձգելու պատճառ եղած է: Պատմութիւնը զինք կը յիշէ՝ ոչ որպէս գիտական նշանաւոր դէմք, այլ որպէ՛ս՝ այն մարդը, որ կուրցուց ժամանակաշրջանի երկու մեծագոյն երաժիշտները՝ Պախ (Bach) եւ Հենտըլ (Handel):

Թէյլըր փառք եւ համբաւ փնտռեց, բայց իր ժառանգութիւնը կը բացայայտէ անոր սուտերը, ամօթն ու ցաւը՝ զոր պատճառեց: Առակաց գիրքը կը բացատրէ, թէ գոռոզ ինքնասիրութիւնը ինչպէս կործանումի կ'առաջնորդէ: Կը կարդանք. «Փլուզումէն առաջ մարդուն սիրտը կը խրոխտանայ» (18. 12): Թէյլըրի խայտառակութիւնը՝ մեզի կը զգուշացնէ, թէ գոռոզութիւնը կրնայ մեր կեանքը աւերել: Բայց անձի մը անմիտ վարքն ու խաբկանքը, նաեւ ուրիշներու վնաս կրնայ պատճառել (հմ. 6-7): «Գահավիժումը» իրապէս ահռելի է:

Երբ գոռոզ սիրտ մը մեզ եւ ուրիշները կը կործանէ, խոնարհ սիրտ մը՝ կը տանի դէպի իմաստալից եւ ուրախ կեանքի մը: Առակացը կ'ըսէ. «Փառքին առջեւէն խոնարհութիւն կ'երթայ» (հմ. 12): Եթէ եսասէր կերպով՝ միա՛յն մեր շահը հետապնդենք (հմ. 1), երբէ՛ք չենք գտներ այն ինչ որ կը ցանկանք ունենալ: Բայց եթէ սիրտը Աստուծոյ յանձնենք եւ ուրիշներու ծառայենք, Աստուած կը պատուենք ու Անոր բարութիւնը կը ցոլացնենք:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կ'աղաչեմ՝ խոնարհ սիրտ մը տուր ինձի եւ օգնէ՛, որ մերժեմ գոռոզ ու ամբարտաւան հոգին: Ամէն:  
**Դուն ինչպե՛ս տեսած ես, որ հպարտութիւնը գահավիժումի կը յանգեցնէ:** Ի՛նչ խոնարհութիւնը՝ ինչպէս պատուի կ'առաջնորդէ:

Մեր հին մարդը խաչուեցաւ անոր հետ, որ մեղքի մարմինը ոչնչանայ, որպէսզի այլեւս մեղքին ստրուկը չըլլանք: [Յոն. 6. 6]

## ՓՈՒՍԱՆԱԿՈՒԹԻՒՆԸ

**Ե**ղիան (*Elijah*) պատահաբար պատուե՛ց տասը տոլարի թղթադրամ մը՝ երբ ընկերներուն հետ կը խաղար: Բայց հայրը անոր հանդիմանելու փոխարէն, առաջարկեց փոխանակել պատուած դրամը՝ իր գրամապանկէն հանելով նոր թղթադրամ մը:

Եղիան՝ շփոթած հարցուց. «Ինչո՞ւ այդպէս պիտի ընէիր»: Հայրը բացատրեց. «Նախ՝ որովհետեւ դուն իմ որդիս ես: Եւ երկրորդ՝ այս կը յիշեցնէ, թէ Յիսուս ի՛նչ ըրաւ մեզի համար: Քանի որ Յիսուս եկաւ եւ իր կեանքը տուաւ մեր փոխարէն, հիմա՛ մենք կրնանք նոր կեանք մը ապրել»:

Ամէն մէկ մարդկային կեանք՝ Աստուծոյ համար արժէք ունի, որովհետեւ Ան մեզ ստեղծեց: Բայց մեր մեղաւոր բնութիւնը «մեղքի մարմինը» (Հոտմ. 6. 6), մեզ հեռու կը պահէ Աստուծոյ սրբութեան արժանի կեանք մը ապրելէ: Բայց Աստուած՝ իր մեծ սիրով, կամաւոր կերպով իր Որդին տուաւ մեր մեղքերուն դինը վճարելու համար: Մեր հին մարդը մեռաւ եւ փոխարէնը՝ Աստուած մեզի կը պարգեւէ նոր կեանք մը. «Որպէսզի այլեւս մեղքի ստրուկը չըլլանք» (Հմ. 6): Երբ կը յանձնուինք Աստուծոյ այս պարգեւին, վստահ կրնանք ըլլալ, որ թէեւ մեր հին անձը մեղաւոր ու փճացած էր՝ «որ ապականած է խաբեբայ ցանկութիւններով» (Եփ. 4. 22), հիմա մենք կը նորոգուինք՝ «արդարութեամբ եւ ճշմարիտ սրբութեամբ Աստուծոյ պատկերին համաձայն» (Հմ. 24):

Եղիային հայրը պատարաստ էր իր գրպանէն բան մը տալ, որովհետեւ կը սիրէ իր որդին: Բայց շատ աւելի հիանալի առաջարկ մըն է ա՛յն, որ Աստուած մեզի կու տայ՝ մեր կեանքի փրկութիւնը: Երբ ընդունինք այդ նոր կեանքը, մենք այլեւս նո՛յնը չենք ի՛նչ որ առաջ էինք:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ Զրիստոսի վրայ եղած հաւատքի միջոցով, ինձի ազատ կեանք առաջարկեցիր՝ մեղքէն փրկուած: Ամէն:

**Ի՞նչպիսին էր կեանքդ, երբ տակաւին չէիր ընդունած Յիսուսը՝ որպէս փրկիչ: Իսկ հիմա՛ ինչպէ՞ս կը նկարագրես գայն:**

Ան լա՛ւ գործ մը ըրաւ ինծի: [Մատթ. 26. 10]

## ՊԱՏՈՒԵԼ ՅԻՍՈՒՍԸ

**Ք**սան տուարի թղթադրամ մը եւ երկու թուղցիկներ՝ Յիսուսի մասին պատգամներով: Ահա՛ ինչ որ կար այն ծրարին մէջ, որուն վրայ գրուած էր. «Ճան Տէնիէլզ (John Daniels) Պատահական Բարութեան Օր»: Կին մը տուաւ զայն ինծի, երբ կը զբօսնէի համայնքային գուլէճի շրջափակին մէջ: Տարի մը առաջ, ինքնաշարժ մը զառկած էր Ճանին մահացու կերպով, այն պահուն երբ օգնութիւն կը ցուցաբերէր անտուն մարդու մը եւ Յիսուս Քրիստոսի սիրոյ մասին կը խօսէր անոր հետ: Ճանի վկայութեան ժառանգութիւնը, թէ՛ խօսքով եւ թէ՛ գործերով, այսօր ալ կ'ապրի՝ այդ կնոջ միջոցով, որու հանգիպեցայ այդ օրը, ինչպէս նաեւ Ճանի ընտանիքի մնացեալ անդամներուն մէջ:

Մատթէոս 26. 13-ին մէջ՝ կին մը՝ յաւերժացուած է Յիսուսի կողմէ այս խօսքերով. «Ճշմարտապէս կը յայտարարեմ ձեզի. Ամբողջ աշխարհի մէջ՝ ո՛ւր որ այս աւետարանը քարոզուի, ասոր ըրածն ալ պիտի պատմուի իր յիշատակին համար»: Այդ կինը սրտանց սիրով լեցուած, թանկարժէք իւղով օծե՛ց Յիսուսը (Հմ. 7): Այն ինչ որ ուրիշներու կողմէ սխալ հասկցուեցաւ ու քննադատուեցաւ՝ որպէս անիմաստ շռայլութիւն (Հմ. 8-9), Յիսուսի կողմէ՛ գնահատուեցաւ որպէս «լա՛ւ գործ մը» (Հմ. 10): Կնոջ թանկագին նուիրումը Աստուած գործածեց իւրայատուկ ձեւով, նոյնպէ՛ս ալ այսօր, երբ Աստուած մեր գործերը կը գործածէ՝ Իր նպատակներուն համար:

Այն ծրարը՝ որ ստացայ, վերանորոգեց իմ յանձնառութիւնս՝ փողոցներուն անկիւններուն կանգնած անձերուն համար օգտակար միջոցներ բաժնելու: Բայց Յիսուսը պատուելը՝ կրնայ տեղի ունենալ զանազան ձեւերով: Եկէ՛ք պատմենք ուրիշներուն Անոր մասին ու գործնականօրէն ցոյց տանք Անոր սէրը:

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, Զու կեանքդ զիս կը ներշնչե՛՛ աւելի սիրելու Զեզ: Խնդրե՛մ՝ օգնե՛ ինծի տեսնելու այն ճանապարհները, որոնց միջոցով կրնամ սիրոյս վկայութիւնը տալ Զեզի: Ամէն:  
**Ո՛վ ոգեւորած է քեզ՝ գործնական կերպով պատուելու Յիսուսը:**  
**Զեզի ի՛նչ բարութեան գործողութիւններու կրնայ մղել Անոր հանդէպ ունեցած սերդ:**

Մոռցած եմ ետեւի եղածները, եւ կը դիմեմ առջեւի եղածներուն: Կը հետապնդեմ նպատակակէտը» [Փիլ. 3. 13-14]:

## ՎԱՐԴԱՆԻ ՀԱԻՍՏՔՈՎ՝ ԴԷՊԻ ՄՐՑԱՆԱԿ

Հեռուստացոյցի «Հիանալի Մրցում» (Amazing Race) կոչուած ծանօթ յայտագիրը, կը ներկայացնէ ծրագիր մը, որու կը մասնակցին տասը զոյգեր, որոնք օտար երկիրներ կը շրջապահեն ուր կը մրցին գործածելով տարբեր փոխադրամիջոցներ. ինչպէս, սաւառնակ, շոգեկառք, ինքնաշարժ եւ հեծանիւ մէկ տեղէն ուրիշ տեղ մը երթալով՝ տեղեկութիւն առնելու յաջորդ մարտահրաւէրին համար: Նպատակը մէկ զոյգ մը վերջին կէտին հասնիլ է՝ միլիոններէն առաջ ու շահիլ մրցանակը:

Պօղոս առաքեալ բազմաթիւ Քրիստոնէական կեանքը՝ մրցումի մը, ընդունելով թէ ի՛նք տակաւին հասած չէ՛ նպատակակէտին: Ան ըսաւ. «Եղբայրներ, ես չեմ սեպեր թէ բռնած եմ: Հապա կ'ընեմ սա՛ մէկ բանը. մոռցած եմ ետեւի եղածները, եւ կը դիմեմ առջեւի եղածներուն: Կը հետապնդեմ նպատակակէտը» (Փիլ. 3. 13-14): Պօղոս ետեւ չնայեցաւ եւ չարտօնեց՝ որ իր անցեալի ճախողութիւնները՝ զինք կասեցնեն. ո՛չ ալ թոյլ տուաւ որ ներկային իր արձանագրած յաջողութիւնները՝ զինք բարեհաճեցնեն: Ան հետապնդեց նպատակակէտը օրէ օր աւելի նմանելով Յիսուսի:

Մենք ալ այսօր դէպի մրցանակ կը վազենք: Հակառակ մեր յաջողութիւններուն կամ ճախողութիւններուն, եկէ՛ք հետապնդենք մեր նպատակակէտը աւելիով Տէր Յիսուսի նմանելու: Մենք չենք մրցիր երկրային մրցանակի մը համար, այլ վերին յաւիտեանական կեանքի մրցանակին համար: Վարդան եւ իր ընկերները հաւատքով իրենց ասպարէզի ընթացքը կատարեցին հաւատարմութեամբ ու խիզախութեամբ: Հետեւաբար անոնք արժանացան փառաց պսակին: Անոնք հաւատքը պահեցին, իրենց ընթացքը կատարեցին եւ պատրաստ եղան իրենց կեանքը զոհելու «Վասն Քրիստոսի ու Վասն Հայրենեայ»:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, օգնէ՛ մեզի Վարդանի հաւատքով վերին մրցանակին վազելու:

**Բնաւ մի՛ հրաժարիր հաւատքի ու նահատակութեան մրցանակի մարտահրաւերէն: Վազէ՛, որպէսզի ստանաս կենաց պսակի մրցանակը:**

Հպատակեցէ՛ք Աստուծոյ: Դիմադրեցէ՛ք Չարախօսին, եւ ան պիտի փախչի ձեզմէ: [Յակ. 4. 7]

## ՈՒՇԱԴԻՐ ԵՂԻՐ

**Տ**արիներ շարունակ պա՛յքարելէ եւ լալով ա՛ղօթելէ ետք՝ Ֆրէնք (Frank) վերջապէս դադրեցաւ խմելէ: Ան՝ խմիչքէն իր մնայուն հրաժարիլը՝ կը վերագրէ Աստուծոյ ըրած գործին իր կեանքին մէջ: Բայց ան նաեւ կատարեց որոշ կարեւոր փոփոխութիւններ ալ: Այլեւս տունը ալքով չէր պահեր, ուշադրութեամբ կը հետեւէր իր մտածումներուն եւ տրամադրութիւններու նախանշաններուն եւ զգուշ կը մնար՝ որո՛շ պարագաներէ: Ֆրէնք յենեցաւ Աստուծոյ վրայ եւ գիտէր՝ որ պէտք է երբէ՛ք չթողու փորձութեան կամ մեղքի համար բաց դուռ մը:

Պետրոս առաքեալ զգուշացուց ըսելով. «Զգա՛ստ եղէք, արթո՛ւն կեցէք. որովհետեւ ձեր ոտիւր Չարախօսը կը շրջի մոնչող առիւծի պէս, փնտռելով թէ ո՛վ կլլէ» (Ա. Պետ. 5. 8): Պետրոս գիտցաւ, թէ մենք պէտք է հսկենք, որովհետեւ սատանային յարձակումները շատ անգամ անակնկալ կը կատարուին. երբ կարծես մեր կեանքը ամենալաւ վիճակին մէջ է, կամ երբ կը խորհինք՝ թէ երբէ՛ք որոշ փորձութիւններ պիտի չյայտնուին:

Յակոբ ալ իր ընթերցողներուն զգուշացուց եւ ըսաւ. «Հպատակեցէ՛ք Աստուծոյ: Դիմադրեցէ՛ք Չարախօսին» Երբ այդ ընէք, «ան պիտի փախչի ձեզմէ» (Յակ. 4. 7): Սատանային դէմ յաջող պայքարի լաւագոյն միջոցը՝ Աստուծոյ մօտ մնալն է: Երբ ընենք, Աստուած կը մօտենայ մեզի (հմ. 8) Իր Սուրբ Հոգիին միջոցով (Հռոմ. 5. 5): Յակոբ նաեւ այս մխիթարական խօսքը մեզի կու տայ. «Խոնարհեցէ՛ք Տէրոջ առջեւ, եւ ան պիտի բարձրացնէ ձեզ» (Յակ. 4. 10):

Բոլորս ալ կ'ունենանք դժուար պահեր մեր կեանքին մէջ՝ երբ կը փորձուինք կամ կը պայքարինք: Սակայն վստահ ըլլանք՝ Աստուած կ'ուզէ, որ յաղթենք եւ յաջողինք: Ան միշտ մեզի հետ է:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի՝ Զեզի մօտենալու, ո՛չ թէ Զեզմէ հեռանալու: Ամէն օր ըու առաջնորդութեանդ պէտք ունիմ՝ ճիշդ ճամբուն վրայ մնալու համար: Ամէն: Ե՛րբ կը զգաս՝ որ փորձութիւնը աւելի ուժգին է: Աստուած ինչպե՛ս օգնած է քեզի՛՝ այդ պահերուն մէջ:

Զեղ յաւիտենական սիրով սիրեցի: [Եր. 31. 3]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԶԱԻԻՏԵՆԱԿԱՆ ՍԻՐԵԼԻՆԵՐԸ

**Ա**մենայուզիչ եւ խորհրդաւոր սիրոյ նամակները գրուած են՝ երաժիշտ Լուտվիկ վէն Պէթհովընի (Ludwig van Beethoven) կողմէ: Այս նամակները միայն անոր մահէն ետք՝ 1827-ին յայտնաբերուեցաւ: Շտապ ձեռագրով գրուած նամակ մը՝ լեցուն է կրքոտ տողերով, ինչպէս. «Իմ յաւիտենապէս սիրելի: ... Կրնամ ապրիլ միայն լիովին քեզի հետ կամ բոլորովին առանց քեզի»: Յաւալիօրէն, կը թուի թէ այս նամակը երբէ՛ք չէր զրկուած, իսկ անոր սիրելիին ինքնութիւնը՝ մինչեւ այսօր անյայտ մնացած է:

Պէթհովընի նամակը՝ յուզիչ է ընթերցողներուն համար, որոնք կը նոյնանան այդ յուսահատ կարօտի զգացումին հետ: Մենք կը փնտռենք սէր եւ գոհացում՝ մարդոց մէջ, իրերու մէջ եւ փորձառութիւններու մէջ, որոնք չեն կրնար մեզ ամբողջապէս գոհացնել: Բայց՝ շատ աւելի հզօր եւ հաստատուն է Աստուծոյ սէրը՝ Իր ուխտի ժողովուրդին նկատմամբ: Մէր մը, որ ցո՛յց տուաւ ամբողջ մարդկութեան համար: Երէմիա մարգարէին միջոցով, Աստուած յայտնեց. «Քեզ յաւիտենական սիրով սիրեցի» (Եր. 31. 3): Աստուած Իր մեծ սիրով խոստացաւ ապագայ մը՝ հանգիստի եւ օրհնութեան (Հմ. 2) եւ բոլոր կործանած բաներուն՝ վերականգնումը (Հմ. 4): Թէպէտեւ ժողովուրդը բազմիցս մերժեց ու ըմբոստացաւ, Աստուած խոստացաւ իրենց դարձի բերել՝ Իր մօտ (Հմ. 9):

Շատ տարիներ ետք, այդ նոյն յաւիտենական սէրը մղեց Յիսուսը մահուան մեղաւորներուն փոխարէն, Իր սիրոյն մեր վերադառնալէն առաջ (Հռոմ. 5. 8): Մենք պէտք չունինք սէր որոնելու կամ վաստկելու: Մենք արդէն սիրուած ենք՝ յաւիտենական սիրով:

**Աղօթք** - Սիրող Աստուած, երախտապարտ եմ Զու սիրոյդ համար, որով անդադար կը հետապնդես զիս՝ յաւիտենական սիրով: Ամէն: **Ի՞նչպիսի ձեւերով սեր կը փնտռես այս աշխարհին մէջ: Իսկ Աստուած ի՞նչ ձեւերով ցոյց տուած է քեզի՝ Իր յաւիտենական սէրը:**

Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. «Սիրեցէ՛ք զիրար. ինչպէս ես սիրեցի ձեզ, դո՛ւք ալ սիրեցէ՛ք զիրար»: [Յովի. 13. 34]

## ԶԳՈՒՇ ՎԱՐՈՒԷՅԷՔ

**Ս**տրատիվարիոս (*Sradivarius*) ջութակները, չելլօները եւ կիթառները աշխարհի ամենէն արժէքաւոր երաժշտական գործիքներէն կը դասուին: Ստեղծուած՝ 17-18-րդ դարերուն ընթացքին, այս գործիքները հազուադիւրս են եւ անգին: Նման թանկարժէք բան մը՝ կը պահանջէ ամենախստութեամբ՝ զգուշութիւն ընելու: Հետեւաբար, երբ Ստրատիվարիոսի չելլօ մը՝ աւելի քան 20 միլիոն տոլարի արժողութեամբ, թափով ի՛նչպէս սեղանէն՝ լուսանկարահանումի ժամանակ, այդ իրապէ՛ս ցնցիչ դէպք մը եղաւ:

Ինչպէս որ Ստրատիվարիոսի հետ պէտք է զգուշութեամբ վարուիլ, նոյն ձեւով ալ մեր յարաբերութիւնները ըլլալու են: Մենք պէտք է սիրենք ուրիշները, որովհետեւ Քրիստոս մեզի ցոյց տուաւ իր սէրը: Յովհաննու 13. 34-ին մէջ՝ Յիսուս իր աշակերտներուն կու տայ պատուիրան մը, որ մեծ ուշադրութիւն կը պահանջէ. «Նոր պատուիրան մը կու տամ ձեզի. Սիրեցէ՛ք զիրար, ինչպէս ես սիրեցի ձեզ, դո՛ւք ալ սիրեցէ՛ք զիրար»: Ինչո՞ւ Յիսուս այս պատուիրանը՝ նո՛ր կոչեց: Որովհետեւ անիկա հիմնուած է այն սիրոյ վրայ, որ Յիսուս ցոյց տուաւ մարդոց: Այս նոր պատուիրանը անզգուշ կամ պատահական չէր, այլ՝ զիտաւորեալ, թանկարժէք եւ զոհաբերական: Այս սիրով ապրիլը պիտի առաջնորդէր զիրենք աշակերտութեան, անձնուրացութեան եւ հաւանաբար մահուան՝ Քրիստոսի սիրոյ վկայութեան համար: Այդ սէրն է, որ զիրար կապող ուժը պիտի ըլլար՝ Քրիստոսի մեկնումէն ետք՝ դժուար ու թշնամական աշխարհին մէջ ապրելու համար: Յիսուս ըսաւ. «Ասո՛վ բոլորը պիտի գիտնան թէ՛ իմ աշակերտներս էք, եթէ սէր ունենաք իրարու հանդէպ» (Հմ. 35):

Եկէ՛ք, սիրենք ուրիշները զգուշութեամբ ու զոհողութեամբ - արտացոլացնելով Յիսուսի այդ թանկագին ու անգին սէրը:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ, որ զի՛ս զոհաբերական սիրով սիրեցիր: Կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի, որ սիրեմ ուրիշներն ալ՝ նոյն ձեւով: Ամէն: Ինչո՞ւ ոմանց սէր ցոյց տալը՝ դժուար կը թուի: Ի՛նչ կրնայ քեզի օգնել՝ սիրել զիրենք այն ձեւով, ինչպէս որ Յիսուս ցոյց տուաւ իր սէրը:

Իսկ ինք (Յակոբ) անոնց առջեւ անցաւ, ու եօթը անգամ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեց՝ մինչեւ որ իր եղբօր մօտեցաւ: [ԾՍ. 33. 3]

## ԽՈՆԱՐՀՈՒԹԻՒՆ ԿՐ ՊԱՅԱՆՁԷ

**Ե**րբ կը մեծնայի, զարմիկներս, որոնք Հազիւ երկու մղոն հեռու կ'ապրէին, թոյլատրուած չէին մեր ընտանիքին հետ Հաղորդակցելու: Չէին մասնակցեր մեր ընտանեկան Հաւաքներուն եւ նոյնիսկ չէին խօսեր մեր հետ տեղական մթերքի խանութին մէջ: Իրենց ծնողները ըսին, որովհետեւ այդ ժամանակ մենք եկեղեցի չէինք երթար եւ կրնայինք վատ ազդեցութիւն ունենալ իրենց վրայ: Ի՞նչ զարմանալի էր, երբ տարիներ ետք, զարմիկներէս մէկը մասնակցեցաւ իմ մեծ եղբօրս յուղարկաւորութեան արարողութեան: Ան մօտեցաւ իւրաքանչիւրիս եւ խոնարհութեամբ ներողութիւն խնդրեց՝ իրենց անցեալի վերաբերմունքին համար: Այդ պահէն սկսեալ, մեր կապը սկսաւ վերականգնելու:

Յակոբ կարիքը ունէր խոնարհ սրտի՝ երկուորեակ եղբօրը՝ Եսաւին հետ յարաբերութիւնը վերականգնելու համար: Յակոբ, որպէս երկրորդ զաւակ, խորամանկութեամբ խաբէց Եսաւին՝ գողնալով անոր անդրանիկութեան իրաւունքը (ԾՆ. 25. 19-34) եւ խաբէց իր ծերացած հօրը՝ գրաւելով առաջին որդիի օրհնութիւնը (26. 34 – 27. 40): Եսաւ սաստիկ զայրացած, սպառնաց Յակոբը սպաննել եւ Յակոբ ստիպուած փախաւ այլ երկիր:

Տարիներ ետք, Յակոբ ուզեց վերադառնալ, սակայն կը վախնար, թէ եղբօր հետ իր խոր բաժանումը՝ առանց արեան պիտի չլուծուէր (32. 6-8): Երբ վերջապէս հանդիպեցան, Յակոբ խոնարհութեամբ «եօթը անգամ մինչեւ գետին խոնարհելով երկրպագեց՝ մինչեւ որ իր եղբօր մօտեցաւ» (33. 3): Կը վախնար, որ Եսաւ զինք պիտի սպաննէ, բայց Եսաւ վազեց զինք դիմաւորելու եւ զայն գրկեց (Հմ. 4):

Անկախ թէ մենք վնաս տուած ենք մէկուն, թէ վնաս կրած մէկէն, վերականգնումը կը պահանջէ խոնարհութիւն, բաց սիրտ եւ շատ անգամ ալ՝ բազում աշխատանք:

**Աղօթք** - Հայր, պահէ զիս՝ չկամութենէ կամ դառնանալու զգացումներէ: Օգնէ՛ ինձի՝ ներելու ուրիշներուն եւ ներողութիւն խնդրելու: Ամէն: **Քու կեանքիդ մէջ՝ ի՞նչ յարաբերութիւններ կրնան կարիքը ունենալ վերականգնումի: Ինչպէ՞ս կրնաս սկսիլ այդ գործընթացը:**

Ան որ կը հաւատայ Որդիին՝ ունի յաւիտենական կեանքը. իսկ ա՛ն որ չ՛անսար Որդիին՝ պիտի չտեսնէ կեանքը: [Յովի. 3. 36]

## ՊԷԼԻՆ ՅԱՒՏՔԸ

**Ի**զօպէլ Գան (*Isobel Kuhn*)՝ ծանօթ որպէս ‘Պէլ’ (*Belle*)՝ չէր ուզեր որեւէ կապ ունենալ իր ծնողներուն հետ՝ Յիսուսի հանդէպ իրենց ունեցած հաւատքին համար: Գոլէճի տարիներուն, ինքզինք հռչակեց որպէս անաստուած եւ փորձեց ապրիլ առանց Աստուծոյ: Բայց երբ իր ընկերէն բաժնուեցաւ՝ սկսաւ աւելի եւ աւելի ընկճուիլ ու մտաւ մուկ յուսահատութեան մէջ: Մտածեց նոյնի՛սկ՝ անձնասպան ըլլալու մասին:

Այդ խոր յուսահատութեան պահերուն մէջ, Պէլ մտաբերեց ծնողներուն ուրախութիւնը Քրիստոսի մէջ, եւ՝ ի վերջոյ, իր հաւատքի պայքարներուն մէջ՝ վստահեցաւ Յիսուսի որպէս Փրկիչ: Յետագային՝ լսեց մարդու մը խօսիլը՝ Չինաստանի ժողովուրդին մասին՝ որ երբէ՛ք աւետարանը լսած չեն: Ան ուզեց երթալ այնտեղ ու պատմել անոնց Յիսուսի մասին: Ոմանք փորձեցին զինք վհատեցնել՝ վտանգներու պատճառով: Բայց ան գնաց: Գոլէճին մէջ ծանօթացած երիտասարդի մը հետ, որ յետագային անոր հետ ամուսնացաւ եւ Պէլ իր ամբողջ կեանքը նուիրեց՝ Չինաստանի եւ Թայլանտի ժողովուրդներուն մէջ աւետարանը տարածելու: Հազարաւոր մարդիկ հաւատացին Յիսուսի եւ այս կնոջ՝ Պէլի ժառանգութիւնը կը շարունակուի այդ երկիրներուն մէջ:

Ո՞վ էր՝ որ այս երիտասարդ կնոջ նոր կեանք ու յոյս տուաւ եւ հետը քայլեց՝ իր դժուարութիւններուն մէջ: Յիսո՛ւս:

Արդեօ՞ք դուն ալ կը մտածես, թէ ի՞նչ է կեանքին իմաստը: Մէկ կողմէ քեզի կ’երեւի, թէ կասկածի տակ կը դնես գոյութիւնդ: Դարձի՛ր դէպի Քրիստոս - «Աստուծոյ Միածին Որդիին» (Յովհ. 3. 18), որ մեռաւ քեզի համար (Հռոմ. 5. 8): Ան այնքա՛ն շատ կը սիրէ քեզ, որ քեզի կու տայ յաւիտենական կեանք (Յովհ. 3. 16): Այո՛, «Ան որ կը հաւատայ Որդիին, ունի յաւիտենական կեանքը» (3. 36):

**Աղօթք** - Սիրելի Յիսո՛ւս, շնորհակալ եմ՝ այն նպատակին եւ ծրագիրներուն համար, որ ունիս իմ կեանքիս մէջ: Ամէն:  
**Ի՞նչ ձեռով Աստուած իմաստ կու տայ քու կեանքիդ:** Ի՞նչ կը նշանակէ քեզի համար՝ յոյս գտնել Քրիստոսի մէջ:

Ձեզի պիտի հատուցանեմ այն տարիներուն պտուղները, որոնք մարախը, ջորեակը, գրուիճն ու խառնիճը կերան: [Յվլ. 2. 25]

## ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆ ՎԵՐԱԿԱՆՎՆՈՒՄ

**Մ**իրտս ծանրացաւ: Միտքս սկսաւ պտուտկիլ: Ընկեր մը, որ կ'օգնէր կարգաւորելու համակարգիչս (laptop), սխալմամբ ջնջե՛ց բոլոր լուսանկաներս ու տեսաներիզներս, զոր վերջերս փոխանցած էին անոր մէջ: Տարիներու թանկագին յիշատակներ՝ ընտանիքիս եւ բարեկամներուս հետ, ակնթարթի մը մէջ՝ անհետացա՛ն: Խուճապի մատնուեցայ: Երբէ՛ք չէի կրնար վերստեղծել այդ յիշատակելի սրտաշարժ պահերը՝ տօնական օրերու, ճամբորդութիւններու ու յատուկ առիթներու: Աւելի՛ն՝ ես, որ խի՛ստ զգացական եմ, շատ մօտ էի ամբողջական յուսահատութեան: Բայց ընկերոջս հաւատքը չկորսուեցաւ: Ան ըսաւ թէ յո՛յս ունի, որ կարենայ վերականգնել բոլոր ծրարները: Եւ բարեբախտաբար քանի մը տազնապալի ժամեր վերջ՝ ցնծութեամբ տեսայ, թէ այդ յիշատակները դարձեալ երեւցան:

Ե՛ս՝ միայն քանի մը ժամ անհամբեր սպասեցի, բայց վախը շատ իրական էր: Կորստեան զգացումը՝ կրնայ անհանգստացնող ու ցաւալի ըլլալ: Յովել 2-ին մէջ, Աստուծոյ պատգամաբերը՝ կը հրաւիրէ Յուդայի ժողովուրդը՝ ապաշխարութեան, որովհետեւ մարախներու բազմութիւն մը կործանած էր անոնց արտերը, այգիները եւ ծառերը: Մարգարէն նախագգուշացուցած էր ժողովուրդը, թէ անոնց ապստամբութեան հետեւանքները՝ ծանր պիտի ըլլային: Բայց Աստուած չձգեց զիրենք: Ան խոստացաւ օգնել եւ վերականգնել, եթէ վստահին Իրեն. «Ձեզի պիտի հատուցանեմ այդ տարիներուն պտուղները, որոնք մարախը կերաւ» (2. 25):

Աստուած վերականգնե՛ց Յուդան, երբ անոնք Իրեն դարձան: Աստուած կը ցանկայ վերականգնել նաեւ քեզ:

Ի՞նչ պայմաններու մէջ ալ ըլլաս, կրնաս դառնալ Աստուծոյ եւ վստահիլ Իրեն: Ան է «Տէրը քու Աստուածդ, եւ ուրիշ մը չկայ» (Հմ. 27): Ան հաւատարիմ է օգնելու քեզի՝ վերագտնելու կորսուածը եւ կեանքի ամբողջ նպատակը՝ Իր հետ հաղորդակցութեամբ ապրելու:

**Աղօթք** - Յայր, շնորհակալ եմ՝ որ վերականգնեցիր զիս: Ամէն: Ի՛նչ ձեւերով Աստուած քեզի օգնեց կորստեան պահերուն: Իսկ հիմա՝ քու այս վիճակիդ մէջ, ինչպե՛ս կրնաս դառնալ Իրեն:

Եթե քու եղբայրդ աղքատակայ, օգնե՛ անոր ..., որպէսզի քովդ ողջ մնայ: [Ղեւ. 25. 35]

## ՅՈՐԴԱՌԱՏ ՍԵՐ

**Թ**ատ (Todd) հրաւիրեց իր փոքր եղբայրը՝ Ալէքսը (Alex), որ նոր աւարտած էր գոլէճը, իր հետ բնակելու՝ այն տունին մէջ, որ ինք շինած էր: Ան ուզեց օգնել եղբօրը, որպէսզի ան՝ որոշ նիւթական հիմք մը ունենայ, թոյլ տալով՝ որ ժամանակ մը առանց վարձքի բնակի: Վեց ամիսներ ետք, Թատ խնդրեց Ալէքսէն, որ վարձք սկսի վճարել: Տարիներ վերջ, երբ Ալէքս առաջարկ մը ներկայացուց տունի մը եւ ընդունուեցաւ, Թատ զինք զարմացուց յայտնելով, որ բոլոր այդ տարիներուն իր վճարած վարձքը խնայողութեան հաշիւի մը մէջ գրած էր: Եւ այդ բաւական գումարը՝ այժմ իրեն կը պատկանի: Ալէքս արտասուեցաւ ստանալով այդ յորդառատ ու շոյալ նուէրը:

Ղեւտացւոց 25-րդ գլուխին մէջ, Աստուած Մովսէսին յանձնարարեց Իսրայէլացիներուն համար, որ հոգածութեամբ վերաբերին կարիքաւորներուն, «որ իրենց մօտ ապրին» (Հմ. 35): Այս պատուիրանը՝ մէկ մասն է Աստուծոյ «Յոբելիական տարուան» հաստատումին (Հմ. 10), երբ այդ տարուան ընթացքին պարտքերը կը ներուին, աղքատները օգնութիւն կը ստանան եւ ստրուկները՝ ազատ կ'արձակուին (Հմ. 23-55): Աստուած յայտարարեց, թէ սիրով զո՛ւրս հանեց իր ժողովուրդը Եգիպտոսէն, որպէսզի տա՛յ անոնց՝ Քանանու երկիրը եւ ըլլայ անոնց Աստուածը (Հմ. 38): Ան տուաւ նոր հայրենիք մը եւ ա՛յժմ իր ժողովուրդէն կը սպասէր, որ իրեն նման՝ սիրեն եւ իրենց տունները բանան ուրիշներու առջեւ:

Յովհաննէս առաքեալ՝ տարիներ ետք պիտի գրէր. «Տեսէ՛ք թէ Հայրը ինչպիսի՛ սէր շնորհեց, որպէսզի մենք Աստուծոյ զաւակներ կոչուինք» (Ա. Յովհ. 3. 1): Յիսուսի զոհաբերութեամբ՝ մենք կ'ունենանք այդ յորդառատ սիրոյ լրումը (Հմ. 16): Եւ քանի որ Ան մեզի օգնեց, մենք ալ կրնանք այդ սէրը շոյալօրէն ուրիշներու վրայ տարածել:

**Աղօթք** - Սիրող Աստուած, օգնե՛ ինձի, որ Քու անզուգական սիրովդ՝ ողողեմ ուրիշները: Ամէն:  
**Ինչպե՞ս փորձառաբար վայելցիր Աստուծոյ յորդառատ սէրը:**  
**Ինչպե՞ս կրնաս զայն փոխանցել ուրիշներու:**

Ան (Յիսուս) մեռաւ մեզի համար, որպէսզի մենք ապրինք իրեն հետ, արթուն ըլլաք թէ քնացած: [Ա. Թես. 5. 10]

## ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԻԼ

2023-ին, Քենիայի (Kenya) ոստիկանութիւնը միջամտեց՝ դադրեցնել այն, ինչ որ կը կոչուի «Շաքահոլա Ջանգուածային Սպանդը» (Shakahola Massacre): Հարիւրաւոր մարդեր մեռան, հնազանդելով կեղծ հոգեւոր առաջնորդի մը, որ զիրենք յորդորած էր, սովամահ ըլլալով՝ Յիսուսի հանդիպելու համար: Այդ առաջնորդը, իբր թէ, խոստացած էր, որ երբ իրեն հետեւողները մեռնին, ինք եւս նոյն ձեւով երկիրը պիտի լքէ: Չերբակալուելէ ետք, ան ժխտեց նման բան ուսուցանած ըլլալը:

Այս ողբերգական պատահարը՝ մտահոգիչ օրինակ մըն է, թէ որքա՛ն վտանգաւոր կրնայ ըլլալ՝ կուրօրէն վստահիլ անոնց, որոնք կ'ըսեն թէ հոգեւոր առաջնորդ են: Ազանդի անդամները՝ այնքա՛ն խաբուած էին, որ նոյնիսկ դիմադրեցին անոնց՝, որոնք եկած էին փրկելու զիրենք սովամահութենէ: Վերապրող մը, ներկայացուց թէ «մոլի դարձած էր» այդ առաջնորդին վարդապետութիւններուն:

Բայց Յիսուս Քրիստոս է՝ իսկական առաջնորդը՝ անոնց, որոնք կը վստահին իրեն: Ան այնքա՛ն շատ սիրեց մեզ, որ պատրաստ եղաւ մեռնելու, որպէսզի մենք կեանք ունենանք (Ա. Թես. 5. 10): Ան մեզ կը հրաւիրէ իրեն համար ապրելու՝ «արթուն եւ զգաստ» մնալով (Հմ. 6), եւ փորձելով ուրիշներու իւրաքանչիւր ուսուցումը քննելու՝ իր ուսուցումին հետ (Հմ. 20-22):

Քրիստոսի սիրոյն կը պատասխանենք՝ ո՛չ թէ՛ մեր կամ ուրիշներու վնասելով, այլ՝ զիրար «քաջալերելով եւ շինելով» (Հմ. 11), խաղաղութեամբ ապրելով (Հմ. 13) եւ ջանալով ընել ա՛յն ինչ որ լա՛ւ է բոլորին համար (Հմ. 15): Յենելով Քրիստոսի Հոգիին վրայ եւ վստահելով՝ ամէն օր (Հմ. 19), կրնանք ապրիլ սիրով լի կեանք մը, մինչ հաւատքով կը սպասենք իր վերադարձին (Հմ. 23):

**Աղօթք** - Հայր, օգնէ՛ ինձի, որ երբէ՛ք չփոխարինեմ Յիսուսը՝ ուրիշ մէկ առաջնորդով եւ ապրիմ՝ Զրիստոսի համար: Ամէն:

**Ե՞րբ ականատես եղար վնասի՝ կեղծ ուսուցումներու հետեւանքով: Ինչպէ՛ս կրնայ Զրիստոսի սիրոյ օրինակը՝ օգնել քեզի՝ զանազանելու անվստահելի առաջնորդները:**

Ինչո՞ւ նկուն ես, ո՛վ իմ անձս, ... Աստուծո՛յ յուսա, քանի տակաւին պիտի ներբողեմ զայն՝ Իր փրկարար ներկայութեան համար: [Մաղմ. 42. 5]

### ՅԻՇԵԼ՝ ՄՈՌՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հեղինակ՝ Ռիչըրտ Մաու (Richard Mouw)՝ կը պատմէ Սեւամորթ աստուածաբանի մը մասին՝ Հարաւային Ափրիկէէն, որ կը պայքարէր՝ անցեալին իր ապրած կեանքի վայրագ յիշողութիւններու դէմ, խտրականութեան համակարգի պայքարի տարիներուն: Մաու գրեց. «Ան պատմեց պատմութիւն մը՝ Ափրիկեցի մանուկի մը մասին, որու ուսուցիչը հարցուց, սահմանել «յիշողութիւն» բառը: Երեսան մտածելէ յետոյ պատասխանեց. «Յիշողութիւնը՝ այն բանն է, որ ինծի կ'օգնէ մոռնալու»: Երեսային այս պարզ խօսքը խոր իմաստ ունէր: Ան անցեալէն շատ բաներ կ'ուզէր մոռնալ եւ կ'ուզէր յիշել լաւերը:

Շատեր ունին խոր վիրաւորանքներ ու յիշողութիւններ, որոնք անկարելի կը թուին մոռնալ: Բայց այդ մանուկին իմաստուն խօսքը կը մատնանշէ՝ յոյսի ճամբայ մը: Երբ կը սորվինք լաւ բաներ յիշել, անոնք կրնան մեզի ուժ տալ՝ յառաջ երթալու եւ ապրելու ի հեճուկս ցաւալի անցեալին: Մաղմուս 42-ին հեղինակը՝ իր անձը կը նկարագրէ, որպէս եղջերու մը, որ կը փախչի՝ իր կեանքը ապահովելու համար: Մակայն նոյն ժամանակ կը գրէ. «Այս բաները յիշելով՝ անձս իմ ներսս կը հալի, քանի որ բազմութեան հետ կ'երթայի. անոնց հետ հանդիսաւորապէս դէպի Աստուծոյ տունը կը յառաջանայի՝ ցնծութեան եւ շնորհակալութեան ձայնով, տօնախմբող բազմութեան հետ» (Հմ. 4):

Մաղմոսերգուին Աստուածապաշտութեան յիշողութիւնները՝ կը քաջալերէին զինք, որ նոյնիսկ ցաւի մէջ՝ Տէրը գովաբանէ: (Հմ. 5): Յիշել լը, թէ ո՛վ է մեր Աստուածը եւ թէ մենք Անոր կը պատկանինք, կրնայ օգնել մեզի՝ ապրելու ու բուժուելու այն անցեալէն, զոր չենք կրնար մոռնալ:

**Աղօթք** - Սիրելի Հայր, Դուն գիտես իմ վերքերս ու ցաւերս, ցասումս ու վիշտս: Կը խնդրե՛մ փաթթե՛ գիս Քու բարութեանդ ու ողորմութեանդ մէջ եւ բժշկե՛ անցեալի ցաւերես, որոնք չեմ մոռնար, բայց կ'ուզեմ ապրիլ սուրբ սիրով: Ամէն:  
**Ի՞նչ մուտք յիշողութիւններ կ'աճին մտքիդ մէջ: Ինչպե՞ս կրնայ յոյսի Աստուածը քեզի առաջնորդել՝ ապաքինումի ուղիով:**

Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ:  
[Ա. Յովհ. 4. 19]

## ՍԻՐՈՅ ԴՊՐՈՑԻՆ ՄԷՁ

**Վ**ուտի Քուպրը (*Woody Cooper*)՝ կանգնած էր գանգատող ամբոխին մէջ, այն օրը երբ Տօրօթի Քաունց (*Dorothy Counts*) սեւամորթ աղջիկ մը ընդունուեցաւ ամբողջովին սպիտակամորթ աշակերտներ ունեցող միջնակարգ դպրոց մը, Հիւսիսային Քարոլայնայի մէջ: Զինք ծաղրելով՝ բանի մը տղաներ՝ ցեղային վիրաւորական արտայայտութիւններ ըրին եւ աղբ նետեցին անոր վրայ: Վուտին լուռ մնաց. ան չի հանդիմանեց, նոյնիսկ երբ կին մը գոչեց. «Անոր վրայ թքեցէ՛ք, աղջիկներ»: Տարիներ ետք, Վուտին ինքնիրեն հարցուց. «Ինչո՞ւ նոյնիսկ բան մը չըսիր: Ան ալ ուրիշ սովորական աշակերտ մըն է, որ դպրոց կու գայ»: Տասնամեակներով՝ ան խղճահարութիւն զգաց իր լուրթեան համար, մանաւանդ երբ ինքզինք տեսաւ այդ օրուան լուսանկարներէն մէկուն մէջ: Վերջապէ՛ս քառասուն ինը տարիներ ետք, կապ հաստատեց Տօրօթիի հետ՝ ներողութիւն խնդրելու:

Վուտին սորվեցաւ, թէ սէր եւ զօրակցութիւն ցոյց տալ ուրիշի մը հանդէպ՝ համարձակ ըլլալ չէ՛ միայն, այլ սիրե՛լ՝ կը նշանակէ գիտակցաբար նմանիլ Յիսուսի: Յովհաննէս առաքեալ կը սորվեցնէ այս դասը՝ այն եկեղեցիներուն, որոնք կը կռուին Քրիստոսի եւ Անոր սիրոյն մասին կեղծ ուսուցումներու դէմ:

«Մենք կը սիրենք զայն, որովհետեւ նախ ան սիրեց մեզ: Եթէ մէկը ըսէ, ‘Ես կը սիրեմ Աստուած’, եւ ատէ իր եղբայրը, ստախօս է» (Հմ. 19-20): Ան կ’աւելցնէ. «Ո՛վ որ կը սիրէ զԱստուած՝ պէտք է սիրէ նաեւ իր եղբայրը եւ քոյրը» (Հմ. 21):

Վուտի եւ Տօրօթին եղան այդ սիրոյ կենդանի օրինակը: Անոնք մտերմացան եւ միասին այցելեցին եկեղեցիներ ու դպրոցներ՝ իրենց պատմութիւնը պատմելու: Վուտիի մահէն մէկ օր առաջ՝ Տօրօթին այցելեց զինք: Ան ըսաւ. «Ես զինք սիրեցի եւ գիտեմ, որ ինք ալ զի՛ս սիրեց»: Ա՛յդ է Յիսուսի ճամբան: Եւ կրնայ ըլլալ նաեւ մեր ճամբան:

**Աղօթք** - Տէր Յիսուս, կը խնդրե՛մ՝ առաջնորդէ զիս, որպէսզի սիրեմ այնպէ՛ս, ինչպէս Դո՛ւն կը սիրես: Ամէն:

**Ե՞րբ չկրցար սիրել Յիսուսի նման: Ի՞նչ ձեւերով կրնաս աւելի լաւ ցոյց տալ Անոր սերը:**

Բայց մեկը կայ ձեր մեջ՝ որ դուք չէք ճանչևար. ... որուն կօշիկին կապը քակելու արժանի չեմ: [Յովհ. 1. 26-27]

## ԽՈՆԱՐՅ ԱՌԱՋՆՈՐԴՈՒԹԻՒՆ

**Բ**արեկամս՝ Պուլթչ Պրիկզ (*Butch Briggs*), տեղական երկրորդական դպրոցի մը լողալու խումբին սիրուած մարզիչն էր, աւելի քան յիսուն տարիներ: Հետաքրքրութեան համար՝ օր մը հարցուցի իրեն, թէ քանի նահանգային ախոյանութիւններ շահած է այս հինգ տասնամեակներու ընթացքին: Իր յատուկ հեղ խօսքով պատասխանեց. «Ես երբէ՛ք չեմ շահած ախոյանութիւն մը, որովհետեւ ես ինքս չեմ լողացած մրցումի մը մէջ»: Վերստին հարցուցի. «Իսկ լողորդներդ քանի՞ ախոյանութիւն շահած են»: Այս անգամ՝ ան ուրախութեամբ պատասխանեց. «Երեսուն ինը»:

Պուլթչ՝ ինծի արժէքաւոր դաս մը սորվեցուց: Մարզիչ մը կարեւոր դեր ունի, բայց ան չուզեց վայելել այն փառքը, որ իր լողորդները շահած էին:

Պուլթչի խոնարհութիւնը կը յիշեցնէ ինծի՝ թէ Յովհաննէս Մկրտիչ ինչպէ՛ս տեսաւ իր դերը: Ան յանձնարարուած էր պատրաստել ժողովուրդը՝ Յիսուսի՝ Մեսիային գալուստին համար: Յովհաննէս այնքա՛ն ուշադրութիւն գրաւեց, որ կրօնական առաջնորդները ուզեցին պարզել՝ թէ ո՞վ էր ինք իրականութեան մէջ: Աստուածաշունչը կը յիշէ, թէ Յովհաննէս անկեղծութեամբ խոստովանեցաւ ու ըսաւ. «Ես Քրիստոսը չեմ» (Յովհ. 1. 20): Երբ անոնք աւելի ճշտմամբ հարցուփորձ ըրին, Յովհաննէս հաստատեց՝ թէ իր դերը միայն Յիսուսի գալուստը հռչակելն էր (հմ. 21-23): Յիսուս էր ա՛ն, որուն մարզիկ երկար սպասած էին (հմ. 27):

Այս տեսակի խոնարհութիւն, աւելի վարկ չառնել՝ քան ինչ որ մեզի կը պատկանի, կ'օգնէ մեզի պահելու ճշգրիտ կեցուածք մեր ձեռքերումներուն մասին եւ արժանվայել գնահատել ուրիշներու տրուած առաքելութիւնները:

**Աղօթք** - Հայր, շնորհք տուր ինծի՝ ապրելու խոնարհութեամբ, որ Դուն փայլուն կերպով ցոյց տուիր Քու կեանքիդ ու մահուան ընթացքին: Ամէն:

**Ո՞ր պարագաներուն դժուար է քեզի համար խոնարհութիւն արտայայտել: Ինչպէ՞ս կրնայ Սուրբ Հոգին զօրացնել քեզ՝ խոնարհաբար ապրելու:**

Անոր նմանեցաւ՝ որմէ երես կը ծածկեն, արհամարհուեցաւ, ու համարում չունեցանք անոր հանդէպ: [Ես. 53. 3]

## ՉՏԵՍՆԵԼ ԱՍՏՈՒԱԾԱՅԻՆԸ

**Ա**մէն մարդ կը խուսափէր ձորճ Չէյսէն (George Chase): Ան կը բնակէր տասներկու ոտք լայնք ունեցող՝ փայտաշէն խրճիթի մը մէջ, որ կը գտնուէր այն հատուածին մէջ, ուր Նիու Ինկլէնտի (New England) Փօքաթաք (Pawcatuck) Գետը կը հանդիպէր Փոքր Նարակէնսէթ (Narragansett) Ծոցին: Տեղացիներուն համար պարզ էր, որ ձորճ՝ խրճիթին մէջ լողանքի տեղ չունէր: Կարելի էր հոտուըտալ ապացոյցը:

Օր մը, փոթորիկ մը՝ ցամաք բերաւ Ատլանտեան Ովկիանոսի ջուրերը, ջնջելով լողափին գտնուող չքեղ տուները: Փրկուածները դուրս ելան ջրհեղեղէն ետք ու սկսան ապաստան փնտռել: Տասնմէկ մարդ՝ թաց ու դողդողուն, ապաստան գտան ձորճի խրճիթին մէջ: ձորճ հիւրասիրեց զիրենք իր ունեցած բոլոր բաներով. ջուր, կաթ, կոճապղպղով թէյ եւ կենալու տե՛ղ: 1938-ի փոթորիկէն ետք, քաղաքացիներուն կարծիքը՝ ձորճ Չէյսի մասին՝ հիմնովին փոխուեցաւ:

Յաւալի է, երբ մակերեսային դատողութիւններով կը մօտենանք ուրիշներուն, բայց մարդու բնութիւնը այդ է՝ արագ դատել: Նոյնը կ'ընենք նաեւ՝ Յիսուսի համար: Երբեմն կը պատկերացնենք զինք ինչպէս հին գծագրութիւններու մէջ՝ խաղաղ ու գեղեցիկ կերպարանքով: Սակայն՝ Եսայի ըսաւ Մեսիային մասին. «Անիկա ո՛չ կերպարանք ունէր, ո՛չ ալ վայելչութիւն, որ անոր նայէինք. ... անոր նմանեցաւ որմէ երես կը ծածկեն. արհամարհուեցաւ, ու համարում չունեցանք անոր հանդէպ» (Ես. 53. 2-3): Բայց այս մարդը՝ մեզի տուաւ այն ամէնը, ինչ որ ունէր: «Ի՛րապէս անիկա մեր կակիծները կրեց, եւ մեր կոտտանքները ստանձնեց» (Հմ. 4): Իր կեանքը մատուցանեց՝ մեր փոխարէն:

Յաւալի է, երբ չենք տեսներ ուրիշներուն մարդկայնութիւնը: Աւելի ողբերգական է, երբ չենք տեսներ Յիսուսի աստուածային էութիւնը:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, օգնէ՛ ինձի տեսնելու ուրիշներ՝ որպէ՛ս Քու պատկերովդ ստեղծուած՝ գեղեցիկ եակներ: Ամէն:  
**Ինչպէ՞ս կրնաս անտեսել արտաքին տեսքը, ուրիշներու մէջ տեսնելու համար մարդկային պատկերը: Երբ կը մտածես Յիսուսի մասին, ինչպէ՞ս կը պատկերացնես զինք:**

Տերոջ՝ քու Աստուծոյդ անունը ընդունայն բերանդ մի՛ առներ. որովհետեւ Տերը իր անունը ընդունայն բերանը առնողը անմեղ պիտի չսեպէ: [Ել. 20. 7]

## ԱՆԱՐԳԵԼ ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆՈՒՆ

Հին լուսանկար մը՝ երկրորդ Աշխարհամարտէն, առնուած քաղաքի մը՝ Նացցի կեդրոնի մը առջեւ, մեր բոլորին համար՝ զգուշացում մըն է: Լուսանկարին մէջ, բարեկեցիկ հագուած կին մը՝ փողոցը կ'անցնի: Մարդ մը ձեռք մը պաշտօնական հագուստ հագած՝ մայթէն կը քալէ, իսկ ուրիշ մը կանգնած՝ շէնքին անկիւնը դրուած տեղեկատուական վահանակը կը կարդայ: Բոլորը անտարբեր կը թուին՝ նկատելու մեծ դրօշը, որ կախուած էր կեդրոնին մուտքի դռան վրայ, շէնքին կէս երկարութեամբ: Դրօշին վրայ գրուած էր. «Հրեային դէմ դնելով, Տէրոջ գործին համար կը պայքարիմ»:

Աստուած այս տեսակի դաւաճանութիւնը նկատի ունէր, երբ պատուիրեց. «Տէրոջ՝ քու Աստուծոյդ անունը ընդունայն բերանդ մի՛ առներ. որովհետեւ Տէրը իր անունը ընդունայն բերանը առնողը անմեղ պիտի չսեպէ» (Ել. 20. 7): Այս պատուիրանը կը ներառէ՝ Աստուծոյ անունը անիծելը, կամ երբ անզգուշութեամբ Աստուծոյ անունը կը գոչենք՝ մատ մը կամ ոտքը վնասելէ ետք: Բայց այդ նաեւ կը ներառէ խեղաթիւրումը՝ Աստուծոյ անունը օգտագործել՝ չարիքին ծածկոց ըլլալու համար:

Պէտք է՛ ենթադրենք թէ Աստուծոյ գործը կ'ընենք, պարզապէս անոր համար որ ուրիշներ կ'ըսեն թէ կ'ընենք: Պէտք է աղօթքով զննենք մեր գործը՝ Աստուածաշունչին լոյսին տակ: Ինչպէ՞ս կրնանք գիտնալ թէ իրեն կը ծառայենք: Սաղմոս 119. 9-ն կ'ըսէ. «Ուշադիր ըլլալով՝ քու խօսքիդ համաձայն» (Սաղմ. 119. 9): Աստուած, որ կը պատուիրէ՝ «հաստատու՛ն եւ անշա՛րժ ըլլալ ու ամէն ատեն յառաջդիմե՛լ Տէրոջ գործին մէջ», մեզի արդէն ցոյց տուած է՝ թէ ի՞նչ է այդ գործը իր Սուրբ Գիրքին մէջ (Ա. Կորնթ. 15. 58): Եկէ՛ք լսենք զի՛նք:

**Աղօթք** - Հայր, կ'աղաչեմ՝ օգնէ ինձ, որ իմաստուն եւ սիրող ըլլամ եւ զգուշ՝ այն ամէն բանին մէջ, որ կը կատարեմ անունովդ: Օգնէ՛ ինձի՝ մշտապէս պահելու եւ պատուելու Քու անունդ: Ամէն: **Ի՛նչ գործ ըրած ես Աստուծոյ անունով: Ինչպէ՛ս գիտես թէ անոնք Աստուծոյ կամքին համաձայն են:**

Աղեղը ամպին մեջ պիտի ըլլայ ..., որպէսզի յիշեմ յաւիտենական ուխտը՝ Աստուծոյ ու ամէն մարմինէ իւրաքանչիւր շնչաւոր կենդանիի միջեւ, որ երկրի վրայ է: [Ծն. 9. 16]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԾԻԱԾԱՆԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

**Օվըն** (*Owen*)՝ արձակուրդի մէջ էր՝ արտասահման, երբ գործակից մը անհանգստացնող պատգամ մը ղրկեց իրեն. «Տնօրէնը կը փնտռէ փոխարինող մը՝ քեզի համար»: Շատ մտահոգուած, Օվըն աղօթեց առաւօտ մը արշալոյսին ու հարցուց Աստուծոյ. «Ո՛ր ես Տէր»: Ապա մօտեցաւ պանդոկի պատուհանին, քաշեց վարագոյրները՝ բանալու համար եւ նկատեց հսկայ, հիասքանչ ծիածան մը լիճին վերեւ կախուած: Շուրջը անմիջապէս ջերմութիւն մը տարածուեցաւ, որ զինք մխիթարեց եւ աւելի ուշ ան ըսաւ. «Կարծես թէ Աստուած ուղղակի կ'ըսէր՝ 'Ամէն ինչ լաւ է: Ես հո՛ւ եմ'»:

Ծննդոց 9-ին մէջ, Աստուած խոստացաւ՝ որ ուրիշ անգամ ջրհեղեղով երկիրը պիտի չկործանէ: Ան ըսաւ. «Աղեղը ամպին մէջ պիտի ըլլայ ..., որպէսզի յիշեմ յաւիտենական ուխտը՝ Աստուծոյ ու ամէն մարմինէ իւրաքանչիւր շնչաւոր կենդանիի միջեւ, որ երկրի վրայ է» (Հմ. 16): Այս ուխտը յաւիտենական ու առանց պայմանի էր: Արդիւնքը կախեալ էր՝ միայն Աստուծոյ պաշտպանութենէն եւ նախատեսութենէն եւ ո՛չ թէ՛ մարդկային արարքէն կամ վաստակէն: Եւ ասիկա՝ միայն առաջին խոստումը չէր, որ Աստուած պիտի տար Իր ժողովուրդին: Յիսուս ալ ըսաւ. «Ահա՛ ամէն օր ես ձեզի հետ եմ՝ մինչեւ աշխարհի վախճանը» (Մատթ. 28. 20):

Աստուած չի խոստանար թէ մենք պիտի չի տառապինք: Սակայն հաստատ խոստացած է Իր մշտական ներկայութիւնը եւ մխիթարութիւնը: Կրնայ ըլլալ որ մենք «ծիածաններու պատասխան» չստանանք, բայց ունինք երաշխիքը՝ թէ ի՛նչ ալ պատահի մեր կեանքին մէջ, Ինք միշտ մեզի հետ է եւ կրնանք ունենալ Իր զօրութիւնը, մխիթարութիւնն ու ներկայութիւնը:

**Աղօթք** - Սիրելի Հայր, շնորհակալ եմ՝ Զու ներկայութեանդ համար: Կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինձի յիշելու Զու խոստումդ՝ միշտ ինձի հետ ըլլալու: Ամէն:

**Երբ մտահոգութիւն կամ փորձութիւն կ'ունենաս, ի՞նչ կրնաս ընել՝ դուն քեզի Աստուծոյ ներկայութիւնը յիշեցնելու համար: Ո՞ր խոստումները կը մխիթարեն քեզ:**

Յետոյ (Եղիս) վերադարձաւ, տան մէջ հոս-հոն գնաց:  
[Դ. Թագ. 4. 35]

## ԱՂՕԹՔԻ ՔԱԼՈՒԱԾՔ

**Ա**նել կացութեան մէջ էի: Գրած էի հոգեւոր խորհրդածութեան յօդուածի մը կէսը, երբ մտքերս չորցան: Աղօթեցի. «Աստուած իմ, ի՞նչ ընեմ»: Յիշեցի ուսումնասիրութիւն մը, որ ցոյց տուած էր՝ թէ երբ կը քալենք, մեր ստեղծագործելու կարողութիւնը միջին հաշիւով՝ 60 առ հարիւրով կը բարձրանայ: Գացի տանս ետեւը եղող արահետը եւ շարունակեցի իմ խօսակցութիւնս Աստուծոյ հետ: Եօթանասուն վայրկեաններ ետք՝ նորոգուած էի: Վերադարձայ համակարգիչիս ստեղնաշարին եւ աւարտեցի գրելիքս:

Դ. Թագաւորաց 4. 18-35-ին մէջ կը կարդանք, թէ ինչպէ՛ս Եղիսէ եւ իր ծառան՝ Գէեզին, արձագանազեցին Սունամացի կնոջ որդիին մահուան աղերսին (4. 20-35): Եղիսէի հրամանով (Հմ. 29), Գէեզի՛ իր գաւազանը դրաւ մանուկին վրայ: Վերջապէս՝ «Եղիսէ վերադարձաւ, տան մէջ հոս-հոն գնաց, ու բարձրանալով՝ կրկին անոր վրայ կծկուեցաւ: Տղան եօթը անգամ փռնգտաց, ու աչքերը բացաւ» (Հմ. 35):

Աստուածաշունչը մեզի չի բացատրեր՝ թէ ինչո՞ւ Եղիսէ «հոս-հոն գնաց», ո՛չ ալ կ'ըսէ թէ ի՞նչ կը մտածէր: Բայց գիտենք, որ երբ Եղիսէի աղօթքները չպատասխանուեցան, ան չի հրաժարեցաւ: Դիւրին է պատկերացնել, թէ այս ճնշիչ պահուն՝ ան Աստուծոյ հետ կը խօսէր:

Ի՞նչ կ'ընե՛ս, երբ անել կացութեան մը կը հասնիս ու չե՛ս գիտեր ինչ ընել: Գուցէ՛ ժամանակն է «աղօթքի քալուածք»ի: Թէ արահետ երթանք, թէ տան մէջ հոս-հոն քալենք, երբ Աստուծոյ կը կապուինք՝ մեր կարիքներու ատեն, Ան մեզի պատասխան կու տայ, ըստ մեր պարագաներուն:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, երբ ինքզինքս կը գտնեմ կաշկանդուած ու անել կացութեան մէջ, օգնէ՛ ինձի՝ Զեզի հետ քալելու: Ամէն:

**Ո՞ր անել կացութեան մատնուած ես: Ինչպէ՞ս կրնաս Աստուծոյ հետ կապուիլ այս իրավիճակին մէջ, որպէսզի՝ Ան քեզ առաջնորդէ:**

Զակեցին տան տանիքը՝ ուր կը գտնուէր Յիսուս, ... վար իջեցուցին մահիճը, որուն վրայ պարկած էր անդամալոյծը: [Մար. 2. 4]

## ԸՆԿԵՐՆԵՐՈՒ ՅԱՒԱՏՔԸ

**Մ**ասնակցելով համագումարի մը, կին մը նկատեց՝ թէ օրուան բանախօս ընկերուհին՝ լաւ չէր զգար: Ան մօտեցաւ անոր եւ ընկերուհին պատասխանեց. «Պիտի կատարեմ այս ներկայացումը: Եթէ առաւօտեան լաւ չի զգամ, բժիշկին պիտի երթամ»: Կինը չմոռցաւ ընկերուհիին տուած խոստումը: Թէեւ ինք պարտաւոր էր կանուխ ձգելու, բայց խնդրեց ուրիշ ընկերոջ մը, որ ստուգէ բանախօսին:

Առաւօտեան՝ բանախօսին պանդոկի սենեակին դուռը թակուեցաւ: Երկրորդ ընկերուհին եկած էր՝ զինք հիւանդանոց տանելու: Ետզարձ չկար, բարեբախտաբար՝ ան ժամանակին ստացաւ պէտք եղած կեանք փրկող բուժումը: Ընկերներուն յարատեւող ջանքերը՝ ակնյայտօրէն օգնեցին՝ փրկելու անոր կեանքը:

Յարատեւող ընկերները՝ կրնան օրհնութիւն ըլլալ, ինչպէս Մարկոս 2-ին մէջ յիշուած մարդոց պարագային: Ենթադրաբար՝ անոնք լսած էին Յիսուսի բժշկող զօրութեան մասին եւ գիտէին, որ Ան իրենց քաղաքը եկած էր (հմ. 1): Մարդիկ կը հաւաքուէին Քրիստոսի շուրջ եւ «տեղ չկար»՝ անդամալոյծը ներս բերելու համար (հմ. 2): Սակայն բազմութիւնը չկեցուց զիրենք: Անոնք «քակեցին տան տանիքը՝ ուր կը գտնուէր Յիսուս, ... վար իջեցուցին մահիճը, որուն վրայ պարկած էր անդամալոյծը» (հմ. 4), ու Քրիստոս զինք բժշկեց (հմ. 11-12):

Եկէ՛ք ուրիշներուն կարիքները՝ յարատեւ աղօթքով ու աղանչանքով բերենք Յիսուսի: Եւ երբ Ան կ'ապահովէ մեզի պէտք եղածը, մենք ալ ջանանք սիրով եւ օգնութեամբ կանգնիլ անոնց կողքին:

**Աղօթք** - Բժշկող Աստուած, գոհութիւն կու տամ հաւատքով եւ յարատեւութեամբ լեցուն ընկերներու համար: Կը խնդրե՛մ, օգնե՛ ինձի, որ ես ալ ուրիշները՝ յարատեւ Զեգի յանձնեմ: Ամէն:

**Ինչպէ՛ս քու կեանքիդ մէջ ընկերներու հաւատքը եւ յարատեւութիւնը՝ օգնած է քեզի:** Այսօր՝ ի՞նչ կրնաս ընել, որ մէկու մը օրինութիւն ըլլաս:

Ինչպէ՞ս պիտի հաւատան անոր՝ որուն մասին լսած էն:  
[Քրոմ. 10. 14]

## ԳՆԱ՛ ԵՒ ՊԱՏՄԷ՛ ՅԻՍՈՒՄԻ ՄԱՍԻՆ

**Ե**րբ մեր պատր աւելի ու աւելի վեր բարձրացաւ նեղ ճամբայով՝ Անտեան (Andes) Լեռներուն վրայ, խումբիս անդամները զբաղած էին ծիծաղելով եւ երգելով: Ես՝ պատուհանէն կը դիտէի՝ զարմացած, որ մեր ու աջ կողմի անդունդին միջեւ ոչ մէկ տեսակի արգելապատ կար: Քիչ մը վախցած եւ անհանգիստ էի, քանի որ շարունակ վեր կը բարձրանայինք, եւ սկսայ մտածել՝ թէ ինչո՞ւ մեր կարճ ժամանակով առաքելութեան խումբը եկած էր Էկուատորի (Ecuador) այս հեռաւոր շրջանը: Յետոյ յանկարծ պարզ դարձաւ ինծի. Աստուած պէտք է իսկապէս սիրէ այս ժողովուրդը, եթէ Իր Որդին ուղարկած է՝ մեռնելու անոնց համար: Անշուշտ ես կրնամ մէկ վախեցուցիչ պատի ճամբորդութեան փորձառութիւնը ունենալ, այդ սէրը անոնց հետ բաժնեկցելու համար:

Վերջ ի վերջոյ, մեծ ուրախութիւն եղաւ՝ կարճ Աստուածաշնչական դասեր տալ, մեր վկայութիւնները բաժնեկցիլ եւ աղօթել այն մարդոց հետ, որոնք ընդունեցին մեզ՝ մեր այցելած իւրաքանչիւր քաղաքի մէջ:

Պողոս առաքեալ՝ ամբողջ սիրտով նուիրուած էր Յիսուսի մասին ուրիշներու պատմելու, որպէսզի անոնք ալ կարենային վստահիլ Անոր: Հռոմայեցիս 10. 13-ին մէջ ան կ'ըսէ, թէ՛ «ո՞վ որ Տէրոջը անունը կանչէ՛ պիտի փրկուի»: Բայց՝ «ինչպէ՞ս պիտի հաւատան անոր՝ որուն մասին լսած էն, կամ ի՞նչպէս պիտի լսեն՝ առանց քարոզիչի: Կամ ի՞նչպէս պիտի քարոզեն՝ եթէ չզրկուին» (Հռոմ. 10. 14-15):

Մեր շուրջը շատ մարդիկ կան, որոնք չեն՝ ճանչնար Քրիստոսը: Եկէ՛ք խնդրենք Աստուծոյ քաջութիւն՝ բաժնելու ուրիշներուն Յիսուսի բարի լուրը, անոնց հետ աղօթելու եւ հրաւիրելու եկեղեցական միջոցառումներու:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կ'աղաչեմ՝ օգնէ՛ ինծի Յիսուսը բաժնեկցելու ուրիշներու հետ: Ամէն:

**Ինչպէ՞ս կրնաս Քրիստոսի պատգամը բաժնել անոնց, որոնք չեն՝ ճանչնար զինք:** Ինչպէ՞ս յստակ քայլեր կրնաս առնել այս շաբաթ՝ մէկուն ցոյց տալու, որու հոգատար ես:

Բարերար անձը պիտի պարարտանայ, եւ ոռոգողը՝ ինք պիտի ոռոգուի: [Առ. 11. 25]

## ԹԱՐՄԱՑՆՈՂ ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ

**Ա**լպէրթ Այնշտայն (Albert Einstein) Բժշկագիտական Գոլդճի բժշկութեան ուսանողներով լեցուն դահլիճին մէջ, լուրջ մտիկ ըրին՝ 90-ամբայ Ռութ Կօթէսմանի (Ruth Gottesman) խօսքերուն: Երբ ան աւարտեց իր խօսքը, յանկարծ՝ ի զարմանք ուսանողներուն, որոնք բացականչեցին՝ ուրախութիւնով լեցուեցան եւ յուզուեցան, յայտարարեց՝ որ կը նուիրէ մէկ միլիոն տոլար, որպէսզի ուսանողները կարենան իրենց ուսումը աւարտել՝ առանց կրթաթոշակ վճարելու: Այս նուիրատուութիւնը ամենամեծն էր, որ երբեւէ տրուած էր բժշկագիտական դպրոցին: Բայց յետագայ հարցազրոյցներու համաձայն, յստակ էր՝ թէ Կօթէսման՝ ինքն էր, որ այդ նուէրը ստացած էր: Ան արտայայտեց ուրախութիւն, գոհունակութիւն եւ պատիւ, կարող ըլլալով՝ իր դրամը տալու ուրիշներուն:

Առակները մեզի կ'ըսեն, որ այսպէս է բարերարութեան գաղտնիքը: Ան որ «կը ցրուէ իր ստացուածքը», չի մնար կորսուած կամ դատարկ, այլ անակնկալ օրհնութիւններ կը ստանայ (11. 24): Երբ մեր ձեռքերը կը բանանք ուրիշներուն առջեւ, աւելիով կը մնանք եւ ոչ պակասով: Աստուածաշունչը կը յայտարարէ. «ոռոգողը՝ ինք պիտի ոռոգուի» (Հմ. 25): Շատ անգամ՝ կը փորձուինք՝ ամուր բռնելու՝ այն ինչ որ ունինք, վախնալով որ մեզ պիտի շահագործեն կամ պիտի չմնայ մեզի: Բայց Աստուծոյ տնտեսութիւնը տարբեր է: Յիսուս աւելի առաջ գացած էր եւ ըսած. «Աւելի՛ երանելի է տալը՝ քան ստանալը» (Գործք 20. 35):

Կրնանք բարերար ըլլալ մեր կեանքով եւ մեր միջոցներով՝ այն ինչ որ ունինք բաժնելով կարիքաւորներուն: Եւ փոխադարձաբար, կը տեսնենք՝ որ մենք ալ կը ստանանք: Աստուծոյ թագաւորութեան մէջ բոլորին համար բաւարար կայ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կ'աղաչեմ՝ օգնէ՛ ինձի ըլլալ բարերար՝ ինչպէս Դո՛ւն, եւ վստահիլ, որ պիտի ունենամ՝ այն բոլոր բաները՝ ինչ որ պէ՛տք է: Ամէն:

**Ինչպէ՞ս ուրիշներուն տալը օրինած է քեզի: Ո՞ր է, որ Աստուած կրնայ հրաւիրել քեզ՝ աւելի բարերար ըլլալու:**

Ի՞նչ կը փրկէ եւ կ'ազատէ, երկինքի մէջ ու երկրի վրայ  
սշաններ եւ հրաշքներ կ'ընէ: [Դան. 6. 27]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԱՆԺԽՏԵԼԻ ԶՕՐՈՒԹԻՒՆԸ

**Ե**րբ Կեդրոնական Գրնթաքիի Փոխադրական Գործակալ-  
լուծիչները (*Transit Agency of Central Kentucky - TACK*),  
վերանորոգեց իր հիմնական գրասենեակը, ուզեց վստահ ըլլալ՝  
որ մարդիկ նկատեն այդ: Պարզ, հասարակ ու փոքր նշանի  
կամ յայտարարութեան փոխարէն՝ ան տեղադրեց հսկայական,  
մօտաւորապէս քսաներկու ոտքի բարձրութեամբ՝ թիթեղի  
նման բուլթանշան մը՝ մուտքին առջեւ: Այդ բուլթանշանը՝ որ  
համաշխարհային գերազանց անժխտելի նշան մըն է, ո՛չ մէկ  
անցորդ կրնայ անտեսել:

Դանիէլ 6-ին մէջ, Աստուած օգտուեցաւ անժխտելի դէպքէ  
մը՝ մարդոց ուշադրութիւնը գրաւելու համար: Երբ Դանիէլ  
մերժեց Դարեհ թագաւորի հրամանը եւ շարունակեց աղօթել  
Աստուծոյ, ան նետուեցաւ առիւծներու գուրբ: Բայց Աստուած  
հրաշքով փրկեց զինք (Հմ. 10-23): Մարգարէն ողջ մնաց,  
որովհետեւ «իր աստուծոյն վստահեցաւ» (Հմ. 23): Այն ատեն  
Դարեհ հռչակեց, որ՝ ի տարբերութիւն Մարերուն եւ Պարսիկներու  
մեռած կուռքերուն՝ Դանիէլի Աստուածը «ապրող Աստուած է,  
ու յաւիտեան կը գոյատեւէ» (Հմ. 26): Միայն «Ի՞նչ կը փրկէ եւ  
կ'ազատէ, երկինքի մէջ ու երկրի վրայ նշաններ եւ հրաշքներ  
կ'ընէ» (Հմ. 27): Զարմանալի է, որ նոյնիսկ հեթանոս թագաւոր  
մը՝ ընդունեց Աստուծոյ զօրութիւնը եւ գերիշխանութիւնը:  
Աստուծոյ զօրութեան այդ գործողութիւնը հսկայ, երկնային  
«բուլթանշան»ի մը նման էր՝ որ կարելի չէ՛ նկատի չառնել:

Երբեմն Աստուած մեր ուշադրութիւնը կը գրաւէ՝ զօրաւոր  
եւ անժխտելի միջոցներով (Հմ. 27) - գերբնական փրկութիւններ,  
ճիշդ ժամանակին եղող պատարաստութիւններ, եւ սիրտի  
վերափոխութիւններ: Ուրիշ ատեն, Ան լուռ կ'աշխատի՝ մինչ  
մենք կը դիտենք ու կը սպասենք: Եկէ՛ք՝ ապշանքով լեցուի՞նք այն  
բաներուն հանդէպ, որոնք Աստուած կը գործէ մեր մէջ այսօր:

**Աղօթք** - Ո՛վ գերիշխան Աստուած՝ երկինքի ու երկրի, ապշանքով  
կը կենամ՝ քու ներշնչող զօրութիւնդ տեսնելով: Ամէն:

**Ինչպէ՞ս Աստուած գրաւած է քու ուշադրութիւնդ:** Ինչպէ՞ս կրնաս  
բաժնեկցիլ ուրիշներու հետ, այն՝ ինչ որ Ան քեզի ցոյց տուած է:

Այդ կիները կը սպասարկէին անոր իրենց ինչքերով: [Դուկ. 8. 3]

## ԱՆԱՆՈՒՆ ԿԻՆԵՐԸ

**Ս**եղանները հականերխիչով մաքրելէ ետք, Շելիան (Shelia) ծռեցաւ աղբի տոպրակ մը կապելու համար, որ լեցուն էր գործածուած գաւաթներով եւ պնակներով: Ան՝ ուսին նետեց տոպրակը ու դարձաւ քննող աչքերով նայելու եկեղեցիի բազմագործածութիւն ունեցող սենեակին: Ան կամաւոր՝ համաձայնած էր մաքրելու զայն՝ յաջորդ հաւաքին համար եւ ուզեց համոզուիլ, որ ամէն ինչ պատրաստ էր: Խորհուրդ մը անցաւ իր միտքէն, «թէ արդեօ՞ք ոեւէ մէկը պիտի նշմարէ՞»:

Դիւրին է խորհիլ՝ արդեօ՞ք մեր առօրեայ ներդրումները Աստուծոյ արքայութեան համար գնահատուած են: Չնայած այն բանին, թէ կը մաքրենք, հաշիւները կը պահենք, Սուրբ Գիրքի սերտողութեան դասընթացք կ'առաջնորդենք, կամ նիւթական ներդրում կ'ընենք, մեզմէ շատերուն աշխատանքը անտեսուած կը մնայ մեր ծառայութեան վայրերուն մէջ եւ անանուն՝ հանրային գնահատանքի մէջ:

Դուկաս 8. 1-2-ի մէջ պատմողը կը թուարկէ այն կիներուն հաւատարիմ ծառայութիւնը՝ Յիսուսի ծառայութեան մէջ: Ան՝ անունով կը նշէ երեքը՝ չար ոգիներէն եւ հիւանդութիւններէն ազատուած՝ Մարիամ Մագդաղենացին, Յովհաննան՝ Հերովդէսի տան վերակացուն՝ Խուզայի կինը եւ Շուշանը: Ապա Դուկաս կը գրէ. «Ու շատ ուրիշներ, որոնք կը սպասարկէին անոր իրենց ինչքերով» (Հմ. 3): Դուկաս լուսարձակի տակ կ'առնէ՝ այս անանուն կիները, որոնք ներդրումներ կատարեցին Աւետարանին աջակցելու համար, այս կերպով ընդգծելով անոնց արժէքը:

Ինչպէս Աստուած ներառեց անանուն կիները իր պատմութեան մէջ՝ իբրեւ թանկարժէք ներդրում կատարողներ, նոյնպէ՛ս կը տեսնէ նաեւ մեր աշխատանքը: Ան կը ճանչնայ մեր անունները (Յովհ. 10. 3) եւ կը նկատէ մեր նուիրումը՝ իր գործին մէջ (Եբ. 6. 10):

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ կը տեսնես զիս, կը ճանչնաս զիս եւ կը գնահատես այն բոլորը, ինչ որ քեզի կու տամ: Ամէն:

**Ե՞րբ զգացած ես անտեսուած ու անարժէք: Ինչպէ՞ս քեզ կը քաջալերէ այն գիտակցութիւնը, որ Աստուած իր պատմութեան մէջ անանուն կիներ ընդգրկեց՝ իբրեւ թանկարժէք ներդրողներ:**

Գիտենք թե տառապանքը կ'իրագործե համբերութիւն,  
փորձառութիւն ու յոյս [Յոթմ. 5. 3-4]

## ԶՕՐՈՒԹԻՒՆ՝ ՊԱՅՔԱՐԷՆ

**Ճ**էսս (Jess) տարիքը կ'առնէր. երբ առաջին անգամ լսեց  
մանուկներու հէքեաթը՝ տղայի մը եւ թիթեռնիկի մը  
մասին: Անմիջապէս, ան հասկցաւ այդ պատմութեան դասը՝ թէ  
ուժը դժուարութիւններէն ու պայքարներէն յառաջ կու գայ:  
Հէքեաթին մէջ՝ տղայի մը կու տան թիթեռնիկի մը խոզակը, բայց  
կը զգուշացնեն անոր, որ չբանայ գայն: Սակայն երբ խոզակը կը  
դողայ ու կը ծոխի ձեռքին մէջ, տղան չի կրնար զսպել ինքզինք  
եւ մկրատով կը կտրէ գայն՝ որպէսզի թիթեռը ազատուի:

Բայց առանց պայքարի ազատուելէ ետք, թիթեռը կ'իյնայ  
գետին ու կը մեռնի՝ երբէ՛ք չթռչած: «Ի՞նչ պատահեցաւ»,  
կ'աղաղակէ տղան: Ճէսս, երկար կեանք մը ապրելէ ետք,  
անմիջապէս հասկցաւ: «Տղան խանգարեց թիթեռին՝  
օգտագործելու այն մկանները, որոնք պէտք էին գայն զօրաւոր  
դարձնելու եւ թռիչքի պատրաստելու համար»:

Երեխային այս դասը՝ գուցէ հէքեաթ մըն է, բայց կը  
հաստատէ՝ կարեւոր Սուրբ Գրային ճշմարտութիւն մը՝ որ Պօղոս  
առաքեալ ուսուցանեց Հռոմի հալածուած հաւատացեալներուն:  
«Կը պարծենանք տառապանքներու մէջ ալ. որովհետեւ գիտենք  
թէ տառապանքը կ'իրագործէ համբերութիւն, համբերութիւնը՝  
փորձառութիւն, ու փորձառութիւնը՝ յոյս» (Հռոմ. 5. 3-4): Պօղոս  
չըսաւ որ ուրախ ըլլալ ցաւերու համար կամ անտեսել անոնց  
տուած յոսահատութիւնը: Ան հաստատեց, թէ Աստուած կը  
գործէ մեր դժուարութիւններուն մէջ՝ շինելով մեր նկարագիրը  
եւ անցնելով մեր յոյսը՝ Իր վրայ:

Աստուծոյ զօրութեամբ, մենք կը սորվինք վստահիլ իրեն՝  
որ կը յաղթէ: Թիթեռը գրկուեցաւ իր թռչելու ուժէն: Բայց  
Քրիստոսով՝ մեր պայքարները կրնան մեզ վեր բարձրացնել  
զօրաւոր բնաւորութեամբ՝ դէպի Աստուած, մեր Փրկիչը:

**Աղօթք** - Սիրելի Յիսուս, մինչ կեանքի պայքարները կը  
դիմագրաւեմ, շնորհակալութիւն կը յայտնեմ քեզի, որ կը շինես  
իմ նկարագիրս ու վստահութիւնս՝ քու վրայ: Ամէն:  
**Ի՞նչ է քու վերաբերումդ պայքարներու հանդէպ: Ինչպե՞ս այդ  
պայքարը՝ զօրացուցած է քու վստահութիւնդ Աստուծոյ վրայ:**



2գուշացի՛ր որ .... Տերը չմոռնաս: [Բ. Օր. 6. 12]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԲԱՐՈՒԹԻՒՆԸ

«Ո՛հ, ո՛չ»: Այդպէս արտայատուեցայ, երբ բացի՝ մեղուի՝ փեթակը եւ յայտնաբերեցի, որ մեղուններու գաղութը՝ մահացած էր: Այդ փեթակը առողջ ու բեղուն էր լեցուն մեղրով: Ամբողջ մեղմ ձմռան ընթացքին՝ խնամքով պահած էի զայն եւ կը սպասէի վաղ հունձքի մը: Սակայն՝ ջերմ եղանակին յանկարծակի սառնամանիք մը՝ պատճառ եղաւ փեթակին փճացումին:

Ստուգեցի տեղական փորձագէտներու հետ: Անոնք սփոփեցին զիս ըսելով. «Այս անգամ՝ մեղու պահողներէն շատեր՝ կորսնցուցին իրենց փեթակները»: Մեղմ ձմեռ եղանակները՝ դժուարութիւններ կ'առաջացնեն՝ նոյնիսկ առողջ փեթակներուն համար: Զմեռ ժամանակ՝ մեղուները իրենց թեւերը շարժելով՝ փեթակը տաք կը պահեն, սակայն երբ կը տաքնայ եղանակը ժամանակաւոր կերպով, անոնք ուժասպառ կ'ըլլան՝ աւելի ուտելիք փնտռելով: Երբ ջերմաստիճանը յանկարծակի կը նուազի, անոնք այլեւս ուժ չեն ունենար տաք պահելու: Այս «չեղումը» կը բերէ կործանում:

Նոյնիսկ լաւ բաները կրնան վտանգ դառնալ, երբ մեզ կը շեղեն ամենէն էական բաներէն: Մովսէս, Աստուծոյ ժողովուրդը զգուշացուց այս մասին՝ եգիպտոսէն դուրս գալէն ետք եւ Աստուծոյ խոստացուած երկիրը մտնելէ առաջ, երկիր մը՝ «ամէն տեսակ բարիքներով լեցուն տուններ», որոնք իրենք չէին լեցուցած (Բ. Օր. 6. 11): Մովսէս ազդարարեց ըսելով. «Երբ ուտես ու կշտանաս, զգուշացի՛ր ... որ Տէրը չմոռնաս» (Հմ. 11-12):

Աստուծոյ յիշելը մեր մեծ օրհնութիւններուն մէջ՝ կ'օգնէ մեզի, որովհետեւ «ամէն բարի նուէր եւ ամէն կատարեալ պարգեւ՝ վերէն է» (Յակ. 1. 17): Երբ խոնարհութեամբ կը պատասխանենք Անոր բարութեան՝ սիրելով զԱստուծոյ մեր բոլոր սիրտով, հոգիով ու զօրութեամբ (Բ. Օր. 6. 5), իր մէջ կը գտնենք ամենէն մեծ օրհնութիւնը:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ՝ ինձի հանդէպ Քու ունեցած բարութեանդ համար: Կը խնդրե՛մ օգնե՛, որ այսօր՝ Քեզ յիշեմ: Ամէն: **Ի՛նչ բաներու համար շնորհակալ ես: Ինչպե՛ս բոլոր լաւ բաները՝ ի վերջոյ Աստուծոյ կու գան:**

Ձանալով պահել Սուրբ Հոգիին միաբանութիւնը՝  
խաղաղութեան կապով: [Եփ. 4. 3]

## ՔՐԻՍՏՈՍՈՎ՝ ՄԵԿ

**Յ**ՈՒՆՈՒՄ 1967-ին, Ուիսքոնսինի (Wisconsin) Ուիննեքըն (Winneconne) քաղաքը կը նկատէ, որ սխալմամբ ջնջուած է՝ Ուիսքոնսինի պաշտօնական ճանապարհային քարտէսէն, բան մը՝ որ քաղաքին համար կարեւոր զբօսաշրջիկային եկամտուտի կորուստ պատճառեց: Ուստի՝ քաղաքը որոշեց՝ 21 Յուլիսին, դուրս գալ Ուիսքոնսինէն եւ ըլլալ ինքնիշխան նահանգ մը: Ոմանք կ'ըսեն, թէ այս քայլը Ուիսքոնսին նահանգի կառավարութիւնը ամօթով ձգելու համար էր, մինչ ուրիշներ՝ կը պնդեն, թէ այս մէկը կատակով եղած գործողութիւն մըն էր: Ամէն պարագայի, քանի մը ամիս տեւած բանակցութիւնները, արդիւնաւորուեցան պետութիւն եւ քաղաք միասին գալու եւ Ուիննեքըն՝ վերամիացաւ Ուիսքոնսինին՝ 22 Յուլիս 1967, առաւօտեան ժամը 12.01-ին:

Բաժանումները ընդհանրապէս այդքան բարեհաճ եւ հեշտութեամբ չեն լուծուիր: Բաժանումը այնպիսի վտանգ մըն է, որ Առակաց գիրքը կը ցանկագրէ «եղբայրներու մէջ կռիւնք ծագեցնող մարդը» (6. 19), Աստուծոյ ատած վեց բաններէն մէկը (6. 16):

Բաժանումները՝ ո՛չ միայն խնդիրներ կ'առաջացնեն, այլ նաեւ կը խեղաթիւրեն Յիսուսը եւ մեր երկնաւոր Հայրը: Խաչի վրայ մեռնելէն զիշեր մը առաջ, Քրիստոս աղօթեց, Իրեն հետեւողներուն համար՝ որ մէկ ըլլան Իր մէջ, «որպէսզի աշխարհը հաւատայ թէ Ա՛ն զրկեց զինք» (Յովհ. 17. 21):

Յիսուս յստակ ըրաւ, որ մեր՝ Քրիստոսոսով եղբայրներուն եւ քոյրերուն հետ մեր միութիւնը (կամ անոր պակասը) ուղղակի կ'ազդէ աշխարհի՝ Իրեն հաւատալուն վրայ: Թող Քրիստոսի Հոգին մեզ դարձնէ մէկ մարմին – որպէսզի աշխարհը Իրմով հրապուրուի:

**Աղօթք** - Սիրելի Հայր, կը խնդրե՛մ՝ տո՛ւր ինձի սիրտ մը՝ եղբայրներս ու քոյրերս սիրելու, որպէսզի միասին ճշմարտապէս արտայայտենք ա՛յն միութիւնը, որ Դուս կ'ուզես մեզմէ: Ամէն: **Ի՞նչ բաներ կրնան քեզ բաժնել միւս հաւատացեալներէն: Ինչպե՛ս կրնան այդ բաժանումի հնարաւոր կետերը լուծուիլ, որպէսզի Քրիստոսի մարմինը ճանչնայ եւ ցոյց տայ միութիւնը:**

Այսպես թող ըսեն Տերոջ փրկածները, որոնք փրկեց թշնամիին ձեռքէն: [Մաղմ. 107. 2]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՍԻՐԱՌԱՏ ԳՈՐԾԵՐԸ

**Ք**աղաքիս՝ Պօլ (Ball) փողոցին վրայ՝ կողք-կողքի կը գտնուին «Մեծ Գաղափարներու Այգին» եւ նահանգի բանտը: Բարեկամս՝ Ճօհննը (Joann)՝ սիրեց երկու տեղերն ալ: Ան սիրեց նստիլ այգիին մէջ, խորհելով Աստուծոյ բարութեան եւ Անոր հանդէպ իր ունեցած սիրոյն մասին, որովհետեւ Աստուած իր կեանիքն մէջ շատ բաներ փոխած էր: Ան նաեւ սիրեց բաժնեկցիլ բանտին մէջ եղող կիներուն հետ՝ պատմելով իր կեանքի փրկութեան պատմութիւնը, Աստուծոյ հետ ապրած տարիներէն ետք: Շատ անգամներ ինծի կը պատմէր իր երազին մասին, որ օր մը՝ այդ կիները անհատական փորձառութեամբ՝ պիտի հասկնան եւ զգան Աստուծոյ սէրը:

Սաղմոսերգուն Իսրայէլացի եղբայրներուն ըսաւ, որ «պատմեն իրենց պատմութիւնը», թէ Աստուած ինչպէ՛ս փրկեց զիրենք թշնամիներէն (Մաղմ. 107. 2): Անոնք «դեգերեցան անապատին մէջ, ... անօթի ու ծարաւ ըլլալով՝ իրենց անձը կը թալկանար իրենց ներսը» (Հմ. 4-5): Երբեմն՝ անոնք կ'ապստամբէին Աստուծոյ դէմ եւ Աստուած կը պատժէր զիրենք (Հմ. 10-12): Սակայն ամէն անգամ, երբ «Տէրոջ աղաղակեցին իրենց տագնապին մէջ, ան ազատեց զանոնք իրենց տուայտանքներէն» (Հմ. 6): Անոնք շատ բաներ ունէին շնորհակալ ըլլալու եւ ուրիշներու հետ բաժնեկցելու համար: Ինչպէս Իսրայէլացիները սորվեցան, մենք ալ կրնանք սորվիլ թէ Աստուած սէր մը ունի, որ երբէ՛ք մեզ պիտի չձգէ:

Մենք ալ կրնանք առիթներ օգտագործել՝ Տէրոջ մեզի հանդէպ ունեցած «այս կարեկցութիւններուն մասին մտածելու» (Հմ. 43), շնորհակալ ըլլալու Անոր՝ եւ պատմելու՝ մեր փրկութեան պատմութիւնը:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, Դուն այնքա՛ն բարի ես, որ արժէ ուրիշներուն պատմել այս բաներուն մասին՝ ինչ որ ըրած ես ինծի համար: Կը խնդրեմ՝ խօսք տուր ինծի եւ բաց բերանս, որպէսզի խօսիմ Զու մասիդ: Ամէն:

**Ի՞նչ ըրած է Աստուած քու կեանքդ փոխելու համար: Որո՞ւ կրնաս պատմել քու պատմութիւնդ:**

Աբրահամ՝ լա՛ւ ալեւորութեան մէջ, ծերացած եւ իր օրերէն կշտացած, շունչը տալով՝ մեռաւ ու իր ժողովուրդին մէջ ամփոփուեցաւ: [Ծն. 25. 8]

## ՃՇՄԱՐԻՏ ԳՈՂՈՒՆԱԿՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՄԷՋ

**Ե**րեսուն տարիներ առաջ, անգործութեան սեմինարի մը ընթացքին՝ մասնակցեցայ գործունէութեան մը, որ մինչեւ այսօր կը յիշեմ: Գործէ զրկուած իմ աշխատակիցներս եւ ես՝ հրաւիրուեցանք գրելու մեր հանգստեան կոչուելու ուղերցները: Ինչո՞ւ: Մենք գործ կը փնտռէինք եւ շատ հեռու էինք հանգստեան կոչուելու տարիքէն: Բայց սեմինարի վարիչը՝ բացատրեց նպատակը՝ ըսելով. «Ձեր խօսքը՝ հաւանաբար շատ քիչ կապ պիտի ունենայ ձեր աշխատանքին հետ»: Ան բացատրեց, որ աշխատանքը մեր կեանքին կեդրոնը չէ՛: Եւ թէ՛ եւ կրնանք վշտանալ աշխատանքը կորսնցնելու համար, մեր կեանքը շա՛տ աւելի արժէք ունի, քան միայն գործ ունենալը:

Աբրահամի մահուան մանրամասնութիւնները ինծի կը յիշեցնեն այս դասը: Ան մեռաւ «լա՛ւ ալեւորութեան մէջ» եւ ապրած էր «իր օրերէն կշտացած» (Ծն. 25. 8): Սուրբ Գիւրգիին մէջ կը կարդանք Աբրահամի հաւատարմութեան մասին՝ թէ ինչպէս ան կը հետեւէր Աստուծոյ հրահանգներուն, բայց շատ բան չենք գիտեր իր աշխատանքին մասին: Հայրապետին ցուցաբերած հաւատքը (Ծն. 15. 6)՝ կը յիշեցնէ ինծի ժողովողիին եզրակացութիւնը. «Արդարեւ Աստուած իր առջեւ հաճելի եղող մարդուն իմաստութիւն, գիտութիւն եւ ուրախութիւն կու տայ» (2. 26): Այս խօսքը ըսաւ, երբ կը մտածէր կեանքին իմաստին մասին եւ թէ՛ մարդ ինչպէ՛ս կրնայ ուրախութիւն գտնել իր աշխատանքին մէջ (Հմ. 24-25):

Նոյնիսկ անգործութեան պատճառած կորուստի եւ տագնապի պահերուն մէջ՝ օգտակար է խորհիլ Աբրահամի օրինակին եւ ժողովողիի խօսքերուն մասին, որոնք մեզ կը տանին դէպի ճշմարիտ գոհունակութիւն՝ որ միայն Աստուծմէ՛ կու գայ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, կը խնդրե՛մ՝ յիշեցուր ինծի հաւատարիմ ապրելու, մինչ քեզի հետ կը քալեմ՝ գոհունակ սրտով՝ քու ներկայութեանդ մէջ: Ամէն:  
**Ի՞նչ բանի համար կը կարծես, որ մարդիկ քեզ պիտի յիշեն: Ինչպէ՞ս կեանքի վրայ թողած ժառանգութեանդ մասին մտածելը՝ կ'օգնէ քեզի այսօր ապրելու:**

Չտրտմիք ինչպես ուրիշները՝ որ յոյս չունին: [Ա. Թես. 4. 13]

## ՅԻՍՈՒՍԻ ԲԵՐԱԾ ՅՈՅԱԸ

**Ա**մեն ինչ սկսաւ տրտմած հօր մը կողմէ ինծի ուղարկած ե-նամակով: Ան իր աղջիկը Ալիսսան (*Alyssan*), որ գոլէճի ուսանողուհի մըն էր, կորսնցուցած էր՝ ինքնաշարժի արկածի հետեւանքով եւ կը փնտռէր ոեւէ մէկը՝ որ հասկնար իր սրտածախիկ ցաւը:

Մօտ 300 նամակ եւ չորս տարիներ ետք, վերջապէս Քրէյկ (*Craig*) եւ ես հանդիպեցանք: Իր աշխատանքը զինք մօտակայ քաղաք մը տարած էր եւ շաբաթ օրը մասնակցեցանք եկեղեցական արարողութեան, ճաշեցինք միասին եւ յիշեցինք մեր աղջիկները՝ Մէլիսսան (*Melissan*) եւ Ալիսսան: Երկու անմեղ աղջիկներ, որոնք ուրախութիւն կու տային ուրիշներուն, կը սիրէին վօլիբոլ (*volleyball*) եւ Յիսուսը, իրենց կեանքը կորսնցուցած էին՝ ինքնաշարժի արկածով:

Ի՞նչ էր մեր գրոյցին էութիւնը այդ օր: Զրուցեցի՛նք մեր տխրութեան մասին: Լացի՛նք: Բայց ամենէն շատ խօսեցա՛նք յոյսի մասին: Ծշմարիտ, անկեղծ յոյս՝ հիմնուած Աստուծոյ խոստումներուն վրայ: Պօղոս առաքեալ կը բացատրէ. «Եղբայրներ՛, չենք ուզեր որ անգէտ ըլլաք ննջեցեալներուն մասին, որպէսզի չտրտմիք ինչպէս ուրիշները՝ որ յոյս չունին: Արդարեւ եթէ կը հաւատանք թէ Յիսուս մեռաւ եւ յարութիւն առաւ, ... Քրիստոսով մեռածները յարութիւն պիտի առնեն» (Ա. Թես. 4. 12-15): Հաւատացեալին համար, գերեզմանէն անդին կեանք կա՛յ – յաւիտենական կեանք:

Օրուան աւարտին Քրէյկ ու ես ազօթեցինք եւ շնորհակալութիւն յայտնեցինք Աստուծոյ, որ մեր աղջիկները ապահով են իր սիրառատ ձեռքերուն մէջ: Յիսուսի մէջ եղող սիրոյն բաժնեկցումը՝ սիրտերը կը միացնէ եւ յոյս կու տայ՝ նոյնիսկ անյոյս վիճակներու մէջ

**Աղօթք** - Սիրող Աստուա՛ծ, շնորհակալ եմ, որ իմ կեանքիս մէջ դրօր մարդիկ, որոնք կը հասկնան իմ ցաւս եւ կը պարգեւես ինծի՝ ճշմարիտ ու անկեղծ յոյս: Ամէն:

Ի՞նչ կորուստի վիշտ՝ ծանր կը կշռէ սրտիդ վրայ: Որո՞ւ հետ կրնաս խօսիլ այդ մասին: Ինչպէ՞ս Յիսուսի հանդէպ ունեցած յոյսդ կրնայ քեզի ուժ տալ՝ դիմագրաւելու այս դժուարութիւնը:

Անգամ մըն ալ իրենց չար սիրտին կամակորուրթեան պիտի չհետեւին: [Եր. 3. 17]

## ԱՊՍՏԱՍԲՈՒԹԻՒՆ ԵՒ ՎԵՐԱԴԱՐՁ

**Վ**այրագը (*The Wild One*)՝ 1953 թուականի նկարահանուած շարժապատկեր մըն է, ուր Մարլոն Դրանտո (*Marlon Brando*) կը մարմնաւորէ՝ Ճանի Սթրէպլըրը (*Johnny Strabler*)՝, շարժակաւոր հեծանիւներու խմբակին խանգարիչ ու խռովիչ առաջնորդը: Տեսարանի մը մէջ, երիտասարդ աղջիկ մը կը նկատէ խմբակին անդամներէն մէկուն բաճկոնին վրայի տառերը՝ *B.R.M.C.*: Երբ կը հասկնայ, որ «*R*»-ը կը նշանակէ «*rebels*» «ապստամբներ», կը ծիծաղի ու կը դպչի Դրանտոի թեւին, մինչ ա՛ն՝ անտարբեր թմբուկը կը զառնէ ու կ'ըսէ. «Հէ՛յ, Ճանի, ի՞նչի դէմ կ'ապստամբիս»: Ճանին կը պատասխանէ. «Ի՞նչ ունիս»:

Ի՛նչ ճիշդ նրկարագրութիւն՝ մեր խնդիրին: Մենք կը ծնինք հաստատակամ մղուժով մը: Կ'ուզենք տիրել իրավիճակներուն, նախընտրաբար՝ իրագործելով մեր կամքը: Եթէ այդ մէկը չըլլայ, ապա կը դանդաղինք, կը ձգձգենք՝ նոյնինքն մենք զմեզ մղելու առաջ: Ապստամբութիւնը՝ ինքնին նպատակն է:

Ինչո՞ւ Իսրայէլ՝ անմիտ կերպով պաշտեց քարէ ու փայտէ կուռքեր (Եր. 3. 9): Եւ ինչո՞ւ «անհաւատարիմ քոյրը՝ Յուդա» միայն ձեւականօրէն վերադարձաւ Աստուծոյ (Հմ. 10): Որովհետեւ այդ ձեւով կը ցուցադրէին իրենց անկախութիւնը՝ «իրենց չար սիրտին կամակորուրթիւնը» (Հմ. 17): Ապստամբութիւնը՝ նպատակ էր:

Բայց Աստուծոյ սէրը աւելի զօրաւոր է: Յիսուս մեռաւ ապստամբներուն համար եւ բաց ձգեց վերադարձի դուռը: «Վերադարձի՛ր, ո՛վ ուխտադրուժ Իսրայէլ,- կը պատգամէ Տէրը.- Իմ բարկութիւնս ձեր վրայ չեմ թափեր, քանի որ ես կարեկից եմ: ... Միայն թէ գիտակցի՛ր անօրէնութեանդ, քանի որ Տէր Աստուծոյդ դէմ ապստամբեցար» (Հմ. 12-13): Եկէ՛ք վազենք դէպի Հայրը, ուր կը գտնենք Իր ներումը, սէրը եւ կարեկցութիւնը:

**Աղօթք** - Սիրելի Յայր, շնորհակալ եմ՝ Զու ներողամտութեանդ համար: Եկած եմ տո՛ւն՝ Զու մօտդ: Ամէն:

**Ե՞րբ կը փորձես վերահսկել իրավիճակներուն՝ անմիտ կամ սխալ ձեւով: Ինչպե՞ս անտեսած ես Աստուած եւ ինչպե՞ս կրնաս վերադառնալ Իր մօտ:**

Աստուած տուաւ մեզի ո՛չ թէ երկչոտութեան՝ այլ զօրութեան, սիրոյ ու խոհեմութեան հոգիս: [Բ. Տիմ. 1. 7]

## ՆՈՒԻՐՈՒՄԻՆ ԳԻՆԸ

**Ք**րիստոնեայ առաջնորդներու քսաներկու հոգինոց խումբ մը՝ կէ՛ս օր ճամբորդեց, զաղտնի հանդիպելու եւ սորվելու ուրիշ երկիրէ մը եկած՝ հովիւէ մը: Եթէ բռնէին հովիւը, ան պիտի աքսորուէր, իսկ միւսները՝ երեք տարիներով պիտի բանտարկուէին: Այդ քսաներկուքէն տասնո՛ւթն՝ արդէն բանտարկուած էին, Յիսուսի հանդէպ իրենց ունեցած հաւատքին համար:

Երբ հովիւը բաժնեց տասնհինգ Աստուածաշունչ, որոնք ինք բերած էր, կին մը իր ունեցած գիրքը՝ տուաւ ուրիշին: Ան, շատերուն նման, արդէն սերտած էր՝ Սուրբ Գիրքին գլուխները, որպէսզի անոր իմաստութիւնը իր սիրտին մէջ պահէ, եթէ կրկին բանտ երթայ: Կինը՝ ետքը խնդրեց հովիւէն աղօթել, որպէսզի իրենց եկեղեցին ազատութեամբ կարենայ հաւաքուիլ ինչպէս անոր եկեղեցին կ'ընէր: Բայց հովիւը, զարմանալով անոնց պատրաստակամութեան՝ զոհուելու, հալածուելու եւ բանտարկուելու վտանգներուն, աղօթեց՝ որ իր եկեղեցին դառնայ նո՛յնքան հաւատարիմ ու նուիրուած՝ ինչպէս իրենցը:

Աշխարհի շուրջ եղող հաւատացեալներ՝ հալածանքներու կենթարկուին իրենց ունեցած հաւատքին համար. ոմանք աւելի խիստ, իսկ ուրիշներ աւելի մեղմ: Բայց բոլոր հաւատացեալները կրնան գայթակղիլ ու վախնալ, երբ Յիսուսի համար ապրելու գինը բարձրանայ: Սակայն՝ Սուրբ Հոգին մեզ զօրացուցած է՝ Աստուծոյ ստացած պարգեւները ի գործ դնելու «զօրութիւն, սէր եւ խոհեմութիւն» (Բ. Տիմ. 1. 7): Աստուած մեզ պիտի օժանդակէ քաջութեամբ եւ գթութեամբ՝ հռչակելու Աւետարանը, ուր որ ալ առաջնորդէ: Ահա՛ թէ ինչու անոր կատարած բոլոր գործերուն պատճառով (Հմ. 9-10), մենք կրնանք նուիրումով ընդունիլ Քրիստոսի հետեւելու զոհողութիւնը եւ ամո՛ւր բռնելու «ողջամիտ խօսքերը՝ հաւատքով եւ Քրիստոս Յիսուսի մէջ եղած սիրով» (Հմ. 13):

**Աղօթք** - Հօգօր Աստուած, կը խնդրեմ՝ խորացո՛ւր նուիրումս՝ Զեզ ճանչնալու եւ քաջութեամբ բաժնելու Զեզ՝ ուրիշներու հետ: Ամէն: **Ինչպե՞ս զոհողութիւն կատարեցիր՝ որոնելու եւ բաժնելու Յիսուսը: Որո՞ւ հետ պիտի բաժնեկցիս Աւետարանը այսօր:**

Ո՛չ մէկը անոր խօսք մը ըսաւ, որովհետեւ տեսան թէ անոր կոտտանքը յոյժ սաստիկ էր: [Յոթ 2. 13]

## ՆԱՏԻԼ ԿՈՏՏԱՅՈՂԻՆ ՅԵՏ

«Նայրի՛կ, գլուխս կը ցաւի»: «Նայրի՛կ, շատ կը պաղիմ»: «Նայրի՛կ, ոտքերս կը շփե՞ս»:

Բարձր ջերմութիւն, դող եւ մարմինի ցաւեր՝ սաստիկ կերպով իջան իմ դեռահաս աղջկանս վրայ: Կ'ուզէր, որ ամէն ինչ լաւանար: Բայց աւելի շատ կ'ուզէր, որ մօտը մնայի: Վերջապէս՝ տարինք զինք շտապ օգնութեան: «Ժահր է», ըսին: Ո՛չինչ կարելի է ընել, բացի համբերութեամբ անցընել զայն:

Այդ օրը երկար ժամեր նստած մնացի հիւանդ աղջկանս մօտ: Շփեցի անոր ոտքերը, տուի դեղերը, իսկապէս կ'ուզէի, որ ան լաւանար: Երբեմն՝ իմ եսակեզրոն կողմս կը դժգոհէր. «Դժուար բան է՝ այս»: Իրաւ է՝ դժուար է՝ նստիլ ու դիմանալ ուրիշին ցաւին, մօտէն տեսնել անոր տառապանքը:

Յոբի ընկերները եւս՝ մօտէն տեսան անոր ցաւը: Այս երեք մարդերը՝ շատ անգամ արդար կերպով, կը քննադատուին՝ Յոբին հետ իրենց յետագայ վատ վարմունքին համար: Բայց յաճախ կը մոռնանք, որ սկիզբը՝ անոնք պարզապէս նստած էին անոր կողքին: «Անոր հետ եօթը օր ու եօթը գիշեր գետինը նստան. ո՛չ մէկը անոր խօսք մը ըսաւ, որովհետեւ տեսան թէ անոր կոտտանքը յոյժ սաստիկ էր» (Յոբ. 2. 13):

Յոբի ընկերները՝ մեզի կը յիշեցնեն, որ երբ մէկը, որու կը սիրենք, ցաւի մէջ է, մեր ներկայութիւնը – հոն ըլլալը, նոյնիսկ առանց խօսքի – շատ անգամ ամենէն կարեւորն է: Անոնց օրինակը կը սորվեցնէ, թէ գուցէ՛ չգիտնանք ի՞նչ ըսել, սակայն պարզապէս մէկու մը կողքին նստիլը՝ իրենց ցաւին մէջ, կրնայ ըլլալ ամենամեծ պարգեւը, որ կրնանք տալ:

**Աղօթք** - Երկնաւոր Յայր, գոհութիւն՝ Յիսուսը ուղարկելուդ համար՝ փրկելու մեր տառապող աշխարհը: Կը խնդրե՛մ՝ օգնէ ինձի նկատելու այն անձերը, որոնց կրնամ քաջալերել՝ իրենց ցաւերուն մէջ: Ամէն:

**Ո՞վ է, որ այսօր կը տառապի ու կ'երազէ աջակցութիւն ունենալ: Ինչպե՞ս կրնաս ներկայ ըլլալ անոր կողքին:**

Տերոջ քով՝ մէկ օրը հազար տարուան պէս է, ու հազար տարին՝ մէկ օրուան պէս: [Բ. Պետ. 3. 8]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԺԱՄԱՆԱԿԸ

**Մ**ինչեւ 1967 թուականը, ժամանակի միաւորները կը չափուէին աստղաբաշխական օրինաչափութիւններով. երկրի պտուտկումով եւ արեւին շուրջ անոր շարժումով: Բայց դարերու ընթացքին, խնդիր մը յայտնուեցաւ: Երկիր մոլորակը՝ իրապէս կամաց-կամաց կը դանդաղի: Գիտնականները պարզեցին, որ «երկվայրկեան» կոչուած ժամանակի միաւորը այժմ աւելի երկար է, քան առաջ: Դանդաղ զարգացում մըն է, սակայն Քրիստոսի օրերէն ի վեր, աշխարհը՝ «կորսնցուցած» է շուրջ երեք ժամ չափուած ժամանակ մը:

Ի հարկէ, Աստուած ստեղծեց ժամանակը չափելու միջոցները. երկնային պտոյտները եւ շրջանառութիւնները: Թէեւ գիտական հաշուարկները թերեւս ճիշդ չեն՝ քան ինչ որ կը կարծէինք, բայց մենք հաստատ կը կանգնինք՝ Պետրոսի խօսքին վրայ. «Տէրոջ քով՝ մէկ օրը հազար տարուան պէս է» (Բ. Պետ. 3. 8): Ան կը հակառակի այն կասկածողներուն, որոնք գանգատեցան թէ Յիսուս դեռ չէր վերադարձած: «Տէրը չի յապաղիր իր խոստումը գործադրելու մէջ, ինչպէս ոմանք յապաղած կը համարեն» (Հմ. 9): Աստուած կը գործէ Իր ժամանակին մէջ, Իր նպատակին համար:

Եւ աւելին՝ Աստուծոյ «ժամանակը» ծնած է Իր սէրէն. «Համբերատար է մեզի հանդէպ. որովհետեւ կը փափաքի որ ո՛չ մէկը կորսուի» (Հմ. 9): Յիսուս պիտի վերադառնայ, եւ Աստուած կ'ուզէ, որ իւրաքանչիւր մարդ ունենայ Իր մօտ գալու հնարաւորութիւնը: Ա՛յս Իր սիրոյ արտայայտութիւնն է: Մինչ այդ, մենք կոչուած ենք «փութալու՝ որ ան գտնէ մեզ խաղաղութեան մէջ, անբիծ եւ անարատ» (Հմ. 14):

Ժամանակը, Աստուած եւ սէրը՝ իրարու հետ կապուած են: Այս վերջին օրերուն, Աստուծոյ սէրը երբէ՛ք խամբած չէ: Ա՛ն՝ միակ հաստատ ճշմարտութիւնն է:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, միտքս կը շփոթի՝ երբ կը փորձեմ հասկնալ ժամանակի խորքը, բայց կը խնդրեմ՝ օգնէ՛ ինձի ընդունելու, որ իմ ժամանակներս՝ Քու ձեռքերուդ մէջն են: Ամէն: **Ինչպէ՞ս Աստուծոյ եւ ժամանակի մասին մտածելը կը փոխէ կեանքդ: Ինչպէ՞ս տարբեր ձեւով կրնաս ապրիլ այս գիտակցութեամբ:**

Դո՛ւք էք աշխարհի լոյսը: [Մատթ. 5. 14]

## ԼՈՅՍ ՄԸ ԸԼԼԼԸՆ՝ ՔՐԻՍՏՈՍԻ ՀԱՄԱՐ

**Ե**րբ աշխարհի դպրոցները փակուեցան եւ աշակերտները տուեցան զրկուեցան՝ Պսակաւոր Համաճարակին ընթացքին՝ առողջապահական եւ անվտանգութեան նկատառումներով, դպրոցներու շէնքերն ու մարզադաշտերը մնացին դատարկ: Մինչ գիտակցելով, որ շատեր աւելի մեծ տառապանքներու փորձառութիւնը կ'ունենային այս համաճարակէն, ուսուցիչները փնտռեցին ձեւեր՝ իրենց աշակերտներուն ցոյց տալու թէ կարօտցած էին իրենց եւ քաջալերելու զանոնք, որ շարունակեն յարատեւել իրենց դասերուն մէջ՝ այս դժուարին ժամանակներուն ընթացքին: Շատ դպրոցներ՝ սկսան «Եղի՛ր Լոյսը» կոչուած նախաձեռնութիւնը, ուր ամէն գիշեր՝ կը վառէին դատարկ մարզադաշտերուն լոյսերը:

Յիսուս, իր երկրային կեանքի ընթացքին, տուաւ իր իսկ սեփական՝ «Եղէ՛ք Լոյսը» մարտահրաւէրը. ըսելով՝ որպէս իրեն հետեւողները՝ պէտք է մեր «լոյսը փայլի մարդոց առջեւ» (Մատթ. 5.16): Այս հրաւէրը աւելի բարձր նպատակ ունէր՝ քան պարզապէս քաջալերանք կամ բարոյական աջակցութիւն. անոր փոխարէն՝ մեր կամեցողութիւնը ապացուցանելու է այն լոյսը՝ դիտող աշխարհին, որ Յիսուս դրած է մեր մէջ թէ ո՞վ է Աստուած: Մեր ապրած կեանքը՝ թէ խօսքով եւ թէ գործով, ցոյց կու տայ այն յոյսը, որ Յիսուս տուած է մեզի, դարձնելով զայն տեսանելի՝ բոլորին, ինչպէս ճրագ մը՝ դրուած աշտանակի վրայ:

Յիսուս մեզ կը կոչէ՝ «աշխարհի լոյսը» եւ կը հրաւիրէ մեզ լուսաւորելու ուրիշներու ճամբաները՝ իր լոյսով, որ կը շողայ մեր մէջ, երբ անոնք մուտք ճամբայէ մը կ'անցնին: Այն մարդոց համար, որոնք տակաւին չեն ճանչնար Յիսուսի ընծայած լոյսը, մեր ապրած կեանքին միջոցով՝ իր լոյսը տարածելով՝ կրնանք զանոնք առաջնորդել դէպի Աստուած՝ յոյսի միակ աղբիւրին:

**Աղօթք** - Սիրելի Յիսու՛ս, շնորհակալ եմ այն յոյսին համար, որ ինձի տուիր: Կը խնդրեմ՝ գործածէ զի՛ս՝ ցոյց տալու Քու լոյսդ աշխարհին մէջ՝ իմ ապրած կեանքիս միջոցով: Ամէն:  
**Որո՞ւ մէջ կը տեսնես՝ Յիսուսի լոյսը:** Ինչպէ՛ս կրնաս այդ լոյսը սփռել ուրիշներու կեանքերուն մէջ:

Իսրայելի որդիները յօժարակամ ընծայ բերին Տէրոջ - ամէն մարդ կամ կին, որ յօժար սիրտ ունէր բերելու ամէն տեսակ գործի համար: [Ել. 35. 29]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԸՆԾԱՅՈՒՄԾ ԿԵԱՆՔԵՐ

**Կ**ոթողի մը տախտակին վրայ գրուած էր. «Գո՛հ եմ Աստուծմէ՛ Իր բարութեան համար, որ արտօնեց ինծի մասնակից ըլլալու այս լայն մայրուղին կառուցելու գործին մէջ, որպէս շրջանակ մը՝ ա՛յն գեղեցիկ պատկերին շուրջ, զոր Ինք ստեղծեց»: Այս գրութիւնը կը վերագրուի մայրուղիի ճարտարագէտ Սամուէլ Քրիսթոֆըր Լէնքեսթըրին (Samuel Christopher Lancaster)՝ 1915 թուականին: Ան կը կանգնի գեղեցիկ տեսարժան վայրի մը մօտ մայրուղիին վրայ, զոր ինք նախագծած է. ճամբայ մը, որ վարորդները կը տանի ներշնչող Գոլոմպիա Գետի Հովիտով (Columbia River Gorge), անտառներով, ջրվէժներով եւ ժայռոտ բլուրներով:

Փորձութիւն է՝ մեր ունեցած միջոցներուն եւ նուաճումներուն համար՝ վարկ փնտտելը: Բայց ինչպիսի՞ն պիտի ըլլար, եթէ անոնց մասին մտածէինք՝ որպէս խոնարհ «շրջանակ» մը՝ Աստուծոյ գլուխ գործոցին շուրջ: Մէկ օրինակ մըն՝ երբ Մովսէս հրաւիրեց Իսրայէլացիները՝ ընծաներ բերելու տաճարին շինութեան համար (Ել. 35. 5): «Բոլոր պատարաստակամ սիրտ ունեցողներն ու բոլոր հոգիով յօժարողները եկան եւ Տէրոջ բարձրացնելիք ընծայ բերին», իրենց ունեցածը՝ ազնիւ մետաղ, քարեր, կտաւներ, կաշի, փայտ, բուրաւէտ համեմունքներ եւ իւղեր (Հմ. 21-28): Այս թանկարժէք նիւթերը տրուեցան կամաւոր սիրտով՝ կատարելու Աստուծոյ պատուիրանքը (Հմ. 29): Ոմանք գեղարուեստաւորներ էին՝ յատուկ ձիրքով օժտուած, բայց իւրաքանչիւրն ալ բա՛ն մը ունէր տալու ինչպէս այն կիները, որոնք հմտութեամբ այծի մազ մանեցին (Հմ. 26):

Այն ատեն ալ, այսօր ալ, ամենէն կարեւորը ընծայողին սրտին վիճակն է: «Զեր մէջէն բարձրացնելիք ընծա՛յ առէք Տէրոջ» (Հմ. 5): Այս է այն պահը, երբ մեր ունեցածները կը դառնան Աստուծոյ գործին լաւագոյն ծառայողը:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, երբեմն կը խեղդուիմ՝ ինքզինքս փառաբանելու փափաքով: Կը խնդրե՛մ՝ օգնե՛ ինծի, որպէսզի կեանքս Քեզի փառք բերէ: Ամէն:  
**Ի՞նչ պարգէւներ ու միջոցներ ունիս ձեռքիդ տակ: Ինչպե՞ս կրնան անոնք ծառայել Աստուծոյ փառքին համար**





Երեքպատիկ դերձանը դիւրաւ չի փրթիր: [Ժող. 4. 12]

## ՍՏԵՂՈՒԱԾ ԶԱՄԱՅՆՔԻ ԶԱՄԱՐ

**Ե**րբ ամուսինս՝ Ալըն (Alan) եւ ես որոշեցինք տեղափոխուիլ Երկրի միւս ծայրը գտնուող՝ Ֆիլատէլֆիա (Philadelphia) քաղաքը, որպէսզի ան շարունակէ իր ուսումը, ես դեռ գործ չունէի եւ գաղափար ալ չունէինք, թէ ինչպէ՞ս պիտի կարենանք վճարել ուսանողական բնակարանի համար: Գիրակի օր մը, երբ տեղափոխուելու ժամանակը մօտ էր, եկեղեցիի անդամ մը ծանօթացուց մեզի համալսարանի նախկին ուսանողի մը, որ գիտէր մատչելի վարձքով բնակարան մը գտնել: Այս մեկնելէ առաջ՝ աշխատակից մը՝ ինծի տուաւ Քրիստոնէական միսիոնարութեան մը մէջ աշխատող մարդու մը անունը: Աստուած պատասխանեց մեր աղօթքներուն եւ մեզի համար ճանապարհներ բացաւ՝ ներառեալ բնակարան եւ աշխատանք, իր ժողովուրդին միջոցով: Ընտանիք եւ ընկերներ՝ օգնեցին մեզի տեղափոխուելու եւ աղօթքով ուղուծիւն տուին:

Ժողովողի գիրքին հեղինակը՝ կը խօսի կեանքի մէջ առանձին չընթանալու օգուտներուն մասին. «Երկուքը մէկէն լաւ է» (Չ. 9): Երկուքը աւելի շատ գործ կը կատարեն. կրնան իրարու օգնել դժուարութիւններու մէջ, ընկերներ կ'ըլլան ու գիրար կը պաշտպանեն (Հմ. 9-11): Ան կ'աւելցնէ. «Երեքպատիկ դերձանը դիւրաւ չի փրթիր» (Հմ. 12): Համայնք մը նոյնիսկ աւելի մեծ օգուտներ ունի՝ աւելի շատ միջոցներ եւ աջակցութիւն:

Ալըն ու ես՝ օգնութիւն ստացանք այն համայնքէն, որ մեր ետին ձգեցինք: Իսկ Աստուած՝ օգնեց մեզի՝ նոր համայնք ստեղծելու, որպէսզի տան մէջ ըլլալու զգացումը ունենանք: Եթէ դուն քեզ առանձին կը զգաս՝ աղօթէ, որ Աստուած քեզի ընկեր մը տա՛յ, լաւ եկեղեցի մը, կամ ալ ծառայելու տեղ մը՝ համայնքի մը մէջ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, շնորհակալ եմ, որ շրջապատեցի՛ր զիս բարեկամներով եւ ընտանիքով: Կը խնդրե՛մ, օգնե՛ ինծի՝ ուրիշներ հրաւիրելու՝ Քու համայնքիդ մէջ: Ամէն:

**Ո՞ր համայնքներուն մաս կը կազմես դուն: Ինչպէ՛ս գիրար կ'օգնէք:**

Համբերութիւնը թող ունենայ իր կատարեալ գործը, որպէսզի կատարեալ եւ ամբողջ ըլլաք, եւ ոչինչ պակսի ձեզի: [Յակ. 1. 4]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՍՊԱՍԵԼ

**Ճոզէֆ (Joseph)**՝ յուսահատ՝ կը գննէր աշխատանքի ծանուցումները: Որպէս սպասարկու աշխատած ըլլալով, բաւական լաւ վարձատրուած էր, բայց ճաշարաններուն շաբթուան վերջին հերթապահութիւնները, դժուարացուցած էին՝ անոր եկեղեցի յաճախելը: Ան գանգատելով կ'ըսէր. «Ինչո՞ւ Աստուած իմ աղօթքիս չի պատասխանէր: Չուզե՞ր՝ որ ես եկեղեցի երթամ»:

Մէկ տարի տեւեց, մինչեւ որ Ճոզէֆ հասկցաւ թէ պէտք էր իր ակնկալութիւնները փոխէ եւ փորձէ ուրիշ մարզի մէջ գործ մը գտնել: Եւ վերջապէս՝ գտաւ այնպիսի գործ մը, որուն հերթապահութիւնները շաբթուան ընթացքին էին: Շնորհակալ ըլլալով Աստուծոյ, ան գիտակցեցաւ, որ երկար սպասումը իր որոշումներուն մէջ, աւելի հասուն ըրած էին զինք: Այս աշխատանքային փոփոխութեան գործընթացը ուսուցանած էր անոր նաեւ, թէ ի՞նչ կը նշանակէ կեանքի մէջ տոկալ եւ վստահիլ Աստուծոյ՝ իր ծրագիրները՝ իր ժամանակին յայտնելու:

Յակոբ՝ նոյնը գրեց՝ փորձութիւններու դիմաց գտնուող եկեղեցիի մը: Անոնց քաջալերեց չհրաժարիլ՝ ըսելով. «Համբերութիւնը թող ունենայ իր կատարեալ գործը, որպէսզի կատարեալ եւ ամբողջ ըլլաք» (Յակ. 1. 4): Աստուծոյ իմաստութիւն խնդրելը, սպասելը եւ հաստատ մնալը (Հմ. 5-6)՝ պիտի սնուցանէին՝ ո՛չ միայն անոնց համբերութիւնը եւ Աստուծոյ հանդէպ վստահութիւնը, այլ նաեւ պիտի նպաստէին իրենց հոգեւոր աճման, երբ աւելի ճանչնային իրենք զիրենք եւ Աստուած:

Սպասելը Աստուծոյ պատասխանին՝ կրնայ դժուար ըլլալ, բայց այդ գործընթացը մեզի աւելի հասուն եւ տոկուն կը դարձնէ, կը զօրացնէ մեր հաւատքը եւ կը սորվեցնէ, թէ ի՞նչ կը նշանակէ ճշմարիտ վստահութիւն՝ Աստուծոյ հանդէպ:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ՝ այն վստահութեան համար, որ Դո՛ւն կարեկից ես եւ կը լսես իմ աղօթքս: Կը խնդրե՛մ, տո՛ւր ինձի իմաստութիւն եւ համբերութիւն՝ շարունակելու վստահիլ Զեզի: Ամէն:

**Ի՛նչն է ամենէն դժուար մասը՝ Աստուծոյ պատասխանին սպասելու ժամանակ: Ինչպէ՞ս կրնաս Անոր զօրութենէն օգտուիլ՝ շարունակելու վստահիլ Իրեն:**

Առտուն քու կարեկցութեամբդ պիտի ցնծամ: [Սաղմ. 59. 16]

## ՏՆՐՈՒԹԵՆԷՆ ԱՆԴԻՆ

**Գ** անատացի երգիչ եւ երգահան Կօրտըն Լայթֆուֆ (Gordon Lightfoot)՝ յայտնի է իր մնայուն դասական երգերով՝ *ինչպէս՝ «Համընտ Ֆիցճէրըլտի Նաւաբեկութիւնը» (The Wreck of Edmund Fitzgerald) եւ «Եթէ Կրնաս Միտքս Ընթերցել» (If You Can Read My Mind) երգերով: Բայց անոր քիչ ծանօթ երգերէն մէկը՝ «Արշալոյսի Երգասացը» (The Minstrel of Dawn) անունը կը կրէ: (Երգասացը միջնադարեան աշուղ մըն է, որ իր բանաստեղծութիւնը երաժշտութեամբ կը ներկայացնէ): Լայթֆուֆի երգասացը, մեզի նման՝ կ'երագէ «աւելի ուրախ ըլլալ քան տխուր»: Թէեւ միշտ կան «տխուր» բաներ, որոնց մասին կարելի է մտածել կամ սուգուիլ անոնց մէջ, երգասացը կ'ընտրէ նայիլ ուրախ բաներու՝ երբ օրը սկսի եւ ապա զանոնք երգել:*

Սաղմոսներու երգասացը Դաւիթ՝ գրեց նման տող մը. «Առտուն քու կարեկցութեամբդ պիտի ցնծամ» (Սաղմ. 59. 16): Դաւիթի համար բաւական «տխուր» բաներ կային մտածելու՝ թշնամիներ, որոնք կը փորձէին զինք սպաննել, մարդիկ՝ որոնք դաւերով ու զրպարտութիւններով կը փորձէին վնասել իրեն (Հմ. 1-3): Ան երգեց. «Անոնք իրիկունը պիտի վերադառնան՝ շունի պէս ոռնալով, եւ քաղաքին մէջ պիտի շրջին» (Հմ. 14): Բայց Դաւիթ կը նախընտրէ՝ օրը սկսելու պահուն, ուշադրութիւնը ուղղել՝ ո՛չ միայն ուրախ բանի մը, այլ բարեգութ մէկու մը Աստուծոյ վրայ: Եւ ապա կ'երգէ Աստուծոյ սիրոյն մասին. «Ո՛վ իմ զօրութիւնս, քեզի՛ սաղմոս պիտի երգեմ, քանի իմ պատասպարանս Աստուած է, ինծի կարեկից Աստուածը» (Հմ. 16-17):

Դուն գուցէ երգիչ եւ երգահան չե՛ս, բայց կրնաս ըլլալ առաւօտեան երգասաց մը: Դաւիթին նման, կրնա՛ս ըսել Աստուծոյ. «Ես քու զօրութիւնդ պիտի երգեմ, առտուն քու կարեկցութեամբդ պիտի ցնծամ» (Հմ. 16):

**Աղօթք** - Աստուած՝ ի՛մ ապաւենս ու վահանս, այս առաւօտ՝ կը նախընտրե՛մ երգել տխրութենէն անդին՝ Քու հաստատուն սիրոյդ մասին: Ամէն: **Ի՛նչն է, որ քեզի տխրութիւն կամ մտահոգութիւն կը պատճառէ: Ինչպէ՞ս պիտի արտայատուի Քու կողմէ՝ առաւօտեան Աստուծոյ սիրոյ մասին երգելը:**

Մենք ... ամեն ատեն Յիսուսի համար մահուան կը մատնուիկնք: [Բ. Կորնթ. 4. 11]'

## ԸՆԾԱՅ ՄԸ՝ ՅԻՍՈՒՍԻ ՀԱՄԱՐ

**Վ**իքթորեան (Victorian) դարաշրջանի բանաստեղծուհի՝ Քրիստինա Ռօզէթթի (Christina Rossetti)՝ իր յուզիչ «Լաւազոյն Յարուլթիւն» կոչած բանաստեղծութեան մէջ գրած է. «Աչքերս կը բարձրացնեմ, բայց տխրութեամբ մշուշոտ՝ յաւիտենական բարձունքները չեմ տեսներ»: Ան կը նկարագրէ յոյսի փնտռտուքը՝ այն պահերուն, երբ յոյս չէր զգար, «արցունքներէն դատարկուած, վախերէն եւ յոյսերէն զուրկ»: Բայց Ռօզէթթիի յոյսը աւելի խոր արմատներ ունէր, քան իր յուսահատ զգացումները: Թէեւ չէ՛ր տեսներ ո՛չ ծիլ, ո՛չ կանաչուլթիւն» յարուլթենէն բխող նոր կեանքի նշաններ, ան կը խոստովանէր աղօթելով. «Բայց պիտի բարձրանայ, ո՛վ Յիսուս բարձրացիր՝ իմ մէջս»:

Բ. Կորնթացիս նամակին մէջ, Պօղոս առաքեալ եւս կը խօսի իր կրած տառապանքներուն մասին, ըսելով. «Չափէն աւելի ծանրաբեռնուեցանք, մեր կարողութենէն աւելի՛ ա՛յնքան որ նոյնիսկ յուսահատեցանք կեանքէն» (1. 8): Բայց այդ յուսահատութիւնը զինք առաջնորդեց իր միակ յոյսը դնելու Աստուծոյ վրայ, «որ մեռելները կը յարուցանէ» (Հմ. 9):

Պօղոս նաեւ սորվեցաւ, որ երբ աւետարանի յոյսը կը կրենք՝ մեր դեռ անլթերի «հոգէ անօթներու»՝ մեր մարմիններուն՝ մէջ, Քրիստոսի յարուլթեան կեանքը եւ յոյսը կը ճառագայթեն մեր մէջէն, ցոյց տալով, «որպէսզի զօրութեան գերազանցութիւնը ըլլայ Աստուծմէ, եւ ո՛չ թէ մեզմէ» (4. 7):

Այս փոփոխութիւնը կը պատահի նաեւ Ռօզէթթիի բանաստեղծութեան մէջ: Երբ իր կոտրած սիրտը կը բարձրացնէ դէպի Աստուած, իր աղօթքը կը դառնայ ա՛յն՝ որ իր կեանքի կտորները՝ «կրակին մէջ նետուին», որպէսզի ձուլուին եւ փոխուին իբրեւ զոհաբերութիւն՝ «Իրեն՝ իմ Թագաւորիս»: Բանաստեղծութիւնը կը վերջանայ պարզ խօսքով. «Ո՛վ Յիսուս, ըմպէ ինձմէ»:

**Աղօթք** - Հայր, շնորհակալ եմ, որ յոյսը իրական է, նոյնիսկ՝ երբ ես չեմ զգար: Կը ինդրեմ՝ օգնէ՛ ինձի՝ կեանքս Քեզի նուիրելու: Ամէն: Ինչպէ՞ս կրնայ Աստուծոյ մեր ցաւը յայտնելը՝ մխիթարութիւն եւ յոյս բերել: Չզացա՞ծ ես՝ որ Աստուած կը փոխէ քու կեանքիդ կտորները:

Ո՛վ Տեր, իմ տիրոջս Աբրահամի՛ Աստուածը. այժմ, եթէ այս գացած ճամբաս յաշոողնես: [ԹՆ. 24. 42]

## ՔՐՈՂԱ ԱՍՏՈՒԾԸ

**Ա**մինան (*Amina*) Քրիստոսի եկաւ՝ այնպիսի երկրի մը մէջ, ուր Քրիստոնէութիւնը օրէնքով՝ արգիլուած էր: Ան սկսաւ իր նոր հաւատքը բաժնել իր եղբօր հետ, սակայն ան մերժեց իր քրոջ յորդորները: Յետոյ՝ եղբայրը վտանգաւոր թոքային հիւանդութիւն մը զարգացուց: Մինակ մութ հիւանդանոցի սենեակի մը մէջ, շնչահեղձ էր: Պատրաստ էր Յիսուսը ճանչնալ՝ որպէս Աստուծոյ Որդի եւ կը վախնար բարձրաձայն Քրիստոսի անունը արտասանելու: Մէկը կրնար գինք լսել: Ուստի՝ աղաչեց. «Քրոջս Աստուածը, հիմա՛ օգնէ ինձի»: Յանկարձ՝ ան կրցաւ թեթեւ շնչել ու սենեակը անսպասելիօրէն լուսաւորուեցաւ: Այդ օրն էր՝ երբ իր ճամբորդութիւնը՝ դէպի Յիսուս սկսաւ:

Մննդոց գիրքին մէջ, Աբրահամի սպասաւորը՝ զրկուեցաւ, որ կին մը փնտռէ իր տիրոջ որդիին համար: Նախ՝ ան աղօթեց «իւր տիրոջ՝ Աբրահամի Աստուծոյն» (ԹՆ. 24. 12): Ինչո՞ւ: Սպասաւորը գիտէր, որ Աստուած Աբրահամին ըսած էր՝ «քեզ մեծ ազգ պիտի ընեմ» (12. 2): Աստուած կրկին ըրաւ այդ խոստումը (15. 2-5), եւ «Աբրահամ հաւատաց Տէրոջ, որ իրեն արդարութիւն սեպեց ատիկա» (Հմ. 6): Սպասաւորը կրնար վստահ ըլլալ «իւր տիրոջ՝ Աբրահամի Աստուծոյն» (24. 26, 42, 48), որովհետեւ ականատես եղած էր Աբրահամի հաւատքին իրականութեան:

Մեր խօսքերով, մենք կը հրաւիրենք ուրիշներ, որ հետեւին Յիսուսի: Բայց աւելի կարեւոր է՝ թէ ինչպէ՞ս կ'ապրինք մեր կեանքը՝ անոնց առջեւ: Իրական հաւատքը՝ կենդանի Աստուծոյ հանդէպ, անհուն բան կ'ըսէ:

Թո՛ղ Աբրահամի եւ Ամինայի Աստուածը՝ մեր կեանքերը օգտագործէ՝ ուրիշներ իր մօտ բերելու:

**Աղօթք** - Իմաստուն Յայր, թող իմ կեանքս՝ Յիսուսի լոյսը արտացոլացնէ՝ ամէն բանի մէջ, որ ես կ'ընեմ: Թող ուրիշներ տեսնեն իմ մէջս ճշմարիտ հաւատք՝ Զեզի հանդէպ՝ ո՛վ Աստուած, որ կը լսես մեզ: Ամէն:

**Ե՛րբ գգացած ես Աստուծոյ միջամտութիւնը քու կեանքիդ մէջ: Ինչպէ՞ս կ'արտացոլայ քու կեանքդ՝ Աստուծոյ հանդէպ քու ունեցած վստահութիւնդ:**

Տնտես մը կը պահանջուի որ հաւատարիմ գտնուի:  
[Ա. Կորնթ. 4. 2]

## ՀԱԲՏԱՐԻՄ ՏՆՏԵՍՆԵՐ

**Մ**արտ 2024 թուականին, Ամերիկացի օդատիեզերական ընկերութիւն մը ձախողեցաւ Դաշնակցային Օդային Վարչութեան կողմէ կատարուած անվտանգութեան քննութիւնը: Քննութեան ընթացքին՝ քանի մը վտանգաւոր միջադէպեր պատահեցան, որոնցմէ մէկը՝ կը վերաբերէր թռիչքի մը, որուն ընթացքին՝ օդանաւի ներսի ճնշումը վտանգաւոր կերպով վար իջաւ, երբ օդանաւին դուռը ծածկող յատուկ տախտակ մը՝ քակուած էր: Ընկերութեան բանբեր մը ընդունեց, թէ ձախողութիւնները եղած էին այն պատճառով, որ աշխատակիցներուն տրուած հրահանգները՝ դժուար հասկնալի էին եւ յաճախակի փոխուած էին՝ պատճառելով, որ անոնք չհետեւէին հաստատուած ընթացակարգերուն:

Պօղոս՝ Կորնթոսի եկեղեցիին ըսաւ, որ իրենք պէտք է իրեն եւ միւս առաջնորդներուն դիտեն, որպէս Քրիստոսի հաւատարիմ եւ հաստատուած «սպասաւորներ»: Ան յայտարարեց, թէ իրեն «վստահուած» էր՝ որպէս Աստուծոյ տնտես մը (Ա. Կորնթ. 4. 1-2): Պօղոսի օրերուն, տնտեսները հաւատարիմ անձեր էին, որոնք պատասխանատու էին՝ տնային գանձերու եւ պաշարներու կառավարութեան եւ բաշխումին: Ամէն բանէ աւելի, այս պատասխանատուութեամբ օժտուած անձերուն համար, հիմնական պահանջը՝ հաւատարիմ ըլլալ էր: Պօղոս ինզիմք նկարագրեց՝ որպէս տնտես մը, որ «ձեռքերով գործեց»՝ Աստուծոյ ստացած ամէն բան ճշգրիտ կերպով օգտագործելով (Հմ. 12), յատկապէս Աստուծոյ իմաստութիւնը եւ աւետարանին խորհուրդները (Հմ. 2):

Քանի որ Յիսուս կը հայթայթէ, ջանանք հաւատարիմ տնտեսներ ըլլալ՝ հետեւելով Իր հաստատած եւ անթերի չափանիշին՝ մեր հոգեւոր փորձառութեան, աշխատանքային պարտականութիւններուն եւ անձնական յարաբերութիւններուն մէջ:

**Աղօթք** - Երկնաւոր Հայր, կ'աղաչեմ՝ օգնէ՛ ինձի, որպէսզի հաւատարիմ տնտես մը ըլլամ՝ Քեզի համար: Ամէն:  
**Ինչպէ՛ն կրնանք հաւատարիմ ըլլալ՝ այն վստահութեան, որ Աստուած տուած է մեզի: Ի՛նչ կը նշանակէ քեզի՝ տնտես մը ըլլալ՝ Աստուծոյ համար:**

Տերը Յետևի ըսաւ. «Մի՛ վախնար ու մի՛ գարհուրիր: [Յեւ. 8. 1]

## ՅԻՇԵՑՈՒՄ ԱՍՏՈՒԾՈՅ ՆԵՐԿԱՅՈՒԹԵԱՆ

**Մ**առերուն ճիւղերը, չորցած եւ անկանոն տերեւներով՝ վեր բարձրացած էին, կարծես ձեռքերը երկինք բարձրացուցած ըլլային: Քայիֆորնիայի մէջ գտնուող Յեսուի Ծառերու Ազգային Պուրակին (Joshu Trees National Park) մէջ ճեմելու ատեն, այդ իւրայատուկ ծառերը՝ մեծ հետաքրքրութիւն առաջացուցին: Ծառեր կը հաւատան՝ թէ այս ծառերը, «Յեսուի Ծառեր» կոչուեցան ռահվիրաներու կողմէ, որոնք յիշեցին Հին Կտակարանի պատմութիւնը, ուր Յեսու բարձրացուց իր տէգը՝ գեղարդը՝ Աստուծոյ ներկայութեան եւ օգնութեան նշան ըլլալու համար:

Քանանու երկիրը մոտաք գործելէ ետք, Իսրայէլացիները Աստուծոյ օգնութեան կարիքը ունէին՝ պատերազմի մէջ: Գայի քաղաքին դէմ իրենց մեղքին պատճառով կրած պարտութենէն ետք (Յես. 7. 11-12), անոնք հաւանաբար վախնալ սկսած էին՝ նոր պատերազմի մտքէն: Սակայն Աստուած քաջալերեց Յեսուն. «Մի՛ վախնար եւ մի՛ գարհուրիր» (8. 1): Ապա Աստուած Յեսուի հրամայեց. «Ձեռքդ եղող տէգը երկարէ՛՛ դէպի Գայի, քանի որ գայն քու ձեռքդ պիտի մատնեմ» (Հմ. 18): Յեսու հնազանդեցաւ Աստուծոյ եւ «իր ձեռքը՝ որով տէգը երկարած էր՝ ետ չքաշեց» մինչեւ որ պատերազմը շահեցան (Հմ. 26): Յաղթանակը Յեսուի ձեռքի տէգէն չէր կախուած, այլ՝ այդ տէգը Աստուծոյ խոստացած օգնութեան եւ ներկայութեան՝ նշանն էր:

Աստուծոյ ներկայութիւնը յիշեցնող բաները կրնան օգտակար ըլլալ մեզի, երբ դժուարութիւններու կը հանդիպինք: Մեր տուններուն մէջ ցուցադրուած Սուրբ Գիրքի համար մը, Աստուծոյ ստեղծագործութեան գեղեցիկ բնապատկերի մը լուսանկարը, կամ խաչէ վիզի մանյակ մը: Ասոնք ինքնին չեն օգներ մեզի, բայց Աստուած կրնայ զանոնք օգտագործել՝ Իր խոստացեալ ներկայութիւնն ու զօրութիւնը յիշեցնելու համար:

**Աղօթք** - Հայր, կը խնդրե՛մ՝ այսօրուան մարտահրաւերներուն մէջ օգնէ՛, որ յիշե՛մ Քու ներկայութիւնդ ինձի հետ: Ամէն:  
**Ի՞նչը քեզի կը յիշեցնէ Աստուծոյ ներկայութիւնը:** Ինչպե՞ս այդ յիշեցումը քեզի կ'օգնէ դիմակայելու դժուարութիւնները:

Ա՛լ ո՛չ Յրեայ կայ, ո՛չ Յոյն. ... որովհետև դուք բոլորդ մեկ եք Զրիստոս Յիսուսով: [Գաղ. 3. 28]

## ՄԷ՛Կ՝ ՅԻՍՈՒՍԻ ՄԷՁ

**Մ**արզական մրցումներ դիտելն ու մարզիկներուն հանդիպելը՝ երազի մը իրականացումն էր, երբ երիտասարդ լրագրող մըն էի եւ առիթ ունեցայ մասնակցելու՝ Ամառնային եւ Զմեռնային Ողոմպիական խաղերուն: Ըմբռնանցի այն վայրկեանները՝ դիտելով այդ մրցումները ու հանդիպելով մարզիկներուն: Տարաշխարհիկ լեզուներով խօսող ու զանազան ազգութիւններու ներկայացուցիչներու հետ միասնաբար յաջողութիւն տօնող մարզիկ տեսնելը, խորապէս հմայեց զիս:

Պատանի տարիքէս ի վեր՝ Ողոմպիական խաղերը զիս կը դրաւեն, բայց ժամանակի ընթացքին՝ այս հետաքրքրութիւնը գրեթէ մոլի սեւեռուն գաղաբար դարձած էր: Սակայն՝ երբ Ամառնային խաղերու ընթացքին՝ որոշեցի իմ կեանքս Աստուծոյ նուիրել, զգացի թէ Աստուած ինձմէ կը խնդրէր, որ հրաժարիմ մարզական այս «կուռքէն»: Բայց ազգերու նկատմամբ սէրս մնաց: Այսօր ալ՝ կը սիրեմ Ողոմպիական խաղերը դիտել, սակայն իմ սիրտս ճշմարիտ կերպով կը շարժի այն ժամանակ, երբ տարբեր ծագում ունեցող մարզիկ եկեղեցիին մէջ կամ հոգեւոր հաւաքներու ընթացքին կը հանդիպին՝ միասին աղօթելու եւ պաշտելու թագաւորներու թագաւորին: Ի՛նչ հրաշալի երկինքի համ մը՝ երկրի վրայ (Յայտ. 7. 9):

Երբ կը յիշե՛նք թէ ո՛վ ենք մենք Քրիստոսի մէջ, կը գիտակցի՛նք թէ Աստուծոյ ընտանիքին մաս կը կազմենք, եւ այդ ընտանիքը՝ միջազգային է:

Պօղոս հռչակեց Գաղատային հաւատացեալներուն. «Որովհետեւ դուք բոլորդ Աստուծոյ որդիներ էք՝ Քրիստոս Յիսուսի վրայ եղած հաւատաքով» (Գաղ. 3. 26): «Ա՛լ ո՛չ Հրեայ կամ, ո՛չ Յոյն. ո՛չ ստրուկ կայ, ո՛չ ազատ. ո՛չ արու կայ, ո՛չ էգ. որովհետեւ դուք բոլորդ մէկ էք Քրիստոս Յիսուսով» (Հմ. 28): Որպէս հաւատացեալներ, բոլորս մէ՛կ ենք Քրիստոսի մէջ՝ ամբողջ աշխարհի շուրջ:

**Աղօթք** - Յայր, գոհուիլն կու տամ եւ շնորհակալ եմ, որ Զրիստոսի մէջ միացած եմ՝ այլ հաւատացեալներու հետ: Ամէն Ի՛նչ կերպերով կրնաս սեր ցոյց տալ տարբեր ծագում ունեցող մարդոց: Ինչպէ՞ս կրնաս աղօթել ազգերուն համար:

Մեկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը: [Դուկ. 12. 15]

## ՔՐԻՍՏՈՍՈՎ ՍԱՅՄԱՆՈՒԱԾ

**Ք**անի մը տարի առաջ, նկարիչ Մայքըլ Լէնտի (Michael Landy) հաշուեց բոլոր իր ունեցածները, եւ կազմեց 7,227 բաներու ցուցակ մը: Իսկ այն՝ ինչ որ ըրաւ ատկէ ետք՝ աչք բացող երեւոյթ էր: Ան՝ Լոնտոնի ամենագրաւ շրջանին մէջ՝ հիմնեց գործարան մը եւ հրապարակաւ ոչնչացուց ամէն բան ինչ որ ունէր: Հագուստներ, նկարներ, սիրով գրուած նամակներ, նոյնի՛սկ՝ իր ինքնաշարժը - ամէն ինչ փշրուեցաւ, փոխատար գօտիով դրուեցաւ աղացող մեքենայի մը մէջ: Քաղաքացիները՝ իրարանցումով կը մտնէին ու դուրս կ'ելլէին մօտակայ վաճառքի խանութներէն, Լէնտիի կատարողական արուեստը՝ հօր հարց մը բարձրացուց. «Ո՞վ ենք մենք առանց մեր ստացուածքներուն»:

Սա՛ կարեւոր հարց մըն է, որովհետեւ մեզմէ շատեր՝ բաներ կը գտնենք մեզ «սահմանելու» կամ ապագան ապահովելու համար: Յիսուս առակ մը պատմեց՝ մարդու մը մասին, որ կուտակած էր հարստութիւն եւ որդեգրած էր սպառողական կեանք: «Ո՞վ իմ անձս, շատ բարիքներ ունիս՝ դիզուած շատ տարիներու համար. հանգչէ՛, կե՛ր, խմէ՛ եւ զուարճացի՛ր» (Դուկ. 12. 19): Բայց ի՞նչ մնաց, երբ այդ գիշեր անոր կեանքը «պահանջուեցաւ»: Միայն Աստուծոյ յանդիմանութիւնը, որովհետեւ կարեւորագոյնը՝ նկատի չէր առած (Հմ. 20-21):

Ստացուածքներ ունենալը՝ մեղք չէ՛: Մայք Լէնտին՝ տակաւին հագուստի կարիք ունէր: Բայց երբ փորձուինք կեանքը ու մեր ինքնութիւնը գտնելու՝ մեր ստացուածքներուն մէջ, Յիսուս կը յիշեցնէ. «Մէկուն ստացուածքներուն առատութենէն կախուած չէ իր կեանքը» (Հմ. 15): Ո՞վ պիտի ըլլայիր, եթէ չունենայիր բոլոր այդ ստացուածքները: Մինչեւ օրս՝ տակաւին Աստուծոյ սիրած զաւակն ես (Սաղմ. 103. 17, Եփ. 50 1): Այս հաստատուած ինքնութենէն ներս, կրնանք հարստանալ Աստուծոյ եւ ուրիշներու հանդէպ:

**Աղօթք** - Սիրելի Հայր, օգնէ՛ ինձի դեմ դնելու այն սուտին՝ որ ես ան եմ՝ ինչ որ ունիմ: Ընորիէ՛ որ փոխարէնը՝ Զեզի եւ ուրիշներու համար հարստութիւն դառնամ: Ամէն:

**Ի՞նչ կը բացայայտեն քու ստացուածքներդ քու մասիդ:** Ի՞նչ կրնայ նշանակել «հարուստ ըլլալ Աստուծոյ համար» (հմ. 21)՝ քու կեանքիդ մէջ:

Ես քառասուն տարի անապատին մէջ ձեզի բալել տուի. ձեր հանդերձները չմաշեցան ձեր վրայ, ու կօշիկդ չմաշեցաւ ոտքիդ վրայ: [Բ. Օր. 29. 5]

## ԱՍՏՈՒԱԾ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹԻՒՆՆԵՐՈՒ ՄԷՋ

**Ե**ղբօրս աղջիկը՝ Համալսարանի առաջին տարուան ուսանողուհի, ծանրաբեռնուած էր դպրոցական աշխատանքներով ու նոր կացարանին յարմարուելով: Վերջերս տեղի ունեցած ապահովութեան խնդիրներուն պատճառով, ուսումնարանը պարտադիր դարձուցած էր՝ ինքնաշարժի թոյլատուութեան տոմս ձեռք բերելը: Քանի որ այդ ալ պիտի ըլլար աւելորդ պարտականութիւն մը՝ իր ընկելիքներուն մեծ ցուցակին վրայ, առաջարկեցի, որ իր փոխարէն՝ ես ընեմ զայն: «Շնորհակալ եմ» ըսաւ ան, զարմանալով թէ որքա՛ն արագ աւարտած էի այդ գործը:

Իսկ ինչ որ ան չէր գիտէր, այն էր, որ այս «պարզ» գործը կէս օրէն աւելի ժամանակ պահանջեց՝ կապ հաստատելու Համար գրասենեակին հետ, սխալ մը շտկելու Համար իր դիմումին մէջ ու Հաւաքելու կարգ մը փաստաթուղթեր: Բայց ես այդ բաները չյայտնեցի եւ ըսի. «Որեւէ ատեն: Սիրով»:

Մէջը՝ մանրասնութիւններուն մէջ է: Այս պարագային՝ այն մանր Հարցերով զբաղիլը, որոնց մասին եղբօրս աղջիկը գաղափար իսկ չունէր: Սուրբ Գիրքը կը պատմէ Աստուծոյ սիրոյն մասին, որ կը յայտնուի իբրեւ պարզ, բայց կարեւոր մանրամասնութիւններ Իսրայէլացիներու անապատի կեանքին մէջ: Քառասուն տարի շարունակ իրենց «Հանդերձները չմաշեցան իրենց վրայ, ու կօշիկը չմաշեցաւ ոտքերուն վրայ» [Բ. Օր. 29. 5]: Իրականութեան մէջ, անոնց ոտքերը չուրեցան (8. 4):

Աստուծոյ ժողովուրդը՝ անհաւատարիմ եղած էր, սակայն Աստուած «մեծ գթութիւն» ցոյց տուաւ՝ չլքելով զանոնք (Նէ. 9. 19): «Անոնց ոչինչ պակսեցաւ» (Հմ. 21): Աստուած տրամադրեց «մեծ» բաներ՝ իր ներկայութիւնը, իր Հոգիին առաջնորդութիւնը, կերակուր եւ ջուր (Հմ. 19-20), նաեւ «փոքր», բայց անհրաժեշտ բաներ՝ Հագուստ եւ կօշիկներ:

Աստուծոյ սէրը՝ այնքա՛ն խոր է, որ ան կը տեսնէ մեր կեանքին ամէն մանրամասնութիւնը:

**Աղօթք** - Յայր, գոհութիւն քեզի՝ Քու յարատուող սիրոյդ համար: Ամէն: **Քու կեանքիդ ո՞ր մանրամասնութիւնները կը յայտնեն Աստուծոյ սէրը: Ինչպե՞ս կ'օգնեն անոնք քեզի, վստահելու իրեն:**

Յիշէ՛ քու ծառայիդ եղած խոստումը, որուն վրայ ինծի յուսալ տուիր: [Մաղմ. 119. 49]

## ԱՍՏՈՒԾՈՅ ԽՈՍՏՈՒՄՆԵՐՈՒՆ ԶԱՄԱՐ ԱՂՕԹԵԼ

«Ո՛չ, չես կրնար լիճ երթալ», ըսի աղջիկիս, մինչ գլուխս լուացարանին տակ սուզած՝ կոտրած խողովակ մը կը նորոգէի: «Պապա, խոտացար, որ գործերս աւարտելես ետք՝ կրնամ երթալ», յիշեցուց ինծի: Մոռցած էի՝ թէ ինչ ըսած էի, որովհետեւ միտքս ուրիշ բանով զբաղ էր: Իմ խնդիրս մթազնած էր տուած խոստումս:

Ինչպէ՛ս աղջիկս ինծի ըսաւ, նոյնպէս Սաղմոսերգուն ալ՝ Աստուծոյ խոստումները կը յիշեցնէ: Ան գրեց. «Յիշէ՛ քու ծառայիդ եղած խոստումը, որուն վրայ ինծի յուսալ տուիր» (119. 49): Ծնորհակալ ենք, որ ունինք երկնային Հայր մը, որ ո՛չ ուրիշ բանով միտքը զբաղցնող է եւ ո՛չ ալ մոռցող: Կարելի է մօտենալ Անոր՝ ո՛չ միայն մեր ցաւերով, խնդիրներով եւ յուսախաբութիւններով, այլեւ՝ վստահութեամբ՝ գիտնալով, որ Ան բարի Հայր է. «Ա՛յս է մխիթարութիւնս՝ իմ տառապանքիս մէջ, որովհետեւ քու խոստումդ զիս վերապրեցուց» (Հմ. 50):

Աստուած կը հրաւիրէ մեզ խորհրդածելու Իր Խօսքին վրայ, որպէսզի կարենանք Իրեն յիշեցնել՝ Իր խոստումները. ո՛չ թէ որովհետեւ Ան մոռցած է, ա՛յլ որովհետեւ կը փափաքի, որ մենք զԻնք լաւ ճանչնանք: Ահա՛ թէ ինչու՝ Սաղմոսերգուն կ'ըսէ. «Ո՛վ Տէր, քու դարաւոր դատավճիռներդ յիշցի, ու մխիթարուեցայ: ... Քու կանոններդ ինծի օրհներգներ եղան» (Հմ. 52. 54):

Իմ միտքս ուրիշ բանի վրայ ըլլալուն համար, աղջիկս պէտք ունեցաւ ինծի յիշեցնելու իմ խոստումս: Երբ ըրաւ, հաճոյքով թոյլ տուի, որ երթայ լիճ: Կարելի է գոհանալ, որ մեր երկնաւոր Հայրը՝ երբէ՛ք զբաղուած չէ՛ կամ մոռցած չէ՛: Ան կ'ուրախանայ, երբ Իր Խօսքը՝ աղօթքով կը վերադարձնենք Իրեն:

**Աղօթք** - Զայր, այս կեանքին զբաղուածութիւնը՝ դիւրութեամբ կ'ընդհատէ մտքերս: Կը խնդրե՛մ՝ օգնէ՛ ինծի յիշելու Քու ինծի տուած խոստումներդ: Ամէն:

**Ի՞նչ է Աստուծմէ քեզի տրուած խոստումներէն մէկը: Ինչպէ՞ս պիտի գոհութիւն յայտնես, որ Ան միշտ հաւատարիմ է պահելու զայն:**

Արդարեւ իմ մտածումներս ձեր մտածումները չեն, եւ ձեր ճամբաները իմ ճամբաներս չեն: [Ես. 55. 8]

## ԱՐՅՈՒՆՔՆԵՐ ԵՒ ՅՈՅՍ

**Թ**է եւ Ծաղկազարդի Կիրակին էր, օր մը՝ նշելու Յիսուսի յաղթական մուտքը Երուսաղէմ, սակայն Մարի Էտուէրտի (Mary Edward) համար՝ այդ օրը դարձաւ խոր ցաւի պահ մը: Եկեղեցիի պաշտամունքէն ետք, երբ ինք եւ իր ամուսինը՝ Քարիմ (Kareem), ձեռք ձեռքի բռնած՝ կը քայլէին, պայթում մը եղաւ: Ռումբը՝ սպաննեց Քարիմը եւ վիրաւորեց Մարին՝ պատճառելով իր վիժումին:

Ապաքինումի ընթացքին, Մարին բարկացած զգաց՝ երբ յուզուած էր սուզով՝ ամուսինին եւ մանուկին համար: Բայց ձեռով մը՝ Աստուածաշունչ կարգալը, սկսաւ իր մէջ եղած պոռթկումի հրաբուխը՝ հանդարտեցնել: Երբ չէր հասկնար, թէ ինչո՞ւ Աստուած պիտի արտօնէր ա՛յս սարսափը, Եսայի 55. 9-ն օգնեց. «Որչափ երկինքը երկրէն բարձր է, այնչափ իմ ճամբաներս ձեր ճամբաներէն բարձր են»: Երբ Մարին սկսաւ հասկնալ, թէ Աստուած գթութիւն ցոյց կու տայ՝ նոյնիսկ երբ Ան անպատուուած է, Մարին զգաց թէ Աստուծոյ Հոգին՝ զինք կը սփոփէ:

Մարին խորհրդածեց Եսայի մարգարէին պատգամին մասին, ուղղուած՝ Աստուծոյ կորսուած ժողովուրդին: Երբ Աստուած զանոնք կը կանչէր իր մօտ վերադառնալու, կ'ուզէր նաեւ ընդարձակել անոնց հասկացողութիւնը իր ողորմած բնոյթին մասին: Ինչպէս երկինքը երկրէն «բարձր է», այդպէս ալ Աստուծոյ ճամբաները անոնց ճամբաներէն «բարձր են» (Հմ. 9): Նոյնպէ՛ս, Աստուած կը ցուցաբերէ սէր եւ շնորհք՝ աւելի, քան ինչ որ մենք կ'երեւակայենք:

Մարիին համար, խոր վիշտի մէջ ըլլալով, զարմանալի էր Աստուծոյ խաղաղութեան պարգեւը: Ան բացաւ իր սիրտը Յիսուսի մխիթարող սիրոյն. սէր մը, որ Տէրը յայտնեց այդ դէպքերուն մէջ, որոնք կը յիշատակենք Սուրբ Շաբթուան ընթացքին: Յիսուս այսօր ալ կը փափաքի տալ իր խաղաղութիւնը մեզի: Պէտք է միայն՝ Անոր նայիլ:

**Աղօթք** - Արարիչ Աստուած, Դուն զի՛ս կը սիրես: Եւ երբ մորմոքով ու կասկածներով կ'ապրիմ, Դուն կը մատակարարես յոյս եւ սէր: Ամէն: Ինչպէ՛ս Աստուծոյ սիրառատ բնութեան մասին խորհիլը՝ կ'օգնէ քեզի: Ինչպէ՛ս խաղաղութիւն գտած ես, Աստուածաշունչ կարողալով:



Մի՛ վախնա՛ք, կայնեց՛ք ու տեսե՛ք Տերոջ փրկութիւնը, որ այսօր պիտի իրագործէ ձեզի համար: [Ել. 14. 13]

## ԱՍՏՈՒԾՈՅ ՏԵՍԱԿԱՆԸ

Հատարն Թէյլըր (Hudson Taylor)՝ մտահոգուած էր: Ան Անգլիական ձգած էր՝ Քրիստոսի աւետարանը՝ Չինաստանի մէջ տարածելու համար՝ եւ ծառայութիւնը, թէեւ դժուար, լաւ ընթացած էր: Բայց 1865 թուականին, երբ մտածեց աւելի աւետարանիչներ ուղղարկել՝ երկրին աւելի վտանգաւոր շրջանի մը մէջ՝ առանց պաշտպանութեան, ան զգաց «ներքին խոր պայքար»: Աղօթքով՝ Աստուծոյ հետ պայքարելէ ետք, գրեց. «Տէրը յաղթեց իմ անհաւատութեանս, եւ ես ինքզինքս ամբողջովին Աստուծոյ յանձնեցի՝ գիտակցելով, որ ամբողջ պատասխանատուութիւնը եւ հետեւանքները իրեն կը պատկանին»:

Մովսէս Աստուծոյ կ'ոչ մը ստացաւ, որ բնականաբար գինք ալ մտահոգեց: Երբ ան կ'առաջնորդէր Իսրայէլացիները՝ Եգիպտոսէն դուրս, Աստուած ըսաւ. «Խօսէ՛ Իսրայէլի որդիներուն, որ դառնան ու Փիայիրոթի առջեւ՝ Մագդոզի եւ ծովուն մէջտեղ բանակին» (Ել. 14. 2): Այս կը նշանակէր, որ իրենք թակարդուած էին Փարաոնի եւ անծայրածիր ծովուն միջեւ: Իսրայէլացիները սարսափեցան, երբ «Փարաոն մօտեցաւ» (Հմ. 10): Խուճապի մատնուած՝ անոնք Մովսէսին ըսին. «Աւելի լաւ է մեզի Եգիպտացիներուն ծառայել, քան անապատին մէջ մեռնիլ» (Հմ. 12): Բայց Մովսէս պատասխանեց. «Մի՛ վախնաք» (Հմ. 13): Եւ իրաւացի էր: Աստուած փրկութիւն եւ յաղթանակ պարգեւեց իր ժողովուրդին, երբ անոնք հանգչեցան իր մէջ (Հմ. 15-31):

Ինչպէ՛ս երբեմն, այսօր ալ՝ մենք շատ անգամ չենք հասկնար, թէ Աստուած ի՛նչ կը կատարէ մեր կեանքին մէջ, որովհետեւ չունինք իր տեսլականը: Նման ժամանակի մը մէջ՝ Հատարն Թէյլըր գրեց. «Իբրեւ իր ծառան՝ իմ պարտքս էր հնազանդիլ եւ իրեն հետեւիլ»: Մենք ալ կրնանք հանգչիլ Աստուծոյ տեսլականին եւ ծրագիրներուն մէջ:

**Աղօթք** - Սիրելի Աստուած, օրհնէ՛ զիս, որ հանգչիմ Քու կատարեալ ծրագիրներուդ մէջ՝ իմ կեանքիս համար: Ամէն: **Ինչո՞ւ կարելոր է Աստուծոյ ծրագիրներուն յանձուիլ: Ինչպե՞ս կրնաս հանգչիլ իր մէջ:**

## ՑԱՆԿ ՆԻԻԹՈՑ

Աղօթք.....	Յուն. 5, Փետ. 16, 26, 28
Աշակերտություն.....	Փետ. 27
Ապաշխարություն.....	Փետ. 18, Մարտ 11
Առատաձեռնություն.....	Փետ. 8, 11, 19, Մարտ 2, 6, 26
Աստուածաշունչի Մեծ Պատմությունը.....	Յուն. 1, 8, 15, 22
Աստուածաշունչի Սերտողություն.....	Փետ. 25 Մարտ 14
Աստուծոյ Ընտանիքը.....	Մարտ 18
Աստուծոյ Հանդէպ Ակնածանք.....	Փետ. 25
Աստուծոյ Հետ Հաղորդակցություն.....	Յուն. 12
Աստուծոյ Նկարագիրը.....	Յուն 13, 23, 30, 31, Փետ. 8, 26, Մարտ 3, 6, 22, 28, 29, 31
Աստուծոյ Սերն ու Հոգատարությունը.....	Յուն 11, 14, 26, Փետ. 1, 14, 15, 17, 19, 22, Մարտ 14, 27, 28
Աստուծոյ Վստահիլ.....	Յուն. 10, Փետ. 4, Մարտ 24
Արդարություն.....	Յուն. 18, 19, 24
Աւետարանչություն.....	Յուն. 24, Փետ. 11, 17, Մարտ 1, 8, 12, 15, 17, 22
Բախում.....	Յուն. 7, Մարտ 7
Բժշկություն.....	Յուն. 27, 31, Մարտ 12, 19, 21, 29
Գութ.....	Մարտ 13
Երրորդություն.....	Մարտ 12
Իմաստություն.....	Մարտ 9
Խաղաղություն.....	Փետ. 12
Ծառայություն.....	Յուն. 3, 21, 28, Փետ. 7, 23, Մարտ 4, 9, 31
Հալածանք.....	Յուն. 17
Համայնք.....	Յուն. 3, 21, 30; Մարտ 7
Հանգիստ.....	Փետ. 5, Մարտ 31
Հաւատացեալներու Հետ Միություն.....	Յուն. 8, 22, Փետ. 27, Մարտ 26
Հաւատքի Պատմություններ.....	Մարտ 22
Հեզություն.....	Փետ. 2, 9, 16, 23

Հոգեկան Աճում.....	Յուն. 1, 13, Մարտ 5, 11, 19, 29, 31
Հոգեկան Հասունություն .....	Յուն. 1, 18
Հոգեկան Մարտ .....	Յուն. 15, Փետ. 13
Հոգեկան Պարզեւներ .....	Մարտ 12
Մատակարարություն.....	Յուն. 2, Փետ. 4,19, Մարտ 2, 9, 16, 23
Մարդկություն.....	Յուն. 4
Մարդոց Վրայ Ազդեցություն ....	Յուն. 18, Փետ. 15, Մարտ 8
Մեղք.....	Յուն. 2
Մտահոգություն.....	Փետ. 18
Յարաբերություններ .....	Փետ. 24, Մարտ 18
Յոյս.....	Յուն. 9, 27, 31, Փետ. 28, Մարտ 12,19, 20, 21, 29
Յուսահատություն .....	Մարտ 20
Ներել.....	Յուն. 16, 23, 24, Փետ. 16, Մարտ 11
Շնորհակալություն.....	Յուն. 11, 30
Ուրիշ Հաւատացեալներու Հետ Ապրիլ .....	Մարտ 7
Պաշտամունք.....	Յուն. 6, 22
Սէր.....	Յուն. 28, Փետ. 1, 8,15,19, Մարտ 13, 25, 27
Սուրբ Հոգի .....	Յուն. 21, 29, Փետ. 3
Վիշտ .....	Մարտ 10
Տառապանք.....	Յուն. 18, 27, 31, Փետ. 21, 28, Մարտ 5, 12, 13, 19, 21, 29
Փորձություն.....	Փետ. 13
Փրկություն .....	Յուն. 2, 9, 16, 23, Փետ. 5, 17
Քաջալերություն.....	Յուն. 5, Փետ. 28
Քրիստոս՝ Անձ/Գործ .....	Փետ. 1, 15, 24
Քրիստոս՝ Ծնունդ.....	Յուն. 6
Քրիստոս՝ Վերադարձ.....	Փետ. 6
Քրիստոսի Նման Ապրիլ .....	Յուն. 19, 25, Փետ. 27
Քրիստոսի Համար Ապրիլ .....	Յուն. 10,17, 20, 25, 29, Փետ. 6, 7, Մարտ 4
Քրիստոսի Հետ Միություն ....	Յուն. 8,22, Փետ. 27, Մարտ 26
Քրիստոսի Հետ Նոյնություն .....	Յուն. 18, 24, Փետ. 20, Մարտ 23,26

## ԿԱՐԵՒՈՐ ԱԶԴ

Եթէ կը ճանչնաք անձեր, որոնք պիտի փափաքին այս գրքոյկին յաջորդ թիւերը ունենալ կրնաք անոնց անունները ու հասցէները գրել վարի կտրօնին վրայ եւ դրկել հետեւեալ հասցէներէն մէկուն.–

Սփիւոքի հասցէ՝  
Armenian Missionary Association  
31 West Century Road  
Paramus, NJ 07652  
Tel. 201.265.2607 - E-mail: info@amaa.org

Հայաստան եւ Կովկասեան երկիրներ դիմել՝  
Հայ Աւետարանչական Ընկերակցութիւն  
Բաղրամեան Փողոց, Թիւ 18  
Երեւան, Հայաստան  
հեռ. (374-10) 54-35-76

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....

Name/Անուն.....

Address/Հասցէ.....

Tel./Հեռ.....